ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական
հիմնական դպրոցի համար

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2014

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.167.1:931(075)
ԳՄԴ 63.3(0)3գ72
Հ 202

Խմբագիր՝ ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

Հեղինակներ՝ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմագիտության թեկնածու, դոցենտ
(ներածություն, §§ 1–7, 9–17, 19–20, 23–27)

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(§§ 8, 18, 21–22)

Մեթոդական մասի հեղինակ՝ ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմաբան, մանկավարժ
(մեթոդական ապարատ, I–V բաժինների ամփոփումներ, ժամանակագրություն, բառարան)

Հ 202 Համաշխարհային պատմություն: Միջին դարեր: Դասագիրք 7–րդ դասարանի համար/ Գ. Հարությունյան, Ա. Նազարյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2014.— 160 էջ:

ՀՏԴ 373.167.1:931(075)
ԳՄԴ 63.3(0)3գ72

ISBN 978–9939–68–

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2014

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջնադարը՝ որպես պատմական դարաշրջան, ընդգրկում է Արևմտյան հռոմեական կայսրության անկման ժամանակներից (V դար) մինչև Աշխարհագրական մեծ հայտնագործություններն ու Նոր Եվրոպայի ծնունդն ընկած ժամանակաշրջանը (մինչև XVII դարի սկզբները):

Մարդկային հասարակությունը միջնադարից ժառանգեց քրիստոնեությունը, իսլամը և բուդդայականությունը: Այդ շրջանում ձևավորվեցին և զարգացան այն լեզուները, որոնցով այժմ խոսում է աշխարհի ժողովուրդների մեծ մասը: Կազմավորվեցին և զարգացում ապրեցին ներկայիս շատ պետություններ:

Եվրոպայի մեծ մասը միջնադար մուտք գործեց հետամնաց վիճակում, իսկ միջնադարի վերջում վերելք ապրեց: Սա եվրոպական երկրներին հնարավորություն ընձեռեց իրենց ռազմատեխնիկական գերազանցության շնորհիվ ձևավորելու գաղութատիրական համակարգ:

Այս դասագրքում միջնադարի պատմությունը ներկայացված է հետևյալ շրջափուլերով:

Վաղ միջնադար

Հին աշխարհում միմյանց հարևանությամբ ապրում էին զարգացած, պետականորեն կազմակերպված ժողովուրդներ և դեռևս տոհմատիրական փուլում գտնվող ցեղեր: Այդ երկու հասարակարգերի բախումից և համադրումից էլ սկզբնավորվեց միջնադարյան հասարակությունը:

Սովորաբար միջնադարի պատմության սկիզբ է համարվում ժողովուրդների մեծ գաղթը: Արևմտյան Հռոմեական կայսրությունը կործանվեց և առաջացան բարբարոսական թագավորություններ: Դրանց կազմավորումը հանգեցրեց ավատատիրական հասարակության ձևավորմանը:

Միջնադարը ծաղկման ժամանակաշրջանում

Ձևավորված ավատատիրական հասարակության բնակչությունը բաժանվեց երեք խմբի՝ ավատատերեր (ովքեր կռվում են), գյուղացիներ (ովքեր վարուցանք են անում) և հոգևորականներ (ովքեր աղոթում են): Ամենաբարձր դասը հոգևորականությունն էր:

Այս ժամանակաշրջանում արհեստագործությունն անջատվեց գյուղատնտեսությունից, առաջացան քաղաքներ: Սկսվեց որոշ ազգերի ձևավորման գործընթացը:

Միջնադարի մայրամուտը

XIV դարը Եվրոպայի համար ճգնաժամային էր: Բռնկվեց Հարյուրամյա պատերազմը, որը ցնցեց Եվրոպան: XIV դարի կեսերին Եվրոպայում ավերածություններ գործեց «սև մահը»՝ ժանտախտի համաճարակը: Գյուղացիական հզոր ապստամբություններ բռնկվեցին Իտալիայում, Ֆրանսիայում և Անգլիայում: XV դ. կեսին օսմանյան թուրքերի հարվածների տակ կործանվեց Բյուզանդական կայսրությունը:

Նոր Եվրոպայի ծնունդը

Անկում ապրող միջնադարյան հասարակության ընդերքում աստիճանաբար ծնունդ էին առնում նոր՝ կապիտալիստական հասարակության սաղմերը: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները, ազգային պետությունների կազմավորումը, Վերածնունդը, Ռեֆորմացիան և գիտական մտքի վերելքը նախադրյալներ ստեղծեցին Եվրոպայում նոր՝ արդյունաբերական հասարակության առաջացման համար:

ԲԱԺԻՆ 1 ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ

§1. ՊԱՅՔԱՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԵԾ ԳԱՂԹԸ

Հին գերմանական ցեղի ընպանիք

Համաշխարհային պատմության մեջ IV–VII դարերն անվանում են **ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջան:** Մինչև մեծ գաղթը Եվրոպայում կար մեկ պետություն՝ Հռոմեական կայսրությունը: Մեծ գաղթի հետևանքով առաջացան նոր պետություններ:

Հռոմեական կայսրության սահմանամերձ շրջաններում բնակվող ցեղերը վարում էին պարզունակ տնտեսություն: Աճող բնակչության պահանջները բավարարելու համար նրանք անընդհատ տեղաշարժվում և նոր տարածքներ էին յուրացնում: Եվրոպայի և Ասիայի բնակչության տեղաշարժի վրա ազդեց նաև կլիմայի սառեցումը, որը սկսվել էր դեռևս II դարից: Մարդիկ ստիպված էին փնտրել նոր բնակավայրեր:

Այս տեղաշարժերում մեծ դեր էին խաղում **գերմանական** և **թյուրքական ցեղերը,** իսկ հետագայում՝ **սլավոնները** և այլ ցեղեր:

Հոնների արշավանքների պատճառով սկսվեց Ժողովուրդների մեծ գաղթը

Առաջինը տեղաշարժվեցին գերմանական **գոթական ցեղերը:** Նրանք հաստատվեցին **Դանուբ** գետից մինչև **Դնեպր** գետն ընկած շրջաններում: Շուտով բաժանվեցին երկու մեծ ցեղային միությունների՝ **արևմտյան (վեստ)** և **արևելյան (օստ)** գոթեր:

IV դարում Եվրոպա ներխուժեցին թյուրքալեզու **հոները:** Նրանք դուրս մղեցին Սև

ծովի հյուսիսային շրջաններում բնակվող արևելյան գոթերին: Արևմտյան գոթերը տեղափոխվեցին Հռոմեական կայսրության տարածք: Այստեղ նրանք սահմանապահ ծառայություն էին կատարում, իսկ կայսրությունը պարտավորվել էր նրանց ապահովել զենքով և սննդամթերքով:

Ժողովուրդների մեծ գաղթը

ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԸ ԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Բարբարոսների ներխուժումը Հռոմ. XV դարի մանրանկար

Հռոմեական կայսրությունը, ինչպես գիտեք, **395 թ.** բաժանվել էր երկու մասի: Ստեղծվել էր երկու պետություն՝ Արևմտյան և Արևելյան հռոմեական կայսրություններ: V դարում բարբարոսական ցեղերի տեղաշարժերը սպառնալիք դարձան Արևմտյան Հռոմեական կայսրության գոյության համար: **410 թ. արևմտյան գոթերը գրավեցին Հռոմ քաղաքը:** Շուտով Հարավային և Հարավարևմտյան Գալլիայում ստեղծվեց **Արևմտագոթական թագավորությունը:** Գերմանական ցեղերից վանդալներն անցան Ջիբրալթարի նեղուցը և Հյուսիսային Աֆրիկայում ստեղծեցին Վանդալական թագավորությունը:

451 թ. հռոմեական բանակը գերմանական ցեղերի հետ միասին պարտության մատնեց հոներին: Այս ճակատամարտը, որ հայտնի է **«Ժողովուրդների ճակատամարտ»** անվամբ, համաշխարհային պատմության կարևորագույն իրադարձություններից է: Դրա շնորհիվ Արևմուտքն ազատվեց քոչվոր հոներից: Սա կայսրության վերջին ռազմական հաջողությունն էր: Պետության գործերն արդեն տնօրինում էին ոչ թե կայսրերը, այլ բանակի բարբարոս հրամանատարները:

Այսպիսով՝ բարբարոսները գրավեցին Արևմտահռոմեական կայսրության գրեթե բոլոր տարածքները, բացի Իտալիայից ու Հյուսիսային Գալլիայից:

Ֆրանկների արքա Քլոդվիգ

ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Կայսերական բանակը հիմնականում կազմված էր վարձկան գերմանացիներից: Նրանք իրենց ծառայության դիմաց հողեր պահանջեցին, սակայն մերժում ստացան: Օգտվելով զինվորների դժգոհությունից՝ նրանց հրամանատար **Օդոակրը 476 թ.** տապալեց Արևմտյան կայսրության վերջին կայսրին: Արևմտյան կայսրությունը կործանվեց: Շուտով Իտալիա ներխուժեցին արևելյան գոթերը: Օդոակրը սպանվեց, և Իտալիայում ստեղծվեց **Արևելագոթական թագավորությունը:**

V դարի վերջին **ֆրանկների** առաջնորդ **Քլոդվիգը** միավորեց ֆրանկական ցեղերին: Նվաճելով Հյուսիսային Գալլիան՝ նա **486 թ.** ստեղծեց **Ֆրանկական թագավորությունը:** Քլոդվիգը (486–511 թթ.) մկրտվեց և քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն:

Այսպիսով՝ Արևմտյան կայսրության ժառանգության համար պայքարն ավարտվեց բարբարոսների հաղթանակով: Ժողովուրդների մեծ գաղթի հետևանքով կործանվեց Արևմտահռոմեական կայսրությունը: Բարբարոսները կայսրության փլատակների վրա ստեղծեցին նոր պետություններ: Կործանվեց անտիկ հասարակությունը, և սկսեց ձևավորվել նոր՝ միջնադարյան հասարակությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է սկսվել Ժողովուրդների մեծ գաղթը: Քոչվորների ո՞ր ցեղերն էին մասնակցում տեղաշարժերին:
2. Որտե՞ղ էին ապրում գոթերը: Ի՞նչ ցեղային միությունների էին բաժանված նրանք:
3. Վերհիշե՛ք, թե երբ է Հռոմեական կայսրությունը բաժանվել երկու մասի:
4. 451 թ. ի՞նչ հայտնի ճակատամարտ է տեղի ունեցել: Ի՞նչ նշանակություն է ունեցել այն Եվրոպայի պատմության մեջ:
5. Գերմանացի վարձկանների հրամանատար Օդոակրը ո՞ր թվականին տապալեց Արևմտյան հռոմեական կայսրության վերջին կայսրին:
6. Թվարկե՛ք Արևմտյան հռոմեական կայսրության տարածքում կազմավորված բարբարոսական թագավորությունները (օգտվե՛ք նաև քարտեզից):

Քննարկման հարցեր

Որո՞նք են Ժողովուրդների մեծ գաղթի պատճառները: Ի՞նչ դեր է խաղացել այն համաշխարհային պատմության մեջ:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Ժողովուրդների մեծ գաղթ, հոներ, գոթեր, Գալլիա, Արևելագոթական թագավորություն, «Ժողովուրդների ճակատամարտ», Օդոակր, ֆրանկներ, Քլոդվիգ, Ֆրանկական թագավորություն

§2. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Դուք գիտեք, որ **381 թ. Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովում** քրիստոնեությունը հռչակվեց Հռոմեական կայսրության պետական կրոն:

Քրիստոնեությանը հաջողվեց ստեղծել ամուր եկեղեցական կառույց: Եկեղեցու տարածքային (թեմական) բաժանման ստորին միավորը գյուղն էր, ապա՝ գավառը: Կային նաև ավելի խոշոր միավորներ՝ մետրոպոլիտություններ, արքեպիսկոպոսություններ, պատրիարքություններ: Երկարատև պայքարից հետո տիեզերական եկեղեցու կառավարման գործում ղեկավար դեր ստանձնեցին **Հռոմի** և **Կոստանդնուպոլսի պատրիարքությունները:**

Կոնստանդինոս Մեծ
Կոստանդնուպոլիս,
Ս. Սոֆիայի տաճար

Նիկեայում քրիստոնեական եկեղեցու քահանաների ժողով գումարեց՝ լուծելու եկեղեցում եղած տարաձայնությունները:

ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Քրիստոնեության ներսում կային գաղափարական խոր տարաձայնություններ: Եկեղեցին պայքարում էր բոլոր նրանց դեմ, ովքեր փորձում էին շեղվել ընդունված կանոններից: Եկեղեցին նրանց անվանում էր **հերետիկոսներ** (աղանդավորներ):

IV դ. սկզբին եկեղեցու միասնության համար մեծ վտանգ էր ներկայացնում **արիոսականությունը:** Դրա հիմնադիրը Ալեքսանդրիա քաղաքի Մայր տաճարի քահանա **Արիոսն** էր: Նա դեմ էր Երրորդության ուսմունքին: Այս ուսմունքի համաձայն՝ աստվա-

ծային Երրորդությունը մեկն է և բաղկացած է երեք անձից՝ **Հայր Աստված, Որդի Աստված, Սուրբ Հոգի Աստված:** Նրանք հավասար են և անբաժան: Սակայն Արիոսը քարոզում էր, որ Որդի Աստվածը (Հիսուս Քրիստոս) չի կարող հավասար լինել Հայր Աստծուն և նրանից ցածր է կանգնած: **325 թ. Նիկեայի** առաջին տիեզերական ժողովը դատապարտեց Արիոսի ուսմունքը: Ժողովում հաստատվեց քրիստոնեական եկեղեցու **Հավատո հանգանակը՝** դավանանքի կանոնները:

Հիսուս Քրիստոսի մասին I–IV դարերում

Արիոսի ուսմունքը

Արիոսը պնդում էր, որ Աստծո որդին (Քրիստոսը) նույնական չէ Հայր Աստծո հետ: Որդին ստեղծվել է հոր կողմից և, հետևաբար, հոր պես հավերժական չէ: Սա նշանակում է, որ Արիոսը հերքում էր եկեղեցու գլխավոր դոգմաներից (համադրույթներից) մեկը՝ Հայր Աստծո և Որդի Աստծո միասնությունը: IV դարի վերջին արիոսականությունը արգելվեց Հռոմեական կայսրությունում: Սակայն արիոսականությունը գոյատևեց գերմանական ժողովուրդների մոտ: Արիոսականությունն ընդունեցին արևելյան և արևմտյան գոթերը, վանդալները, բուրգունդները, լանգոբարդները և մյուսները: Նրանց ստեղծած պետություններում արիոսականությունը գերիշխող դավանանք էր:

Նիկեայի առաջին տիեզերական ժողովը դատապարտում է Արիոսի ուսմունքը: Ներքևում Արիոս քահանան է:

ստեղծվել էր հսկայական գրականություն: Սակայն նրա երկրային կյանքի մասին պատմող դրվագները հաճախ հակասում էին միմյանց, և դրանցից ընտրություն կատարելու անհրաժեշտություն էր առաջացել:

Կարթագենի եկեղեցական ժողովը (419 թ.) հաստատեց ընտրված գրականության ցանկը: Ընտրվեցին չորս ավետարաններ, որտեղ նկարագրված էր Հիսուս Քրիստոսի երկրային կյանքը: Ընտրվեցին նաև Հիսուսի առաքյալների գրած 21 թղթերը, որտեղ պատմվում էր քրիստոնեության տարածման մասին: Այս բոլորը միասին ստացան **Նոր Կտակարան** անվանումը: Դրան միացվեց նաև հրեական Սուրբ գրքերից մեկը՝ **Հին Կտակարանը:** Հին և Նոր Կտակարանները միասին կոչվեցին **Աստվածաշունչ**:

Ս. Պետրոսի աթոռը

Պատրաստվել է առաքյալի մահից մի քանի դար հետո, զարդարված է փղոսկրի վրա փորագրված կենդանիների և մարդկանց պատկերներով:

ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻ ԱԹՈՌԸ

Քրիստոնեության տարածմանը զուգահեռ ձևավորվում էին նաև համաքրիստոնեական կառույցներ: Դրանցից կարևոր նշանակություն ունեին տիեզերական ժողովները և առաքյալների հիմնադրած եկեղեցական աթոռները:

Հավատքի հետ կապված կարևոր կանոնները մշակելու համար հրավիրում էին տիեզերական՝ ընդհանուր ժողովներ:

Տարաձայնությունների դեպքում դիմում էին առաքելական ծագում ունեցող աթոռներին: Ըստ ավանդույթի՝ այդ աթոռները հիմնադրել էին Հիսուսի աշակերտները, ուստի նրանց հաջորդները քրիստոնեական հա-

վատքի ճշմարտությունը և մաքրությունը պահպանողներն էին:

Հռոմի աթոռը հիմնադրել էր Հիսուսի սիրելի աշակերտ **Պետրոս առաքյալը:** Այն հավակնում էր գլխավորը լինելու: Սակայն Արևելքում Հռոմի աթոռի առաջնությունը չընդունվեց: Նրան իրենց հավասար էին համարում Ալեքսանդրիան, Անտիոքը, Երուսաղեմը և Կոստանդնուպոլիսը:

Քրիստոնեական եկեղեցում բարձր դիրք ձեռք բերելու համար Հռոմի եպիսկոպոսները սկսեցին իրենց անվանել **պապ,** այսինքն՝ տիեզերական (համաշխարհային) եկեղեցու ղեկավար:

ՊԱՏՐԻԱՐՔ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԵՏՐՈՊՈԼԻՏ



ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵԿԵՂԵՑԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Արևելյան եկեղեցին ներառում էր Բյուզանդիայի և քրիստոնեություն ընդունած արևելյան ժողովուրդների եկեղեցիները: Արևելյան եկեղեցու ամենախոշոր միավորը հունական եկեղեցին էր: Այն փորձում էր իրեն ենթարկել նաև հայկական, ասորական և եգիպտական եկեղեցիները: Հունական եկեղեցին ղեկավարում էր **Կոստանդնուպոլսի պատրիարքը:** Նա յուրացրել էր «տիեզերական պատրիարք» անվանումը:

Արևելքում յուրաքանչյուր եկեղեցի ուներ սեփական լեզվով գրականություն, որով էլ կատարվում էին արարողությունները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Քրիստոնեությունը ե՞րբ է պետական կրոն հռչակվել Հռոմեական կայսրությունում: Իսկ Հայաստանո՞ւմ:
2. Բացատրե՛ք «հերետիկոս» բառի իմաստը: Ինչո՞վ էր վտանգավոր արիոսականությունը:
3. Ի՞նչ է Հավատո հանգանակը և ե՞րբ է ընդունվել:
4. Եկեղեցական ո՞ր ժողովի կողմից է հաստատվել Աստվածաշունչ մատյանում ընդգրկված գրքերի ցանկը:
5. Թվարկե՛ք քրիստոնեական եկեղեցու առաքելական աթոռներ:
6. Ո՞վ է հիմնադրել Հռոմի առաքելական աթոռը:
7. Ի՞նչ է նշանակում «պապ»:
8. Ո՞վ է ղեկավարում հունական եկեղեցին:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

հերետիկոս (աղանդավոր), արիոսականություն, Արիոս, Նիկեայի առաջին տիեզերական ժողով, Կոստանդնուպոլսի տիեզերական ժողով, Սուրբ Երրորդություն, Հավատո հանգանակ, Կարթագենի եկեղեցական ժողով, Նոր կտակարան, Հին կտակարան, Պետրոս առաքյալ, պապ

§3. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՈՍԿԵԴԱՐԸ

ՎԵՐՋԻՆ ՀՌՈՄԵԱՅԻ ԿԱՅՍՐԸ

Հռոմի անկումից հետո Բյուզանդիան իրեն համարում էր նախկին միասնական կայսրության ժառանգորդը: Իր գոյության ընթացքում Բյուզանդիան պաշտոնապես կոչվել է **Արևելյան հռոմեական կայսրություն:** Բյուզանդիա անվանումը ծագել է Բոսֆորի նեղուցի ափին գտնվող՝ նախկին մեգարական գաղութ **Բյուզանդիոնի** անունից, Այստեղ կառուցվել էր Կոստանդնուպոլիս մայրաքաղաքը:

Կայսրության տարածքում ստեղծված բարբարոսական պետությունների թագավորները, որպես ավանդույթի շարունակություն, ճանաչեցին բյուզանդական կայսեր գերագահությունը: Նրանք կառավարում էին վերջինիս անունից: Բայց իրականում դրանք անկախ պետություններ էին: Բյուզանդական կայսր **Հուստինիանոս I–ը (527–565)** որոշեց վերականգնել միասնական Հռոմեական կայսրությունը:

Հուստինիանոսը ծնվել էր **Մակեդոնիայում՝** չքավոր գյուղացու ընտանիքում: Նրա հորեղբայրը զինվորից հասել էր զորավարի աստիճանի, ապա դարձել Բյուզանդիայի կայսր: Հորեղբոր մահից հետո նա դարձավ կայսր: Կրթված և աշխատասեր կայսրը, որ «երբեք չէր քնում», հիանալի քաղաքագետ էր, ճկուն դիվանագետ և տաղանդավոր զորավար:

Մտավոր կարողություններով, իշխանատենչությամբ և դաժանությամբ Հուստինիա-

Հուստինիանոս I կայսրը
Խճանկար, Ս. Վիտալե եկեղեցի, Հռավեննա

նոսին չէր զիջում նրա կինը՝ կայսրուհի **Թեոդորան:** Երիտասարդ տարիներին նա եղել էր շրջիկ պարուհի: Հրապուրված Թեոդորայի աննկարագրելի գեղեցկությամբ և սուր խելքով՝ Հուստինիանոսն ամուսնացել էր նրա հետ: Թեոդորան շատ էր հետաքրքրվում պետության և եկեղեցու գործերով, մասնակցում երկրի կառավարմանը:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կայսեր իշխանությունը ժառանգական չէր: Նրան ընտրում էին Ծերակույտը և զորքը: **Կայսրը կարող էր լինել ցանկացած ազգության և հասարակական խմբի ներկայացուցիչ:** Նա ուներ և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր իշխանություն: Կայսեր իշխանությունը սրբացված էր:

Կայսրին էր պատկանում օրենսդիր, դատական և ռազմական բարձրագույն իշխանությունը: Երկրի կառավարման գործում մեծ դեր էին խաղում **Ծերակույտը** և կայսեր կից **սրբազան խորհուրդը:**

Հուստինիանոսն աշխատում էր կայսրությունը կառավարել միասնական օրենքներով: Նա հրամայեց հավաքել և կարգավորել հռոմեական կայսրերի հրապարակած օրենքները: Այդպես 534 թ. կազմվեց **«Քաղաքացիական իրավունքի հավաքածուն»:**

ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Կայսրությունը վերականգնելու նպատակով Հուստինիանոս I–ը նախ գրավեց Հյուսիսային Աֆրիկայում գտնվող վանդալների թագավորությունը: **555 թ.** բյուզանդական

զորքը հայազգի **Նարսես** զորավարի գլխավորությամբ գրավեց Իտալիան: Բյուզանդացիները նվաճեցին նաև Իսպանիայի հարավ–արևելքը: Միջերկրական ծովն անցավ Բյուզանդիայի վերահսկողության տակ:

Հուստինիանոսը գրեթե վերականգնել էր Հռոմեական կայսրության սահմանները: Պատահական չէ, որ նրան անվանել են **«վերջին հռոմեացի կայսր»:** Սակայն նրա մահից երեք տարի անց գերմանացի լանգոբարդները նվաճեցին Իտալիայի մեծ մասը:

Հուստինիանոսի օրոք կուտակված վիթխարի հարստությունները հիմնականում

«Սողոմոն, ես հաղթեցի քեզ». այսպիսի բացականչությամբ Հուստինիանոսն արտահայտեց իր ապրումները Կոստանդնուպոլսում Սուրբ Սոֆիայի տաճարի բացման հանդեսին: Այս վիթխարի կառույցը համաշխարհային ճարտարապետության անգերազանցելի կոթողներից է: X դարում գմբեթը ավերվեց երկրաշարժից: Այն վերականգնեց հայ մեծանուն ճարտարապետ Տրդատը: Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո թուրքերը Ս. Սոֆիայի տաճարը դարձրել են մզկիթ:

Բյուզանդական կայսրությունը VI–XI դարերում

ծախսվում էին տաճարների, եկեղեցիների, պալատների և ամրոցների կառուցման վրա: Այս կառույցները, մասնավորապես Կոստանդնուպոլսի **Ս. Սոֆիայի տաճարը (537 թ.),** խորհրդանշում էին կայսրության վեհությունն ու փառքը: Սակայն կայսրության հզորությունը կարճ տևեց:

VII դարում պատմության թատերաբեմ իջած արաբները հսկայական տարածքներ գրավեցին կայսրությունից: Մինչև VIII դարի սկիզբը կայսրության տարածքը կրճատվեց չորս անգամ: Բյուզանդական կայսրությունն այլևս իր նախկին սահմանները չվերականգնեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք, թե երբ է կազմավորվել Բյուզանդական կայսրությունը: Որտեղի՞ց է առաջացել Բյուզանդիա անունը:
2. Ովքե՞ր էին ընտրում բյուզանդական կայսրին:
3. Որո՞նք էին կայսերական իշխանության առանձնահատկությունները Բյուզանդիայում:
4. Ե՞րբ է կազմվել «Քաղաքացիական իրավունքի հավաքածուն»:
5. Ի՞նչ նպատակներ էր հետապնդում Հուստինիանոս I–ը: Ի՞նչ տարածքներ նվաճեց նա:
6. Հայ նշանավոր ո՞ր ճարտարապետն է վերականգնել Ս. Սոֆիայի տաճարի գմբեթը:
7. Ներկայացրե՛ք Հուստինիանոս I–ի պատմական կերպարը:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Բյուզանդիոն, Հուստինիանոս I, Մակեդոնիա, Թեոդորա, Նարսես, «Քաղաքացիական իրավունքի հավաքածու», «Վերջին հռոմեացի կայսր», Ս. Սոֆիայի տաճար

§4. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՎԵՐԵԼՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ (ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ) ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Հուստինիանոսից հետո Բյուզանդիան ընկավ դժվարին կացության մեջ: Արաբները նվաճեցին Ասորիքը, Պաղեստինը և Փոքր Ասիայի արևելքը: Սլավոնները հաստատվել էին Բալկանյան թերակղզու հյուսիսային շրջաններում:

Բյուզանդիան կրկին հզորացավ **Հայկական (Մակեդոնական)** արքայատոհմի կառավարման օրոք **(867–1056):**

Նոր արքայատոհմի հիմնադիր **Վասիլ (Բարսեղ) I–ը** ազգությամբ հայ էր: Նա իրեն համարում էր հայ Արշակունիների ժառանգ: Բարսեղը ծնվել էր Մակեդոնիայում՝ չքավոր գյուղացու ընտանիքում: Մանուկ հասակում գերվել էր բուլղարների կողմից և երկար ժա-

Բյուզանդիան IX դարում

Կոստանդին VII Ծիրանածին

Կոստանդինը (905–959) հենվում էր մայրաքաղաքի ազնվականության վրա, պայքարում էր պաշտոնյաների կաշառակերության և կամայականությունների դեմ: Գահակալել է 913–920 և 944–959 թթ.: Կայսրը հայտնի է որպես հանրագիտարանային բնույթի ժողովածուների հրատարակության նախաձեռնող: Նա ինքն էլ գրել է աշխատություններ՝ «Պետության կառավարման մասին», «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին» և այլն:

մանակ ապրել գերության մեջ: Վերադառնալով Բյուզանդիա՝ նա ծառայության է անցնում կայսերական արքունիքում՝ որպես ախոռապան: Շուտով Բարսեղը դառնում է համակառավարիչ և **Միքայել III** կայսեր հետ սկսում է կառավարել երկիրը: Այնուհետև տապալելով նրան՝ դառնում է կայսր:

Վասիլ I–ը (867–886) մտցրեց գահաժառանգման նոր կարգ: Այժմ միայն իշխող արքայատոհմի ներկայացուցիչները կարող էին կայսր դառնալ: Նրա օրոք Բյուզանդիան վերականգնեց իր տիրապետությունը Միջերկրական և Սև ծովերի ավազաններում:

Վասիլ I–ի օրոք լրացվեց Հուստինիանոսի կազմած օրենսգիրքը: Նրա հաջորդ **Լևոն VI Իմաստասերը** կազմեց օրենքների նոր ժողովածու, որը բաղկացած էր 60 գրքերից:

Հայկական արքայատոհմի կառավարման տարիներին Բյուզանդիան վերստին հզորացավ: Կայսրությանը միացվեցին Բուլղարական թագավորությունը, Ասորիքը, Հյուսիսային Միջագետքի և Հայաստանի զգալի մասը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Կայսրության հզորացումը պայմաններ ստեղծեց նաև բյուզանդական մշակույթի վերելքի համար: Հայկական արքայատոհմի կառավարման ժամանակաշրջանը սովորաբար անվանում են **Վերածննդի դարաշրջան:**

Մշակույթի ու գիտության հովանավոր էր **Կոստանդին VII Ծիրանածին** կայսրը: Նա մի շարք գիտական աշխատությունների հեղինակ է: Դրանք արժեքավոր տեղեկություններ են պարունակում կայսրության կառավարման կարգի վերաբերյալ: Կայսեր երկե-

րում հետաքրքիր տեղեկություններ կան Բյուզանդիայի պատմության, ինչպես նաև հարևան ժողովուրդների, մասնավորապես հայերի մասին:

Արաբների դեմ մղած պայքարի ընթացքում ստեղծվեց բյուզանդական էպոսը՝ «Ասք Դիգենիս Ակրիտասի մասին»:

IX դ. Կոստանդնուպոլսում բացվել էր բարձրագույն դպրոց: Աստվածաբանությունից բացի, այնտեղ դասավանդում էին փիլիսոփայություն, ճարտասանություն, աստղաբաշխություն, երկրաչափություն:

1045 թ. Կոստանդնուպոլսում բացվեց համալսարան, որն ուներ իրավաբանության և փիլիսոփայության բաժիններ:

Բյուզանդական արքունիքի մասին

«Կոստանդնուպոլսում կայսերական պալատում կա հրաշալի շքեղության և գեղեցկության մի դահլիճ: Կայսեր գահի առջև կանգնած է ոսկեզօծ պղնձե ծառ, որի ճյուղերի վրա նստած են բրոնզե տարբեր թռչուններ: Թռչուններից յուրաքանչյուրն իրեն հատուկ ձայն է արձակում: Կայսեր նստատեղը այնպիսի հմտությամբ է պատրաստված, որ սկզբում այն թվում է ցածր՝ գրեթե հատակի մակարդակի, հետո՝ ավելի բարձր և վերջապես՝ օդից կախված: Վիթխարի գահը որպես պահապաններ բոլորում են ոսկեզօծ առյուծները, որոնք իրենց պոչերով կատաղորեն հարվածում են հատակին՝ բացելով երախները, շարժում են լեզուները և ուժեղ մռնչում: Այն բանից հետո, երբ ես, ըստ սովորույթի, երրորդ անգամ ծնկի իջա կայսեր առջև՝ ողջունելով նրան, և գլուխս բարձրացրի, ապա տեսա կայսերը բացարձակապես նոր հագուստով, համարյա դահլիճի առաստաղի մոտ»:

X դարում Բյուզանդիա այցելած գերմանացու գրառումներից

Բյուզանդական ժամանակաշրջանի արվեստի նմուշներից. Խճանկար, V դար

ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՐՈՀՆԵՐԻ ԹԻՐԱԽ

XI դ. երկրորդ կեսին Բյուզանդիան կրկին հայտնվեց դժվարին վիճակում: **Մանազկերտ քաղաքի մոտ 1071 թ.** բյուզանդական զորքը ծանր պարտություն կրեց սելջուկներից: Կայսր **Ռոմանոս IV Դիոգենեսը** գերի ընկավ: Շարժվելով արևմուտք՝ Փոքր Ասիայում սելջուկները ստեղծեցին իրենց պետությունը՝ **Իկոնիայի սուլթանությունը:**

Կայսրության գոյության համար մեծ սպառնալիք էին նաև **պեչենեգները,** որոնք ասպատակում էին Բալկանյան թերակղզին: Սելջուկները կայսրության մայրաքաղաքին մոտենում էին ասիական, իսկ պեչենեգները՝ եվրոպական կողմից:

Մանազկերտի ճակատամարտը

Այս ծանր իրավիճակում գահն անցավ **Կոմնենոսների** արքայատոհմին: Կոմնենոսները մի շարք բարեփոխումներ անցկացրին կայսրությունը կործանումից փրկելու համար: Նրանց հաջողվեց երկարաձգել կայսրության գոյությունը, սակայն չկարողացան ամրապնդել կայսրությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ տարածքներ կորցրեց Բյուզանդիան արաբների դեմ մղվող պատերազմների հետևանքով:
2. Ո՞վ էր Հայկական (Մակեդոնական) արքայատոհմի հիմնադիրը: Ինչպե՞ս նա հասավ կայսերական աստիճանի:
3. Փաստերով հիմնավորե՛ք, որ Հայկական արքայատոհմի օրոք Բյուզանդիան կրկին հզորացել էր:
4. Մշակութային վերածնունդը Բյուզանդիայում ի՞նչ արդյունքներ տվեց:
5. Ինչո՞ւ Բյուզանդական կայսրությունը XI դարի երկրորդ կեսին թուլացավ:
6. Ե՞րբ է տեղի ունեցել Մանազկերտի ճակատամարտը: Ինչ հետևանքներ ունեցավ այն:

Գործնական աշխատանք

Տվե՛ք Հուստինիանոս I և Վասիլ (Բարսեղ) I կայսրերի համեմատական բնութագիրը «Տրամագիր» վարժության միջոցով:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Հայկական (Մակեդոնական) արքայատոհմ, Միքայել III, Վասիլ (Բարսեղ) I, Լևոն VI Իմաստասեր, գահաժառանգման նոր կարգ, Վերածննդի դարաշրջան, Կոստանդին VII Ծիրանածին, Կոստանդնուպոլսի համալսարան, 1071 թ. Մանազկերտի ճակատամարտ, Ռոմանոս IV Դիոգենես, Կոմնենոսների արքայատոհմ, Իկոնիայի սուլթանություն, պեչենեգներ

§5. ԿԱՐՈԼԻՆԳՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

ԾՈՒՅԼ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

Հյուսիսային Գալլիայում, ինչպես գիտեք, կազմավորվել էր Ֆրանկական թագավորությունը: Ֆրանկների առաջին թագավոր **Քլոդվիգի** հրամանով լատիներեն գրի առնվեցին ֆրանկների սովորույթները և իրավական նորմերը: Կազմվեց օրենքների ժողովածու, որն ստացավ **«Սալիական դատաստանագիրք»** անվանումը:

Երկիրը կառավարող **Մերովինգների արքայատոհմը** շուտով սկսեց թուլանալ: Մերովինգները թեև պահպանում էին թագավորական տիտղոսը, բայց իշխանություն չունեին: Այդ պատճառով նրանց անվանում էին **«ծույլ թագավորներ»**: Երկիրը կառավարում էին արքայական կալվածքների կա-

Հաղթանակ տանելով Սուասոնի մոտ (486 թ.)՝ ի թիվս այլ ավարի՝ ֆրանկները վերցրին զարմանալի գեղեցկության և մեծության մի գավաթ: Քլոդվիգը խնդրեց այդ գավաթը տալ իրեն՝ իր մասնաբաժնից դուրս: Զինվորները պատասխանեցին. *«Արա՛ ինչ ուզում ես, քանզի ոչ ոք չի կարող հակառակվել քո իշխանությանը»:* Բայց մի զինվոր բարձրացրեց մարտական կացինը և կոտրեց գավաթը՝ ասելով. *«Դու ոչինչ չես ստանա, բացի քո հասանելիքից»:* Բոլորը զարմացել էին այդ արարքից, բայց արքան թաքցրեց իր վիրավորանքը:

Մեկ տարի անց նա հրամայեց իր զորքին հավաքվել զորատեսի: Անցնելով շարքերի առջևով՝ նա մոտեցավ այդ նույն զինվորին և ասաց նրան. *«Ոչ ոք այդպես չի պահում իր զենքը»,*— և խլելով նրանից կացինը՝ նետեց գետին: Իսկ երբ զինվորը կռացավ, որ վերցնի կացինը, արքան կտրեց նրա գլուխը: *«Այսպես,— ասաց նա,— դու վարվեցիր գավաթի հետ Սուասոնում»:*

Քլոդվիգը դրանով մեծ սարսափ առաջացրեց իր անձի հանդեպ:

Քլոդվիգն ու զինվորը: Նկարում Քլոդվիգը պատկերված է ալեզարդ ծերունու տեսքով, չնայած այդ ժամանակ նա ընդամենը 20 տարեկան էր:

ռավարիչները՝ **մայորդոմները** (լատ.՝ տան ավագ):

Նվաճելով Պիրենեյան թերակղզին՝ արաբները սկսեցին ասպատակել նաև Հարավային Գալլիան: **Պուատիեի 732 թ.** մոտ տեղի ունեցած ճակատամարտում մայորդոմ **Կարլոս Մարտելը** պարտության մատնեց արաբներին: Այս հաղթանակը մեծ նշանակություն ունեցավ, քանզի կանգնեցրեց արաբների հետագա առաջխաղացումը Եվրոպա:

751 թ. մայորդոմ **Պիպին Կարճահասակը** հռչակվեց ֆրանկների թագավոր: Հեղաշրջումը կատարվեց Հռոմի պապի թույլտվությամբ: Վարձահատույց լինելու համար Պիպինը արշավեց Հյուսիսային Իտալիա՝ լանգոբարդների դեմ: Նրանցից խլված հողերը նա նվիրեց պապին: Այս տարածքների վրա կազմավորվեց **Պապական պետությունը:** Այն գոյություն ունեցավ մինչև XIX դ. կեսերը**:**

Պիպինի գահակալումով Ֆրանկական պետությունում հաստատվեց **Կարոլինգների արքայատոհմը:** Տոհմանունն առաջացել է Պիպինի հաջորդի՝ **Կարլոս Մեծի** անունից:

Կարլոս Մեծ

Ժամանակագրություն սաքսերի դեմ Կարլոս Մեծի մղած պատերազմների մասին

775 թ. Կարլ թագավորը զորքերով եղավ Սաքսոնիայում, ամայացրեց այն, պատճառեց մեծ ավերածություններ:

783 թ. Տեր թագավորը մեծ զորքով մեկնեց Սաքսոնիա և սկսեց պատերազմ ապստամբած սաքսերի դեմ, սաքսերի կողմից սպանվեց բազմահազար մարդ՝ ավելի շատ, քան առաջ:

796 թ. Այդ տարի Կարլ թագավորը իր երկու որդիների հետ եղավ Սաքսոնիայում, շրջեց սաքսոնական հողերը, ուր խռովություններ էին բարձրացրել՝ հրկիզելով ամեն ինչ և ամայացնելով, այնտեղից բերեց գերի տղամարդիկ, կանայք և երեխաներ, ինչպես նաև անթիվ քանակի ավար:

799 թ. Կարլը գերի վերցրեց բազում սաքսերի՝ իրենց կանանց ու երեխաների հետ, նրանց բնակեցրեց իր պետության տարբեր մարզերում, իսկ նրանց հողերը բաժանեց եպիսկոպոսների, քահանաների և կոմսերի միջև:

ԱՍՏԾՈ ԸՆՏՐՅԱԼ ԿԱՅՍՐԸ

Ֆրանկական պետությունը իր հզորության գագաթնակետին հասավ **Կարլոս Մեծի** (768–814) օրոք: Նա իր ամբողջ կյանքն անցկացրեց պատերազմներում: Կարլոս Մեծը նվաճեց Հյուսիսային Իտալիան, Բավարիա և Սաքսոնիա դքսությունները և Իսպանիայի հյուսիսարևելյան շրջանները:

Կարլոս Մեծի կայսրությունը

Կարլոսի նվաճումների արդյունքում Ֆրանկական պետության տարածքը կրկնապատկվեց: Նա իրեն համարում էր Արևմտահռոմեական կայսրության ժառանգորդը, ուստի ձգտում էր յուրացնել կայսեր տիտղոսը: **800 թ.** Հռոմի պապը Կարլոսին թագադրեց արևմտահռոմեական կայսերական թագով:

Վաղ միջնադարի Եվրոպայում **«Կարլոս»** անունը դարձավ արքայական իշխանության խորհրդանիշ: Եվրոպայի առանձին երկրների կառավարողներ սկսեցին իրենց անվանել «կարոլ» (թագավոր)՝ Կարլոսի անունից:

Կարլոսի մահից հետո նրա տերությունը տրոհվեց: **843 թ. Վերդեն** քաղաքում Կարլոսի երեք թոռները դաշնագիր ստորագրեցին կայսրության բաժանման վերաբերյալ: Վերդենի դաշնագիրը հիմք դարձավ ապագա **Ֆրանսիայի, Գերմանիայի** և **Իտալիայի** կազմավորման համար:

Խոշոր վանքերում Կարլոս Մեծը բացեց դպրոցներ, որտեղ սովորում էին ոչ միայն հոգևորականների, այլև աշխարհիկ մարդկանց երեխաները: Ամեն կրթություն ստացած մարդկանց թիվը:

Վանքերում արտագրում և բազմացնում էին անտիկ գիտնականների աշխատությունները:

ԿԱՐՈԼԻՆԳՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Կարոլինգների օրոք ձևավորվեց նոր մշակույթ, որը ստացավ **«Կարոլինգյան վերածնունդ»** անվանումը: Դրա հիմքում ընկած էին երեք մշակույթները՝ անտիկ, քրիստոնեական և բարբարոսական: Նրանց կապող օղակը եկեղեցին և լատիներենն էին: Կարլոս Մեծը ձգտում էր կայսրության տարածքում ապրող բոլոր ժողովուրդների ու ցեղերի համար ստեղծել միասնական մշակույթ: Խոշոր վանքերում բացեց դպրոցներ: Այնտեղ պետք է սովորեին ոչ միայն հոգևորականների, այլև աշխարհիկ մարդկանց երեխաները:

Կարլոսը արքունիք էր հրավիրում կրթված մարդկանց Իտալիայից, Իսպանիայից, Բրի-

տանիայից: «Կարոլինգյան վերածննդի» ամենանշանավոր գործիչը **Ալքուինն** էր, որին հրավիրել էին Բրիտանիայից:

Կարլոսի արքունիքում ստեղծվեց գրական խմբակ, որը կոչվում էր «արքունական ակադեմիա»: Նրա գործունեությանը մասնակցում էին նաև կայսրը և նրա ընտանիքի անդամները:

«Կարոլինգյան վերածնունդը» մեծ դեր խաղաց Արևմտյան Եվրոպայի մշակութային կյանքում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշեք, որտեղ, ե՞րբ, ո՞վ է կազմավորել Ֆրանկական թագավորությունը:
2. Ինչո՞ւ էին Մերովինգներին անվանում «ծույլ թագավորներ»:
3. Ո՞վ էր Կարոլինգների արքայատոհմի հիմնադիրը:
4. Ինչո՞ւ էր Կարլոս Մեծը իրեն համարում Արևմտահռոմեական կայսրության ժառանգորդ:
5. Ե՞րբ է կնքվել Վերդենի դաշնագիրը: Ո՞ր պետությունների առաջացման հիմք դարձավ այն:
6. Ո՞ր մշակույթների համադրումից առաջացավ «Կարոլինգյան վերածննդի» մշակույթը:

Ստեղծագործական աշխատանք

Բնութագրեք Կարլոս Մեծին: Փորձեք ինքնուրույն պատկերել նրան: Հայոց արքաներից ո՞ւմ եք նմանեցնում Կարլոս Մեծին: Հիմնավորեք ձեր պատասխանը:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

«Սալիական դատաստանագիրք», մայորդոմ, «ծույլ թագավորներ», Մերովինգների արքայատոհմ, Պապական պետություն, Պիպին Կարճահասակ, Կարոլինգների արքայատոհմ, Կարլոս Մեծ, Վերդենի դաշնագիր, «Կարոլինգյան վերածնունդ», Ալքուին

§6. ՍՐԲԱԶԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Վերդենի դաշնագրով առանձնացված բուն գերմանական հողերից ձևավորվեց նոր պետություն: Այն սկզբում կոչվում էր **Արևելաֆրանկական** թագավորություն:

X դ. սկզբին Կարոլինգների արքայատոհմը դադարեց գոյություն ունենալուց: **919 թ.** արևելաֆրանկական թագավոր ընտրվեց **Սաքսոնիայի դուքս Հենրիխը:** Այսպես Եվրոպայում առաջացավ **Գերմանական թագավորությունը:** Այն ընդգրկում էր Հռենոս գետից մինչև Էլբա գետը, Հյուսիսային ծովից մինչև Ալպերի լեռներն ընկած տարածքները:

Գերմանիայում արքայական իշխանությունն ամուր չէր: Այնտեղ գոյություն ունեին հինգ խոշոր դքսություններ: Դուքսերը,

Իր իշխանությունն ամրապնդելու համար Հենրիխ I–ը, երկրի ներսում որոշակի զիջումներ անելով իր հակառակորդներին, կարողացավ հետ պահել պառակտումներից: Բացի այդ, նա դաշինք կնքեց Արևմտաֆրանկական պետության թագավորի հետ՝ զիջելով նրան Լոթարինգիան: Սակայն օգտվելով այդ թագավորության երկպառակություններից՝ հետ գրավեց այն:

Գերմանիայի համար մեծ վտանգ էին ներկայացնում նաև հունգարները: Հենրիխ I–ը հունգարների հետ հաշտության պայմանագիր կնքեց, ըստ որի՝ նրանց պետք է տուրք վճարեր:

930 թ. նա իրեն հպատակեցրեց Չեխիայի իշխան Վացլավ I–ին, իսկ 933 թ. պարտության մատնեց հունգարներին:

Հենրիխ I

Օտտոն I

որոնք կառավարում էին առանձին ցեղերով բնակեցված մեծ մարզերը, թագավորին ընդունում էին որպես հավասարների մեջ առաջինը: Դքսության բնակչությունը ենթարկվում էր դուքսին, այլ ոչ թագավորին:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐՈՒՄ

Թագավորական իշխանությունը ամրապնդելու համար գերմանական թագավոր **Օտտոն I–ը** (936–973) որոշեց նոր հենարան գտնել և վերջ տալ դուքսերի անջատողական ձգտումներին: Այդպիսի հենարան դարձավ գերմանական եկեղեցին: Օտտոնը եկեղեցուն շնորհեց հող, դատական և ռազմական իշխանություն: Շնորհված տարածքում գործում էր միայն եկեղեցական դատարանը: Բարձրաստիճան հոգևորականները ներգրավվում էին զինվորական ծառայության մեջ և դառնում էին զորամասերի հրամանատարներ:

Բոլոր եպիսկոպոսական և խոշոր վանքերի վանահայրերի պաշտոնները թագավորի տնօրինության ներքո էին: Նա էր բարձրաստիճան հոգևորականներին պաշտոնի նշանակում:

Այս ճանապարհով Գերմանիայում ամրապնդվեց թագավորական իշխանությունը: Հենվելով նորաստեղծ ծանրազեն հեծելազորի վրա՝ Օտտոնը **955 թ.** պարտության մատնեց հունգարներին: Այս հաղթանակից հետո նա իրեն համարում էր Եվրոպայի ամենահզոր տիրակալը: Նա ցանկանում էր նմանվել Կարլոս Մեծին և ստեղծել կայսրություն: Դրա համար նա պետք է նվաճեր Իտալիան և իրեն ենթարկեր Հռոմի պապին:

Օտտոնը նվաճեց Հյուսիսային Իտալիան, այնուհետև մտավ Հռոմ: **962 թ.** պապը նրան թագադրեց Արևմտահռոմեական կայսրության թագով:

Արևմտահռոմեական կայսրության թագը

ՍՐԲԱԶԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Նորաստեղծ պետությունն ընդգրկում էր Գերմանիան, Հյուսիսային և Միջին Իտալիան ու Հարավարևելյան Ֆրանսիան: Այն հավակնում էր դառնալու Արևմտահռոմեական կայսրության ժառանգորդը: Գերմանական կայսրերը ցանկանում էին Եվրոպայում ստեղծել միասնական քրիստոնեական տերություն, որը պետք է ունենար կրոնական և աշխարհիկ մայրաքաղաքներ՝ **Հռոմը** և **Ախենը**: Տերության աշխարհիկ իշխանությունը պատկանելու էր կայսրին, իսկ հոգևորը՝ պապին: Պետությունը պաշտոնապես կոչվում էր Գերմանական ազգի **սրբազան հռոմեական կայսրություն:**

Օտտոնը և նրա հաջորդները մեծ ուշադրություն էին դարձնում մշակույթին: Այդ պատճառով այս դարաշրջանը սովորաբար անվանում են նաև **«Օտտոնյան վերածնունդ»:** Նա արքունիքում ստեղծեց ակադեմիա: Ամենուրեք բացվեցին դպրոցներ:

Բարձր զարգացման հասավ պատմագրությունը: Վանական **Վիդուքինդը** գրեց «Սաքսերի պատմությունը» աշխատությունը: Նա փորձում էր հիմնավորել Սրբազան հռոմեական կայսրության ստեղծման անհրաժեշտությունը և այդ գործում գերմանացիների կարևոր դերը:

Օտտոն I–ը Քրիստոսին է ընծայում տաճարի մանրակերտը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս և ե՞րբ առաջացավ Գերմանական թագավորությունը:
2. Ո՞ր տարածքներն էր ընդգրկում նորաստեղծ պետությունը:
3. Ինչո՞ւ էր Գերմանիայում արքայական իշխանությունը թույլ: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Օտտոն I–ը իր իշխանությունն ամրապնդելու համար:
4. Օտտոն I–ը ե՞րբ և որտե՞ղ թագադրվեց Արևմտահռոմեական կայսրության թագով:
5. Ո՞ր իրադարձությունից հետո Օտտոն I–ն իրեն համարեց Եվրոպայի ամենահզոր տիրակալը: Համաձա՞յն եք նրա հետ. հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
6. Ի՞նչ է «Օտտոնյան վերածնունդը»: Ո՞վ էր «Սաքսերի պատմությունը» աշխատության հեղինակը, և ի՞նչ էր փորձում նա հիմնավորել:

Քննարկման հարց

Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Գերմանական պետությունը կոչվեց Սրբազան հռոմեական կայսրություն:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Արևելաֆրանկական թագավորություն, Հենրիխ Սաքսոնացի, Գերմանական պետություն, Օտտոն I, Ախեն, Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրություն, «Օտտոնյան վերածնունդ», Վիդուքինդ

§7. ԱՆՀԱՆԳԻՍՏ ԵՎՐՈՊԱՆ

ՎԻԿԻՆԳՆԵՐԸ

Հյուսիսային Եվրոպայի պատմության IX–XI դարերն անվանում են **վիկինգների դարաշրջան:** Այս ժամանակաշրջանում Սկանդինավյան թերակղզու բնակիչները՝ դանիացիները, շվեդները և նորվեգացիները, ձեռնամուխ եղան նվաճումների: Սկանդինավցիներին ընդհանրական անվանում էին **նորմաններ** («հյուսիսային մարդիկ»), իսկ Հին Ռուսիայում՝ **վարյագներ:** Իսկ ծովային արշավանքներին մասնակցողները հայտնի էին նաև **վիկինգներ** անունով: Վիկինգները գաղութներ և իշխանություններ հիմնեցին Բրիտանիայում, Ֆրանսիայում, Սիցիլիայում, Հյուսիսային Ամերիկայում:

X դարում վիկինգները բնակեցրին Իսլանդիան: Շուտով նրանք հայտնագործեցին նաև Գրենլանդիա կղզին: Իսկ վիկինգ **Լեյֆ Էրիկսոնը 1000 թ.** հասավ **Հյուսիսային Ամերիկա,** որտեղ հիմնեց գաղութ: Այսպիսով՝ Քրիստափոր Կոլումբոսից մոտ հինգ հարյուր տարի առաջ վիկինգներն արդեն հասել էին Ամերիկա:

Լեյֆ Էրիկսոնի արձանը
Սեյնթ Փոլ,
Մինեսոտա, ԱՄՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԼԱՎՈՆՆԵՐԸ

Արևմտյան սլավոնները (լեհեր, չեխեր, սլովակներ, մորավներ) զբաղեցնում էին Էլբա գետից արևելք ընկած տարածքները:

IX դարում կազմավորվեց **Մեծ Մորավիա**

Կիրիլ և Մեթոդիոս եղբայրները

իշխանությունը: Բյուզանդիայից այստեղ ժամանեցին քրիստոնեության քարոզիչներ **Կիրիլ** և **Մեթոդիոս** եղբայրները: Քրիստոնեությունը տարածելու նպատակով նրանք ստեղծեցին **սլավոնական այբուբենը** և Աստվածաշունչը հունարենից թարգմանեցին սլավոներեն: IX դ. վերջին Մեծ Մորավիայի կազմում ձևավորվեց չեխական իշխանությունը, որը շուտով անկախացավ: Չեխերը քրիստոնեությունն ընդունեցին կաթոլիկ ձևով: Չեխական եկեղեցին ենթարկվեց Հռոմի պապին:

Լեհական պետությունը առաջացավ X դարում: **966 թ.՝ Մեշկո I իշխանի** մկրտությունից հետո, այստեղ նույնպես հաստատվեց կաթոլիկ եկեղեցին:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԼԱՎՈՆՆԵՐԸ

Հարավային սլավոնները (սերբեր, խորվաթներ, սլովեններ) ապրում էին Բալկանյան թերակղզու հյուսիսում: Հետագայում արևելքից այստեղ եկան թյուրքալեզու բուլղարները: **681 թ.** նրանք ստեղծեցին **Բուլղարական թագավորությունը:** Բուլղարները ձուլվեցին տեղաբնիկ սլավոններին: Այսպես ձևավորվեց սլավոնական բուլղար ժողովուրդը: IX դ. կեսերին բուլղարները ընդունեցին քրիստոնեությունը հունական ձևով:

IX դարում կազմավորվեց **Սերբական պետությունը:** Սակայն սերբերին չհաջողվեց ստեղծել միասնական եկեղեցի: Սերբերի մի մասը քրիստոնեությունը ընդունեց կաթոլիկ, իսկ մյուս մասը՝ ուղղափառ ձևով:

Սլավոնական ցեղերի զբաղեցրած տարածքը

ՀՈՒՆԳԱՐՆԵՐԸ

Քոչվորական կյանք վարող հունգարական ցեղերն ապրում էին Վոլգա և Ուրալ գետերի շրջանում: IX դարում նրանք հաստատվեցին ժամանակակից Հունգարիայի տարածքում: Հունգարական հեծելազորը ասպատակում և ավերում էր Եվրոպայի շատ երկրներ: Արդեն ասվել է, որ **955 թ.** հունգարները ծանր պարտություն կրեցին գերմանացիներից: Դրանից հետո նրանք դադարեցին ասպատակել հարևան երկրները և անցան նստակյաց կյանքի: **Իշտվան I–ը 1001 թ.** թագ ստացավ Հռոմի պապից և հիմնեց Հունգարական պետությունը: Հունգարական եկեղեցին ենթարկվում էր պապական աթոռին:

ՎԻԿԻՆԳՆԵՐՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

(ըստ սկանդինավյան բանավոր ավանդազրույցի, որ գրառվել է XIII դարում)

Նորվեգացիները նորմանների դարաշրջանում հայտնի դարձան Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևելյան շրջանների բնակեցմամբ: IX դարի վերջին այսպես Նորվեգիայի բնակչության կողմից սկսվեց Իսլանդիա (նշանակում է «Սառույցների երկիր») կղզու բնակեցումը: Մոտավորապես մեկ դար անց իսլանդական նորվեգացի Էրիկ Շիկահերը հասավ մի անհայտ երկիր: Նրան դուր եկավ խիտ խոտածածկույթով հովիտները, ծովում՝ ձկների և փոկերի առատությունը: Վերաբնակիչներին հրապուրելու նպատակով Էրիկը կղզին Գրենլանդիա («Կանաչ երկիր») անվանեց:

Մոտավորապես 1000 թ. Էրիկի որդի Լեյֆ Էրիկսոնը հասավ նոր երկրներ՝ Գրենլանդիայից արևմուտք: Դա եվրոպացիների համար նոր մայրցամաք էր, որը հետագայում կոչվեց Ամերիկա: Սակայն սկանդինավները չկարողացան այստեղ երկար ամրապնդվել: Այս երկրները իրենց հայրենիքից շատ հեռու էին, իսկ հնարավոր է՝ խանգարեց նաև տեղական բնակչության դիմադրությունը: Այս հայտնագործության մասին այն ժամանակ Եվրոպայի երկրներում գրեթե ոչ ոք տեղյակ չէր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ովքե՞ր էին նորմանները: Իսկ վիկինգնե՞րը: Ինչպե՞ս էին նրանց անվանում Հին Ռուսիայում:
2. Վիկինգները որտե՞ղ հիմնեցին իշխանություններ:
3. Լեյֆ Էրիկսոնը ե՞րբ ափ իջավ Հյուսիսային Ամերիկայում:
4. Որտե՞ղ էին բնակվում արևմտյան սլավոնները: Ի՞նչ պետություններ նրանք հիմնեցին:
5. Հարավային սլավոնական ի՞նչ ժողովուրդներ կարող եք նշել:
6. Ե՞րբ է ստեղծվել Բուլղարական թագավորությունը:
7. Սկզբնապես որտե՞ղ էին ապրում հունգարները: Ե՞րբ է ստեղծվել Հունգարական պետությունը:
8. Ո՞ր աթոռների գերագահությունն ընդունեցին սլավոնական եկեղեցիները. թվարկե՛ք:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Վիկինգների դարաշրջան, նորման (վիկինգ), վարյագ, Լեյֆ Էրիկսոն, սլավոններ, Բուլղարական թագավորություն, Մեծ Մորավիա իշխանություն, Կիրիլ, Մեթոդիոս, սլավոնական այբուբեն, Սերբական պետություն, Լեհական պետություն, Մեշկո I, Իշտվան I, Հունգարական պետություն

§8. ՀԻՆ ՌՈՒՍԻԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԼԱՎՈՆՆԵՐԸ

Եվրոպայի արևելյան շրջաններում հին ժամանակներից բնակվում էին սլավոնական բազմաթիվ ցեղեր: Առաջին հազարամյակի կեսերին նրանք դեռևս ապրում էին տոհմատիրական հասարակության պայմաններում:

VI–VIII դարերում արևելյան սլավոնների մոտ սկսեցին ձևավորվել ցեղային խոշոր միություններ: Դնեպր գետի միջին հոսանքի շրջանում՝ **Կիևի** (ներկայիս Ուկրաինայի մայրաքաղաքը) մոտ, ապրում էին **պոլյանները:** Հայտնի էին նաև **վյատիչների, դրևլյանների, սևերյանների** և այլ ցեղային միությունները:

Ամենազարգացածը պոլյաններն էին: Նրանց տարածքն անվանում էին **Ռուս՝** Դնեպրի վտակ Ռոս գետի անունից: Այստեղից էլ հետագայում առաջացել է Արևելյան Եվրոպայի մեծ մասն ընդգրկող պետության **Ռուսիա** անվանումը:

Արևելյան սլավոնների յուրաքանչյուր ցեղային միության գլուխ կանգնած էր ռազմական առաջնորդը՝ **իշխանը:** Վերջինս ուներ զինված ջոկատ, որը կոչվում էր **դրուժինա:** Պատերազմի դեպքում հավաքագրվում էր նաև աշխարհազոր ժողովրդից:

Իշխան Ռյուրիկ

Ըստ ռուսական հնագույն ավանդության՝ 862 թ. նովգորոդցիները Ռուսիա են հրավիրում վարյագների իշխան Ռյուրիկին՝ իրենց կառավարելու: Այդպես հիմք է դրվում ռուսական իշխանական տոհմին: Իսկ միասնական պետության՝ Հին Ռուսիայի ստեղծումը կապված է Նովգորոդի իշխան Օլեգի անվան հետ:

Նովգորոդի իշխան Օլեգը

ՀԻՆ ՌՈՒՍԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Արևելյան սլավոնները IX դարի ընթացքում միավորվեցին ու ստեղծեցին երկու պետություն: Դրանցից մեկը հյուսիսում էր՝ **Նովգորոդ** կենտրոնով, մյուսը՝ հարավում՝ **Կիև** կենտրոնով: Այդ ժամանակ սլավոններին հյուսիսից սպառնում էին **վարյագները:** Հարուստ ավարի համար նրանք Բալթիկ ծովից հասնում էին Բյուզանդիայի մայրաքաղաք: Դա **«Վարյագներից հույներ»** տանող առևտրական ճանապարհն էր:

Նովգորոդի իշխան **Օլեգը 882 թ.** գրավեց է Կիևը և «Վարյագներից հույներ» տանող ճանապարհի երկայնքով ընկած սլավոնական հողերը միավորեց մեկ պետության մեջ: Այսպես առաջացավ **Հին Ռուսիա** պետությունը:

Օլեգը Կիևը դարձրեց նորաստեղծ երկրի մայրաքաղաք, ահա թե ինչու հին ռուսական պետությունն անվանում են նաև **Կիևյան Ռուսիա:** Պետությունը կառավարում էր Կիևում նստող **Մեծ իշխանը,** որին ենթակա էին մյուս իշխանները:

Հին Ռուսիան աստիճանաբար զորեղացավ ու հարստացավ: Դրան նպաստեցին կիևյան իշխանների նվաճողական պատերազմներն ու արշավանքները: Նրանց հարձակումների հիմնական թիրախ դարձավ Բյուզանդիայի տարածքը: Սլավոններին հատկապես ձգում էր վաճառաշահ ու հարուստ Կոստանդնուպոլիսը: Եկամտի կարևոր աղբյուր էր նաև հարևան երկրների հետ կատարվող առևտուրը:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Վլադիմիր I

Հին ռուսական պետության կազմավորումն ավարտվեց Մեծ իշխան **Վլադիմիրի** օրոք (980–1015 թթ.): Վլադիմիրը հասկանում էր, որ պետության ու ժողովրդի համախմբման համար անհրաժեշտ է ստեղծել նաև հոգևոր միասնություն: Հին ռուսների հեթանոսական կրոնն այլևս չէր ապահովում այդ միասնականությունը:

988 թ. Հին Ռուսիայում քրիստոնեությունն ընդունվեց որպես պետական կրոն: Մինչ այդ եվրոպական հայտնի պետությունները Ռուսիան համարում էին բարբարոսական երկիր: Քրիստոնեության ընդունման շնորհիվ Ռուսիան մտավ քաղաքակիրթ երկրների շարքը: Ամրապնդվեցին հարաբերությունները եվրոպական երկրների հետ: Դրանում կարևոր դեր խաղացին դինաստիական կապերի հաստատումը: Այսպես՝ Մեծ իշխան Վլադիմիրն ամուսնացավ Բյուզանդիայի կայսր **Վասիլ (Բարսեղ) II–ի** քրոջ՝ **Աննայի** հետ:

1054 թ. քրիստոնեական եկեղեցու մեծ բաժանումից հետո ռուսական եկեղեցին, ինչպես և բյուզանդականը, կոչվեց ուղղափառ:

ՅԱՐՈՍԼԱՎ ԻՄԱՍՏՈՒՆ. «ՌՈՒՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

Վլադիմիրն իր որդիներին նշանակեց Ռուսիայի տարբեր երկրամասերի ու քաղաքների տեղապահ–իշխաններ: Նրանից հետո որդիների միջև սուր պայքար սկսվեց Մեծ իշխանի տիտղոսի համար: Հաղթեց իշխան **Յարոսլավը** (1019–1054 թթ.):

Պետական իշխանությունն ուժեղացնելու

Յարոսլավ Իմաստունի արձանը, ձեռքին՝ «Ռուսկայա պրավդա» առաջին գրավոր օրենսգիրքն է:

և հասարակության տարբեր դասերի միջև հարաբերությունները կանոնակարգելու նպատակով Յարոսլավը ստեղծեց ռուսական առաջին գրավոր օրենսգիրքը: Այն հայտնի է **«Ռուսկայա պրավդա»** անունով: Դրանով կարգավորվեցին ունեցվածքային ու սովորութային հարաբերությունները: Զանազան պատիժներ սահմանվեցին գողության, ավազակության, դիտավորյալ հրդեհելու, ձիագողության և այլ հանցանքների համար:

Յարոսլավը մեծ սեր ուներ կրթության և գիտության հանդեպ: Նա քաղաքներում ու նշանավոր վանքերում բացեց դպրոցներ: Հին Ռուսիայում վերելք ապրեցին գրականությունը և արվեստը: Սկսեցին գրի առնել պատմությունը **տարեգրությունների** տեսքով: Այս ամենի շնորհիվ Յարոսլավը ժամանակակիցների կողմից ստացավ **Իմաստուն** մականունը:

Կիևյան Ռուսիան Յարոսլավի օրոք ժամանակի ուժեղ պետություններից մեկն էր: Ահա թե ինչու նույնիսկ Եվրոպայի հզոր տիրակալները ձգտում էին ազգակցական կապեր հաստատել նրա հետ: Յարոսլավը, նրա որդիներն ու դուստրերը ամուսնական կապերով կապվեցին Ֆրանսիայի, Նորվեգիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Բյուզանդիայի արքայական տոհմերի հետ:

Հաջորդ հարյուրամյակի ընթացքում, սակայն, Ռուսիան աստիճանաբար թուլացավ և մասնատվեց անկախ իշխանությունների:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտեղ էին բնակվում արևելյան սլավոնները:
2. Վաղ միջնադարում ինչպիսի հասարակարգում էին նրանք ապրում:
3. Արևելասլավոնական ցեղային միություններից ո՞րն էր ամենազարգացածը:
4. Ինչ պայմաններ նպաստեցին հին ռուսական պետության առաջացմանը: Ե՞րբ է ստեղծվել այն և ո՞ւմ օրոք: Ինչ անուններով է հայտնի:
5. Ինչը նպաստեց հին ռուսական պետության հզորացմանը:
6. Ո՞ւմ օրոք է ընդունվել քրիստոնեությունը:
7. Ո՞ր թվականներին է կառավարել Մեծ իշխան Յարոսլավը: Ինչո՞ւ է նա կոչվել Իմաստուն:
8. Ո՞ր երկրների հետ էին ազգակցական կապեր հաստատել Կիևի Մեծ իշխանները:

Գործնական առաջադրանքներ

1. Խմբերով քննարկե՛ք և պարզաբանե՛ք, թե ինչ նշանակություն ունեցավ քրիստոնեության ընդունումը Կիևյան Ռուսիայի համար: Օգտագործե՛ք Հայաստանի, Բյուզանդիայի և այլ երկրների օրինակը:
2. Ներկայացրե՛ք «Ռուսկայա պրավդայի» նշանակությունը: Վերհիշե՛ք ձեզ հայտնի այլ օրենսգրքեր, որոշեք, թե որի՞ հետ այն ունի նմանություններ:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Արևելյան սլավոններ, պոլյաններ, դրուժինա, Նովգորոդ, Կիև, «Վարյագներից հույներ» տանող ճանապարհ, Օլեգ, Կիևյան Ռուսիա, Հին Ռուսիա, Վլադիմիր, Վասիլ (Բարսեղ) II, Աննա, «Ռուսկայա պրավդա», Յարոսլավ Իմաստուն

ԲԱԺԻՆ 1 ԱՄՓՈՓՈՒՄ

1. Արևմտահռոմեական կայսրությունը V դարի վերջին կործանվեց: Այսպես Եվրոպայում անկում ապրեց անտիկ հասարակությունը, և սկսվեց միջնադարյան հասարակարգի ձևավորումը: Մինչև Ժողովուրդների մեծ գաղթը Եվրոպայում կար մեկ պետություն՝ Հռոմեական կայսրությունը: Մեծ գաղթը և բարբարոսների նվաճումները հիմք դարձան ժամանակակից եվրոպական պետությունների և ժողովուրդների ձևավորման համար:

   Վերհիշե՛ք, ո՞ր թվականին է կործանվել Արևմտահռոմեական կայսրությունը: Որո՞նք էին դրա պատճառները: Ինչ նոր պետություններ առաջացան դրա փլատակների վրա:

2. Քրիստոնեությունը 381 թ. հռչակվել էր Հռոմեական կայսրության պետական կրոն: Քրիստոնեական եկեղեցու կառավարման գործում ղեկավար դեր ստանձնեցին Հռոմի պապը և Կոստանդնուպոլսի պատրիարքը: Քրիստոնեությունը պայքարում էր ոչ միայն հեթանոսության, այլև նրանց դեմ, ովքեր շեղվում էին պաշտոնական դավանանքից:

   Ինչ է հերետիկոսությունը, ինչո՞ւ էր պաշտոնական եկեղեցին պայքարում դրա դեմ: Ովքե՞ր էին պայքարում քրիստոնեական եկեղեցու գերագահության համար: Ո՞ր ժողովն է հաստատել ընտրված գրականության ցանկը:

3. Բյուզանդական կայսր Հուստինիանոս I–ը փորձեց վերականգնել միասնական Հռոմեական կայսրությունը: Սակայն նրա մահից հետո կայսրությունը կորցրեց իր նախկին հզորությունը և տարածքների մի մասը: VII դարում պատմության թատերաբեմ իջած արաբներին հաջողվեց գրավել կայսրության տարածքների զգալի մասը: Բյուզանդական կայսրության նախկին հզորությունը այլևս չվերականգնվեց:

   Որտեղի՞ց է առաջացել կայսրության Բյուզանդիա անվանումը: Հուստինիանոսին հաջողվե՞ց իրականացնել իր նպատակը: Ինչ գործերով է հայտնի Հուստինիանոսը:

4. Բյուզանդիան արաբների դեմ պայքարում զգալիորեն թուլացավ: Կայսրությունը կրկին հզորացավ Հայկական (Մակեդոնական) արքայատոհմի կառավարման ժամանակ: Այս ժամանակաշրջանում աննախադեպ զարգացման հասավ բյուզանդական մշակույթը: XI դ. երկրորդ կեսին Բյուզանդիայի դրությունը կրկին վատթարացավ: 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում սելջուկները ծանր պարտության մատնեցին բյուզանդացիներին:

> *Ո՞վ էր Հայկական արքայատոհմի հիմնադիրը: Ապացուցեք, որ նոր արքայատոհմի օրոք Բյուզանդիան իրոք հզորացել էր: Ինչո՞ւ սելջուկներին հաջողվեց պարտության մատնել Բյուզանդիային: Նշե՛ք դրա հետևանքները:*

5. Օգտվելով Արևմտահռոմեական կայսրության անկումից՝ ֆրանկները Քլոդվիգի առաջնորդությամբ Հյուսիսային Գալլիայում հիմնեցին թագավորություն: Ֆրանկական պետությունը իր հզորության գագաթնակետին հասավ Կարլոս Մեծի օրոք: Փաստորեն՝ Կարլոս Մեծի տերությունը զբաղեցնում էր նախկին Արևմտահռոմեական կայսրության հիմնական տարածքը: Սակայն նրա մահից հետո տերությունը տրոհվեց երեք մասի, որոնց հիման վրա ձևավորվեցին ներկայիս Ֆրանսիան, Իտալիան և Գերմանիան:

> *Ո՞ւմ էին անվանում «ծույլ» թագավորներ: Կարլոս Մեծը ե՞րբ և ո՞ւմ կողմից թագադրվեց կայսերական թագով: Ինչո՞ւ նրա տերությունը արագ տրոհվեց: Ինչ է Կարոլինգյան վերածնունդը:*

6. Որոշ ժամանակ բուն գերմանական հողերի մի մասը մտնում էր Կարլոս Մեծի կայսրության կազմի մեջ: Վերդենի դաշնագրով այդ հողերը բաժին հասան Կարլոս Մեծի թոռ Լյուդովիկոսին: Շուտով առաջացավ Գերմանական պետությունը: Նորաստեղծ պետությունը հավակնում էր դառնալու Արևմտահռոմեական կայսրության ժառանգորդ:

> *Ո՞վ էր Գերմանական պետության առաջին թագավորը: Ո՞ւմ ջանքերով հզորացավ Գերմանական պետությունը: Ինչպե՞ս կոչվեց նրա ստեղծած տերությունը:*

7. Սկանդինավյան թերակղզու բնակիչները՝ շվեդները, դանիացիները և նորվեգացիները, որոնց անվանում էին վիկինգներ (նորմաններ), IX–XI դդ. ձեռնամուխ եղան նոր տարածքների նվաճմանը: Նույն ժա-

մանակաշրջանում իրենց պետությունները ստեղծեցին նաև սլավոնները: Ներկայիս Հունգարիայի տարածքում հաստատված քոչվոր հունգարները նույնպես ստեղծեցին իրենց թագավորությունը: Այսպիսով՝ IX–XI դդ. Եվրոպայում առաջացան մի շարք նոր պետություններ, որոնք գոյություն ունեն մինչև այժմ:

Ո՞ր տարածքներում պետություններ հիմնեցին վիկինգները: Թվարկե՛ք սլավոնական ժողովուրդների և պետությունների ըստ նրանց երեք ճյուղերի: Ե՞րբ է առաջացել Հունգարական թագավորությունը:

8. Վաղ միջնադարում արևելյան սլավոնները նախնադարից անցում կատարեցին ավատատիրական կարգերին: Ստեղծվեց միասնական պետություն՝ Հին Ռուսիան: Այն կարևոր դեր խաղաց արևելյան սլավոնների քաղաքական և կրոնական համախմբման գործում: Կիևյան Ռուսիան Յարոսլավ Իմաստունի օրոք դարձավ ժամանակի ուժեղ պետություններից մեկը: Հին ռուսական պետության տարածքում են ձևավորվել ժամանակակից երեք սլավոնական ժողովուրդները՝ ռուսները, ուկրաինացիները և բելառուսները:

Ինչպե՞ս, ե՞րբ և ո՞վ ստեղծեց Հին Ռուսիա պետությունը: Ինչի՞ շնորհիվ Ռուսիան ճանաչում գտավ եվրոպական պետությունների կողմից: Ինչո՞ւ են Մեծ իշխան Յարոսլավին անվանել Իմաստուն: Փորձե՛ք բնութագրել Յարոսլավ Իմաստունին: Ձեզ հայտնի պատմական ո՞ր կերպարների հետ կարող եք նրան համեմատել:

ԲԱԺԻՆ 2 ՄԻՋՆԱԴԱՐԸ ԾԱՂԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

§9. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Միջնադարը բաժանվում է երեք մեծ փուլերի՝ **ավատատիրական հարաբերությունների ձևավորման, զարգացման** և **անկման**: Պատմությունից հայտնի են ավատատիրական հասարակության առաջացման երեք հիմնական ուղիներ:

Առաջին ուղի՝ ստրուկների անարդյունավետ աշխատանքի փոխարեն սկսում են օգտագործել ազատ կամ կիսազատ մարդկանց աշխատանքը: Պետությունը հենվում է պայմանական իրավունքով հող ստացած հողատերերի վրա: Սրանք օգտագործում էին կախյալ մարդկանց աշխատանքը: Այսպես է ձևավորվել ավատատիրական հասարակարգը Բյուզանդիայում, Հնդկաստանում և Չինաստանում:

Ավատատերը կարգադրություններ է անում աշխատող գյուղացիներին (միջնադարյան մանրանկարչություն):


ԹԱԳԱՎՈՐ

ԴՈՒՔՍ

ԿՈՄՍ

ԲԱՐՈՆ


ԱՍՊԵՏ

Ավատատիրական աստիճանակարգությունը

Երկրորդ ուղի՝ տոհմատիրական հասարակարգից անմիջապես անցում է կատարվում ավատատիրական հասարակարգին: Տոհմացեղային ավագանու ձեռքին կենտրոնանում են հողերը, անասունները և իշխանությունը: Նրանք սկսում են օգտագործել կիսազատ մարդկանց աշխատանքը: Ռազմական առաջնորդի իշխանությունը վերածվում է թագավորական իշխանության: Այսպես է ձևավորվել ավատատիրական հասարակությունը սլավոնների և գերմանացիների մոտ:

Երրորդ ուղի՝ ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանում տոհմատիրական հասարակարգում ապրող գերմանական ցեղերի մի մասը հաստատվեց այնպիսի տարածքներում, ուր գոյություն ուներ բարձր զարգացած դասակարգային հասարակություն: Տեղի ունեցավ երկու հասարակարգերի (անտիկ և տոհմատիրական) համադրում, որի արդյունքում ձևավորվեց ավատատիրությունը: Նոր հասարակությունը այս ճանապարհով է առաջացել Ֆրանսիայում:

ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Զինվորական և պետական ծառայություն կատարելու դիմաց թագավորը հող՝ **ավատ, ֆեոդ** էր տրամադրում: Այստեղից էլ առաջացել են **ավատատեր, ավատատիրություն** անվանումները: Խոշոր ավատ (դքսություն, կոմսություն, բարոնություն) ստացողն այն փոքր կտորներով բաժանում էր ռազմական ծառայություն կատարող մարդկանց՝ **վասալներին**:

Ավատը **ժառանգական** էր դառնում, երբ

վասալի որդին պարտավորվում էր կատարել նույն ծառայությունը, որի համար հող էր ստացել հայրը:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչության կյանքի կազմակերպման հիմնական ձևը **համայնքն** էր: Համայնքը ղեկավարելու համար չափահաս տղամարդկանց ժողովն ընտրում էր **տանուտեր:** Առավել կարևոր հարցերը լուծում էր համայնքի ընդհանուր ժողովը:

Գյուղացին պարտավոր էր տարվա մի մասը աշխատել հողատիրոջ մոտ կամ նրան հարկ վճարել ստացած բերքից: Նա հարկ էր վճարում նաև պետությանը:

ԱՍՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Ասպետ» բառը ծագել է ասպ՝ «ձի» արմատից և սկզբնապես նշանակել է ձիավոր, հեծյալ: Միջնադարյան Արևմտյան Եվրոպայում ասպետությունը ռազմաավատատիրական խավ էր: Ասպետ չէին ծնվում, այլ դառնում էին օծման միջոցով: Օծվելուց հետո ասպետը դառնում էր որևէ հողատեր–ազնվականի վասալը, ստանում էր հողաբաժին և ներառվում ավատատիրական խավի մեջ:

Ասպետությունը ձևավորվեց Ֆրանսիայում VIII դարում, այնուհետև տարածվեց մյուս երկրներում:

Ասպետի գլխավոր առանձնահատկությունը առատաձեռնությունն էր: Հարստությունը ինքնանպատակ գործ չէր, այլ ձեռք էր բերվում հետագայում ծախսելու համար: Ասպետի հիմնական զբաղմունքը պատերազմները, որսորդությունը և ասպետական մրցումներն էին: Նա չէր զբաղվում իր տնտեսությամբ, հակված չէր ընտանեկան կյանքի: Սակայն արդեն XII դարում սկսում է փոխվել ասպետի կերպարը. կոպիտ, կիսագրագետին փոխարինելու է գալիս կրթված, գեղեցիկի հանդեպ հակումով, բարեկիրթ վարվելակերպով ասպետը:

Միջնադարյան դղյակ հարակից հողատարածքներով, որտեղ աշխատում էին վարձու գյուղացիները:

Հողատերը իրավունք չուներ մահապատժի ենթարկելու իր գյուղացիներին: Նա հովանավորում և պաշտպանում էր գյուղացիներին: Կիրակի և տոնական օրերին գյուղացիները հավաքվում էին տիրոջ դղյակի մոտ: Այստեղ կազմակերպվում էին ասպետական մրցախաղեր ու թատերական ներկայացումներ:

ՄԻՋՆԱԴԱՐԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ապրանքափոխանակության, առևտրի և արհեստագործության զարգացումը նպաստեց քաղաքների առաջացմանը: Արհեստավորներն ու առևտրականները հաստատվում էին այնպիսի վայրերում, որտեղ հեշտ էր հումք ձեռք բերելը և արտադրանքն իրացնելը: Այդպիսի վայրեր էին քաղաքական և հոգևոր–մշակութային կենտրոնները, հարմար ծովախորշերը և նախկին հռոմեական քաղաքները:

Միջնադարի քաղաքները սկզբնական շրջանում առաջացան Իտալիայում և Ֆրանսիայում, օրինակ՝ **Ջենովան, Վենետիկը, Մարսելը:**

Եվրոպայի ցամաքային ճանապարհների խաչմերուկներում և նավարկելի գետերի ափերին առաջացած քաղաքներից էին **Միլանը, Քյոլնը, Փարիզը:**

Սովորաբար քաղաքների բնակչությունը կազմում էր 10 000–50 000 մարդ: Շատ քիչ քաղաքներ ունեին 50 հազարից ավելի բնակչություն: Դրանց թվում էին **Կոստանդնուպոլիսը, Կորդովան, Փարիզը:**

ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքում միևնույն մասնագիտության արհեստավորները միավորվում էին հատուկ կազմակերպության մեջ, որ կոչվում էր **համքարություն** (արհեստակցություն):

Համքարությունն ուներ իր կանոնադրությունը: Այն սահմանում էր արհեստավորի արտադրած ապրանքի չափը, քանակը և որակը: Համքարությունը միաժամանակ ռազմական և կրոնական կազմակերպություն էր: Ուներ իր հովանավոր սուրբը և դրոշը: Նրա անդամներից կազմված աշխարհազորը մասնակցում էր հայրենի քաղաքի պաշտպանությանը:

Համքարության անդամ կարող էին լինել միայն **վարպետները:** Նրանք էին ընտրում համքարության ղեկավարին: Յուրաքանչյուր վարպետ ուներ իր արհեստանոցը: Վարպետին օգնում էին ենթավարպետները և աշակերտները: XIV դ. Փարիզում կար 350 համքարություն, Լոնդոնում՝ 60, Քյոլնում՝ 50:

Առևտրականները ևս ունեին իրենց կազմակերպությունները, որը կոչվում էր **գիլդիա** (առևտրամիություն): Հաճախ նույն գիլդիայի մեջ էին մտնում մի քանի քաղաքների առևտրականներ: Այսպես՝ գերմանական և արևմտասլավոնական մի քանի քաղաքների առևտրականները միավորվել էին **Հանզայի գիլդիայի** մեջ:

Արհեստանոցներ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս ձևավորվեց ավատատիրական հասարակարգը.
   ա) Բյուզանդիայում, Հնդկաստանում և Չինաստանում,
   բ) սլավոնների և գերմանացիների մոտ,
   գ) Ֆրանսիայում:
2. Ի՞նչ է ավատը: Ե՞րբ էր այն դառնում ժառանգական:
3. Գծապատկերի օգնությամբ բացատրե՛ք ավատատիրական աստիճանակարգությունը: Ովքե՞ր էին ասպետները:
4. Ներկայացրե՛ք գյուղական համայնքը:
5. Թվարկե՛ք այդ ժամանակի հայտնի եվրոպական քաղաքների անուններ: Կարո՞ղ եք նշել նաև Հայաստանի այդ ժամանակաշրջանի հայտնի քաղաքների անուններ:
6. Ի՞նչ է համքարությունը: Ներկայացրե՛ք դրա կառուցվածքը և գործառույթները:
7. Ինչպե՞ս էր կոչվում առևտրականների միությունը:

Նոր հասկացություններ, անուններ

Ավատատիրական հասարակարգ, ավատատիրական աստիճանակարգություն, ավատատեր, վասալ, ասպետ, տանուտեր, Ջենովա, Վենետիկ Մարսել, Միլան, Քյոլն, Փարիզ, Կորդովա, համքարություն (արհեստակցություն), վարպետ, գիլդիա (առևտրամիություն), Հանզայի գիլդիա

§10. ԽԱՉԱԿՐԱՑ ՇԱՐԺՈՒՄԸ

ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

1095 թ. Ֆրանսիայի **Կլերմոն** քաղաքում **Ուրբանոս II պապը** հավատացյալներին կոչ արեց արշավել դեպի Երուսաղեմ և անհավատներից փրկել Հիսուս Քրիստոսի գերեզմանը: Պապի խոսքերը խոր տպավորություն թողեցին ներկաների վրա: Նրանք անմիջապես սկսեցին խաչեր կարել հագուստներին: Այստեղից էլ առաջացել է արշավանքների մասնակիցների անվանումը՝ **խաչակիրներ:**

Բացի քրիստոնեական սրբավայրերի ազատագրումից, կազմակերպիչները և շարժման մասնակիցներն ունեին նաև շահադիտական նպատակներ: Նրանք ցանկանում էին հարստանալ Արևելքի երկրների հաշվին:

Իսկ կաթոլիկ եկեղեցին ցանկանում էր իր իշխանությունը հաստատել արևելյան եկեղեցիների վրա:

ԽԱՉԱԿՐԱՑ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ

1096 թ. սկսվեց խաչակիրների առաջին արշավանքը: Գարնանը ճանապարհ ընկան գյուղացիներից կազմված ջոկատները: Երբ նրանք հասան Կոստանդնուպոլիս, 50 հազարից կենդանի էր մնացել ընդամենը 25 հազար մարդ: Չսպասելով ասպետների ժամանմանը՝ նրանք անցան Բոսֆորի նեղուցը և շարժվեցին դեպի Սուրբ երկիր: Սակայն **Նիկեա քաղաքի** մոտ սելջուկները ջախջա-

Ուրբանոս II պապը Կլերմոնի իր ճառում ասում էր. «Երկիրը, որտեղ բնակվում եք դուք, բոլոր կողմերից սեղմված է ծովով ու լեռնաշղթաներով, և դրա համար էլ այժմ նեղ է դարձել ձեր բազմամարդության պատճառով, հարստություններով այն առատ չէ և հազիվ է հաց հասցնում իր մշակողներին: Դրանից էլ տեղի է ունենում այն, որ դուք կրծում ու խժռում եք միմյանց, պատերազմներ մղում ու մահացու վերքեր հասցնում: Իսկ այժմ կարող է դադար առնել ձեր ատելությունը, կհանդարտվեն կռիվները, և կնիրհի երկպառակությունը: Ճամփա՛ ընկեք դեպի սուրբ գերեզմանը, խլե՛ք այդ երկիրը անհավատներից և ձե՛ր դարձրեք: Այդ հողում «մեղր ու կարագ է հոսում»: Երուսաղեմը երկրիս ամենաբարեբեր մարգարիտն է»:

Խաչակրաց արշավանքները



խեցին գյուղացիական ջոկատները: Փրկվեց միայն երեք հազար մարդ:

1096 թ. դեկտեմբերին Կոստանդնուպոլիս հասան ասպետական ջոկատները և շարունակեցին երթը դեպի Երուսաղեմ: Կիլիկիայով անցնելիս նրանց մեծ օգնություն ցույց տվին տեղի հայերը:

Խաչակիրների առաջնորդներից մեկը՝ **Բալդուինը, 1098 թ.** խաբեությամբ մտավ **Եդեսիա** քաղաք: Նա դավադրաբար սպանեց Եդեսիայի կառավարչին՝ հայազգի **Թորոս Կյուրապաղատին:** Այսպես Բալդուինը ստեղ-



ծեց խաչակրաց առաջին պետությունը՝ **Եդեսիայի կոմսությունը:**

Նույն թվականին խաչակիրները գրավեցին **Անտիոք քաղաքը,** ստեղծեցին **Անտիոքի դքսությունը:** Իսկ **1099 թ.** նրանք գրավեցին **Երուսաղեմը:** Գրավված տարածքներից ստեղծվեց **Երուսաղեմի թագավորությունը:** Դրա մեջ էին մտնում **Անտիոքի դքսությունը, Եդեսիայի** և **Տրիպոլիի կոմսությունները:**

Պետության պաշտպանության նպատակով հիմնվեցին **հոգևոր–ասպետական միաբանություններ:** Նրա անդամները միաժամանակ վանականներ էին և ասպետներ: Նրանք երդվում էին չամուսնանալ, կաթոլիկություն տարածել և մարտնչել մուսուլմանների դեմ:

Դրանցից առաջինը **Հիվանդախնամների միաբանությունն** էր: Այնուհետև ստեղծվեցին **Տաճարականների** և **Տևտոնական միաբանությունները:** Միաբանությունները զգալի դեր խաղացին Սուրբ երկրի պաշտպանության գործում:

Տաճարականների զինանշանը և ձեռագիր մագաղաթը՝ զմռսած հատուկ կնիքով և ապրլասե կարմիր թելով:

ԵՐԵՔ ԽԱՉԱԿԻՐ ԱՐՔԱՆԵՐԸ

Խաչակրաց արշավանքը անակնկալ էր մուսուլմանների համար: Սակայն արդեն **1144 թ.** նրանք հետ գրավեցին Եդեսիան: Խաչակիրների դրությունը ծանրացավ, երբ Եգիպտոսում իշխանության եկավ **Սալահ ադ Դինը:**

Սալահ ադ Դինի պապը ծնվել էր Հայաստանում: Դառնալով Եգիպտոսի տիրակալ՝ Սալահ ադ Դինը կարճ ժամանակամիջոցում գրավում է Ասորիքի և Միջագետքի մի մասը: Նա որոշում է խաչակիրներից հետ գրավել

Ռիչարդ I Առյուծասիրտը խաչակիրների հետ

Երուսաղեմը, քանի որ մուսուլմանները ևս այն համարում էին իրենց սուրբ քաղաքը:

Սալահ ադ Դինը **1187 թ.** պարտության մատնեց խաչակիրներին և հասավ իր նպատակին:

Երուսաղեմի անկման լուրը ցնցեց քրիստոնյա Եվրոպան: Եվրոպացիները նախապատրաստվեցին նոր արշավանքի: Պապի հանձնարարությամբ այն գլխավորեցին գերմանական կայսր **Ֆրիդրիխ I Բարբարոսան,** Անգլիայի թագավոր **Ռիչարդ I Առյուծասիրտը** և Ֆրանսիայի թագավոր **Ֆիլիպ II Օգոստոսը:**

1189 թ. սկսվեց **խաչակրաց երրորդ արշավանքը:** Հենց սկզբից այն անհաջող ընթացք ունեցավ: **1190 թ.** Կիլիկիայի գետերից մեկն անցնելիս խեղդվեց Ֆրիդրիխ I–ը: Գերմանացի խաչակիրները վերադարձան:

Մահմեդականների պատկերացումները խաչակիրների մասին

Ինչ վերաբերում է հյուսիսային մարդկանց, ապա դրանք այնպիսի էակներ են, որոնց համար արևը հեռանում է կիզակետից, երբ իրենք հեռանում են հյուսիս, ինչպես սլավոնները, ֆրանկները և մյուս ազգությունները, որոնք ապրում են իրենց հարևանությամբ: Արևի ուժը նրանց մոտ թույլ է, քանի որ այն հեռու է իրենցից, ցուրտը և մշուշը գերակշռում են նրանց երկրում, ձյունը և սառույցը փոխարինում են միմյանց, բնավորության ջերմությունը հազվադեպ է նրանց մոտ, նրանց մարմինները մեծ են, բնավորությունը՝ գռեհիկ, պահվածքը՝ կոպիտ, հասկացողությունը՝ բութ, լեզուն՝ ծանր:

Ժամանելով Սուրբ երկիր՝ Ֆիլիպ II–ը գրավեց **Ակրա քաղաքը,** որը դարձավ Երուսաղեմի թագավորության մայրաքաղաքը: Շուտով Ֆիլիպ II–ը վերադարձավ Ֆրանսիա: Մնալով միայնակ՝ Ռիչարդը ստիպված եղավ Սալահ ադ Դինի հետ **1192 թ.** հաշտության պայմանագիր ստորագրել: Եվրոպայի ուխտավորները հնարավորություն ստացան անարգել այցելել սուրբ վայրեր:

Սալահ ադ Դին

ԽԱՉԱԿՐԱՑ ՇԱՐԺՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Երեք արքաների արշավանքից հետո խաչակրաց շարժումը անկում ապրեց: Շարժման հեղինակությանը մեծ հարված հասցրեց խաչակրաց չորրորդ արշավանքը: Դրա մասնակիցները **1204 թ.** գրավեցին և երեք օր շարունակ կողոպտեցին Կոստանդնուպոլիսը:

Հաջորդ չորս արշավանքները ևս ավարտվեցին անարդյունք: **1291 թ.** մուսուլմանները հետ գրավեցին խաչակիրների վերջին հենակետ Ակրան:

Խաչակրաց արշավանքներն ունեցան նաև դրական հետևանքներ: Եվրոպացիները մոտիկից ծանոթացան արևելյան մշակույթին: Նրանք մշակութային շատ արժեքներ տեղափոխեցին Եվրոպա:

Եվրոպացիները Արևելքից սովորեցին ավելի որակյալ նավեր կառուցել, ճշգրիտ քարտեզներ գծել, օգտագործել մագնիսական կողմնացույցներ:

Արշավանքների հետևանքով Արևմուտք–Արևելք փոխհարաբերությունները սերտացան և դարձան մշտական:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հռոմի պապ Ուրբանոս II–ը ե՞րբ և որտե՞ղ Երուսաղեմը գրավելու կոչ արեց:
2. Բացատրե՛ք «խաչակիր» հասկացությունը:
3. Որո՞նք էին խաչակրաց շարժման պատճառները: Թվարկե՛ք դրանք:
4. Ե՞րբ է սկսվել խաչակրաց առաջին արշավանքը: Ներկայացրե՛ք դրա հիմնական արդյունքները:
5. Ի՞նչ է հոգևոր–ասպետական միաբանությունը: Թվարկե՛ք Արևելքում առաջացած հոգևոր–ասպետական միաբանությունները:
6. Ո՞վ էր Սալահ ադ Դինը: Ի՞նչ արդյունքների հասավ նա խաչակիրների դեմ պայքարում:
7. Ո՞ր իրադարձությունը պատճառ դարձավ խաչակրաց երրորդ արշավանքի համար: Ե՞րբ է այն սկսվել, և ովքե՞ր գլխավորեցին այդ արշավանքը: Որո՞նք էին դրա հիմնական արդյունքները:
9. Որո՞նք էին խաչակրաց շարժման հետևանքները:

Քննարկման հարց

Ձեր կարծիքով՝ ո՞րն էր խաչակրաց արշավանքների գլխավոր նպատակը:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Կլերմոն, Ուրբանոս II, խաչակիր, Բալդուին, Թորոս Կյուրապաղատ, Եդեսիայի կոմսություն, Անտիոքի դքսություն, Երուսաղեմի թագավորություն, հոգևոր–ասպետական միաբանություններ, Սալահ ադ Դին, Ֆրիդրիխ I Բարբարոսա, Ռիչարդ I Առյուծասիրտ, Ֆիլիպ II Օգոստոս, Ակրա

§11. XIII ԴԱՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՏԻՐԱԿԱԼՆԵՐԸ

ՊԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԻՆ

XIII դարի սկզբին Հռոմի պապերի իշխանությունն աննախադեպ վերելք ապրեց: Դա կապված էր **Ինոկենտիոս III պապի** (1198–1216) գործունեության հետ:

Հռոմի պապը ղեկավարում էր կաթոլիկություն ընդունած եվրոպական երկրների եկեղեցիները: Նրանք պարտավոր էին հարկեր վճարել պապական արքունիքին: Պապականությունը դարձել էր նաև համաեվրոպական բարձրագույն դատական ատյան: Այստեղ ընդունված որոշումները վերջնական էին և այլևս չէին բողոքարկվում:

Ինոկենտիոս III պապը փայլուն կրթություն էր ստացել: Նա Փարիզում սովորել էր աստվածաբանություն, իսկ Բոլոնիայի համալսարանում՝ հռոմեական իրավունք: Նրա կարծիքով՝ Հռոմի պապի իշխանությունը բարձրագույն իշխանություն է, քանի որ տրված է Աստծո կողմից: Նա գտնում էր, որ պապը Քրիստոսի փոխանորդն է երկրի վրա: Այս պատճառով բոլոր կայսրերը և թագավորները պետք է ենթարկվեն Հռոմի պապին: Նրան էին ենթարկվում Անգլիայի, Պորտուգալիայի, Լեհաստանի, Դանիայի և Շվեդիայի թագավորները: Ինոկենտիոս III–ը կազմակերպեց խաչակրաց չորրորդ արշավանքը: Նրա կոչով խաչակրաց արշավանքներ կազմակերպվեցին Հարավային Ֆրանսիայի հերետիկոսների և Մերձբալթիկայի հեթանոս բնակչության դեմ:

Ինոկենտիոս III

Սրբազան հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ II

ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼ ՄԻԱՊԵՏԸ

Ֆրիդրիխ II–ը Ֆրիդրիխ I Բարբարոսայի թոռն էր: Մանուկ հասակում նրա խնամակալությունը տրվել էր Ինոկենտիոս III պապին: Ֆրիդրիխ II–ը փայլուն կրթություն ստացավ, գիտեր հունարեն և արաբերեն: Նա գիտական երկեր էր գրում լատիներենով, իսկ բանաստեղծություններ՝ իտալերենով: Նրա արքունիքում աշխատում էին հույն, հրեա և արաբ գիտնականներ: Ֆրիդրիխը **Նեապոլ** քաղաքում հիմնադրեց համալսարան:

Ֆրիդրիխ II–ը մորից ժառանգել էր **Սիցիլիական թագավորությունը:** Ինոկենտիոս III–ի ջանքերով նա ընտրվեց նաև Գերմանիայի թագավոր, իսկ **1220 թ.՝** Սրբազան հռոմեական կայսրության կայսր:

1228 թ. Ֆրիդրիխ II–ը կազմակերպեց խաչակրաց VI արշավանքը: Ռազմական գործողություններ վարելու փոխարեն նա Եգիպտոսի սուլթանի հետ համաձայնագիր ստորագրեց: **Երուսաղեմը, Նազարեթը** և **Բեթղեհեմը** ժամանակավորապես վերադարձվեցին քրիստոնյաներին:

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԸ

Ըստ ավանդույթի՝ ամեն օր Ֆրանսիայի թագավոր **Լյուդովիկոս IX–ը** դուրս էր գալիս պալատից, նստում կաղնու տակ և արդարորեն դատում նրանց, ովքեր դիմել էին իրեն: Ժամանակակիցների համար Լյուդովիկոսի գահակալությունը (1226–1270) օրինակելի կառավարման ժամանակաշրջան էր: Պատա-

հական չէ, որ մահվանից քսան տարի անց նա դասվեց սրբերի շարքին:

Նրա օրոք Ֆրանսիայում ամրապնդվեց թագավորական իշխանությունը: **Թագավորական խորհրդից** առանձնացավ **Փոքր խորհուրդը,** որը դարձավ մշտական խորհրդակցական մարմին: Թագավորական խորհրդի մյուս մասը ստացավ **«Փարիզի խորհրդարան»** անվանումը և վերածվեց բարձրագույն դատական ատյանի: Թագավորական խորհրդի այն մասը, որը զբաղվում էր ֆինաններով, ստացավ **«Հաշվային պալատ»** անվանումը: Նա վերահսկում էր հարկերի գանձումը և ծախսերը:

Լյուդովիկոսը իրականացրեց նաև դրամական բարեփոխում: Թագավորական դրամը միակն էր, որ ամբողջ երկրում շրջանառության իրավունք ստացավ: Դա նպաստեց Ֆրանսիայի տնտեսության զարգացմանը:

Թագավորական տիրույթում արգելվեցին ավատատերերի միջև տեղի ունեցող պատերազմները: Մտցվեց **«Արքայի 40 օր» կոչվող օրենքը:** Բախման մեջ հայտնված կողմերը քառասուն օրվա ընթացքում պետք է դիմեին թագավորին: Պատերազմել կարող էին միայն այն դեպքում, երբ թագավորի միջնորդությամբ չէին հաշտվում: Արգելվեց վեճերի լուծումը մենամարտերի միջոցով:

Լյուդովիկոս IX Սուրբ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ւմ անվան հետ է կապված պապականության հզորացումը XIII դ. սկզբին:
2. Ինոկենտիոս III–ի կարծիքով՝ Հռոմի պապի իշխանությունը գերագահ էր աշխարհիկ իշխանության նկատմամբ: Ինչպե՞ս էր նա հիմնավորում իր տեսակետը:
3. Ո՞ւմ օգնությամբ և ե՞րբ Ֆրիդրիխ II–ը դարձավ Սրբազան հռոմեական կայսրության կայսր:
4. Ի՞նչ համաձայնագիր ստորագրեց Ֆրիդրիխ II–ը Եգիպտոսի սուլթանի հետ:
5. Ինչպե՞ս էր կոչվում Լյուդովիկոս IX–ի ստեղծած մշտական խորհրդակցական մարմինը:
6. Ի՞նչ գործառույթներ էին իրականացնում «Փարիզի խորհրդարանը» և «Հաշվային պալատը»:
7. Պարզաբանե՛ք «Արքայի 40 օր» օրենքի բովանդակությունը և նշանակությունը:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Ինոկենտիոս III, Ֆրիդրիխ II, Սիցիլիական թագավորություն, Լյուդովիկոս IX, Փոքր խորհուրդ, «Փարիզի խորհրդարան», «Հաշվային պալատ», թագավորական տիրույթ, «Արքայի 40 օր»

§12. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ XI–XIII ԴԱՐԵՐՈՒՄ

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ

Քրիստոնեական եկեղեցու պառակտումը սկսվեց Հռոմեական կայսրության բաժանումից հետո: Այն առաջին հերթին դրսևորվում էր ծիսակատարությունների լեզվի հարցում: Արևմուտքում ժամասացությունը կատարվում էր միայն լատիներենով, իսկ Արևելքում՝ հունարենով կամ ազգային լեզուներով: Որոշ տարբերություններ կային եկեղեցական ծիսակարգերում: Հռոմի պապերը և Կոստանդնուպոլսի պատրիարքները մրցում էին Եվրոպայի և Արևելքի երկրների բոլոր եկեղեցիների նկատմամբ գերիշխանություն հաստատելու համար: Երկու եկեղեցիների պայքարը հաճախ վերաճում էր փոխադարձ թշնամության:

Պայքարի բարձրակետը վրա հասավ **1054 թ.՝** Հարավային Իտալիայի եկեղեցիների պատկանելության շուրջ ծագած վեճի հետևանքով: Հռոմի պապ **Լևոն IX–ի** ներկայացուցիչները Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարում տեղի ունեցող արարողության ժամանակ հայտարարեցին պատրիարք **Միքայելի** բանադրության և եկեղեցուց վտարման մասին: Վերջինս նույնը հայտարարեց Հռոմի պապի նկատմամբ:

Դրանից հետո երկու եկեղեցիները խզեցին միմյանց հետ բոլոր կապերը: Այսպես առաջացան **կաթոլիկ** և **ուղղափառ** եկեղեցիները: Միայն ինը դար անց՝ 1965 թ. Վատիկանի ժողովում երկու եկեղեցիների

ղեկավարները համաձայնվեցին մոռացության տալու փոխադարձ բանադրանքները:

ՀԵՐԵՏԻԿՈՍՆԵՐ

Պաշտոնապես ընդունված հավատի կանոններից որևէ շեղում համարվում էր հերետիկոսություն: Հերետիկոսները մերժում էին խաչի պաշտամունքը, հոգևորականների անհրաժեշտությունը, մարդու մեղսածին լինելու և եկեղեցու միջնորդությամբ փրկվելու գաղափարը: Հերետիկոսական շարժումները մեծ տարածում ստացան XII–XIII դարերում: Այդ ժամանակաշրջանի ամենատարածված

Սրբազան ինկվիզիցիա

Կատարների (կատար՝ մաքուր) հերետիկոսությունն ընդգրկում էր Հարավային Ֆրանսիան: Այն հետևորդներ ուներ նաև Հյուսիսային Իտալիայում: Կատարները գոյություն ունեցող կարգերը համարում էին ոչ թե Աստծո, այլ սատանայի ստեղծածը: Այս պատճառով նրանք բացասաբար էին վերաբերվում պետությանը, օրենքներին, դատարանին և բանակին:

Վալդենսների աղանդի հիմնադիրը Լիոն քաղաքի հարուստ վաճառական Պիեռ Վալդոն էր: Նա հրաժարվեց իր ամբողջ ունեցվածքից՝ այն բաժանելով չքավորներին: Նա քարոզում էր, որ հոգևորականները դարձել են «ձրի վայելողներ», ուստի անհրաժեշտ է վերացնել եկեղեցին:

Հարավային Ֆրանսիայի հերետիկոսների դեմ պայքարելու համար Ինոկենտիոս III պապը կազմակերպեց խաչակրաց արշավանք: Խաչակիրները չէին խնայում նույնիսկ կանանց և երեխաներին: Երբ արշավանքի մասնակիցները պապի ներկայացուցչին հարցրին, թե ինչպես տարբերեն հերետիկոսներին կաթոլիկներից, նա պատասխանեց. «Բոլորին կոտորե՛ք: Տերը յուրայիններին կճանաչի»:

հերետիկոսություններից էին **կատարները** և **վալդենսները:** Նրանք լայն գործունեություն էին ծավալել Հարավային Ֆրանսիայում: Եկեղեցին պետության հենարանն էր: Եկեղեցու դեմ ուղղված որևէ շարժում ոտնձգություն էր համարվում պետության դեմ, ու դրա նկատմամբ անխնա պայքար էր տարվում:

Միջնադարյան մարդու հոգևոր խնդիրներից էր մեղքերից ազատվելը, որպեսզի դրախտում ապրելու իրավունք վաստակի: Այս խնդիրը պետք է լուծեին հավատը և եկեղեցին: Եկեղեցին քարոզում էր հնազանդություն, հրաժարվել երկրային բարիքներից, սակայն ինքը կուտակում էր մեծ հարստություն: Այս պատճառով մարդիկ սկսում էին կասկածել՝ կարող է արդյոք եկեղեցին մարդկանց ապահովել փրկություն:

ԻՆԿՎԻԶԻՑԻԱ (ՀԱՎԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ)

Պապականությունը հասկանում էր, որ միայն զենքով հնարավոր չէ արմատախիլ անել հերետիկոսական գաղափարները: «Կեղծ ուսմունքների դեմ» պայքարելու համար **Լաթերանի եկեղեցական ժողովի (1215 թ.)** որոշմամբ ստեղծվեց **ինկվիզիցիան:** Այն հատուկ դատարան էր, որը հետաքննում էր միայն հերետիկոսների գործերը: Եպիսկոպոսական բոլոր թեմերում ստեղծվեցին ինկվիզիցիայի դատարաններ, որոնք անմիջապես ենթարկվում էին պապին: Հետաքննության ընթացքում տանջում և խոշտանգում էին մարդկանց:

Ինկվիզիցիան հատկապես լայն գործունեություն ծավալեց XVI դարում Իսպանիայում և Իտալիայում:

«ՄՈՒՐԱՑԻԿ» ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հերետիկոսների դեմ արդյունավետ պայքարելու համար պապականությունը ստեղծեց նաև **«մուրացիկ» միաբանություններ:**

Իտալացի **Ֆրանսիսկ Ասիզցին,** ծանոթանալով վալդենսների գաղափարներին, հրաժարվում է ընտանիքից, ունեցվածքից և իրեն նվիրում է աղոթքների և քարոզչության: Նա իր կողմնակիցներից պահանջում էր, որ նրանք առաքյալների նման աշխատեին հրաժարվել ունեցվածքից և ապրել սեփական աշխատանքով: Մուրացիկ վանականները բոկոտն թափառում էին քաղաքներում ու գյուղերում: Այդ պատճառով նրանք մեծ հարգանք ձեռք բերեցին ժողովրդի մեջ:

Գլխավոր ինկվիզիցիան

Ինոկենտիոս III պապը հասկացավ, որ կարող է նրանց օգտագործել եկեղեցու խախտված հեղինակությունը բարձրացնելու համար: Նրա ջանքերով ստեղծվեց **Ֆրանսիսկյան միաբանությունը:** Այն քարոզչական լայն գործունեություն ծավալեց նաև ոչ կաթոլիկ երկրներում՝ այդ թվում նաև Հայաստանում: Սրբերի շարքին դասված Ֆրանսիսկ Ասիզցին համարվում է Իտալիայի հովանավոր սուրբը:

Մյուս «մուրացիկ» միաբանությունը **Դոմինիկյանն** էր, որի հիմնադիրը իսպանացի **Դոմինիկ դե Գուսմանն** էր: Նա հասկացել էր, որ հերետիկոսների դեմ քարոզչական պայքար մղելու համար անհրաժեշտ են մարդիկ, ովքեր նրանց չզիջեն ո՛չ սրբակյաց կյանքով և ո՛չ էլ աստվածաբանական գիտելիքներով: Այս նպատակով նա կազմակերպեց քարոզիչների միաբանություն: Դոմինիկյանները պատրաստում էին բանիմաց և կրթված քարոզիչներ: Միաբանության զինանշանի վրա պատկերված էր երախում ջահ բռնած շուն: Դա կապված էր Դոմինիկ անվան բառախաղի հետ: Լատիներեն այն նշանակում է «Տիրոջ գամփռ»: Դոմինիկյան միաբանության անդամներ էին նաև XIII դարի խոշորագույն գիտնականներ **Ալբերտ Մեծը** և **Թովմա Աքվինացին:** Դոմինիկյանները քարոզչական լայն գործունեություն ծավալեցին Արևելքում: XIII դ. երկրորդ կեսին նրանք նույնիսկ հասել էին Չինաստան:

Դոմինիկ դե Գուսման

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. 1054 թ. քրիստոնեական եկեղեցին ինչո՞ւ պառակտվեց:
2. Ե՞րբ կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների ղեկավարները հանեցին փոխադարձ բանադրանքները:
3. Ի՞նչ է հերետիկոսությունը: Հերետիկոսական ի՞նչ շարժումներ կարող եք նշել:
4. Ինչո՞ւ էին պետությունը և եկեղեցին անխնա պայքարում հերետիկոսների դեմ:
5. Ե՞րբ և ո՞ր ժողովի որոշմամբ է հիմնադրվել ինկվիզիցիան, ի՞նչ նպատակով: Ո՞ր երկրներում էր տարածված ինկվիզիցիան:
6. Ո՞վ էր Ֆրանսիսկ Ասիզցին:
7. Թվարկե՛ք հայտնի «մուրացիկ» միաբանությունները: Ի՞նչ դեր էին խաղում դրանք:

Նոր հասկացություններ, անուններ

1054 թ. պառակտում, կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիներ, հերետիկոսություն, կատարներ, վալդեսներ, ինկվիզիցիա (հավատաքննություն), Ֆրանսիսկյան և Դոմինիկյան «մուրացիկ» միաբանություններ, Լաթերանի եկեղեցական ժողով, Ֆրանսիսկ Ասիզցի, Դոմինիկ դե Գուսման, Ալբերտ Մեծ, Թովմա Աքվինացի

§13. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Վաղ միջնադարում դպրոցները հիմնականում գործում էին վանքերին ու եկեղեցիներին կից: Դրանց նպատակը կրթված հոգևորականներ պատրաստելն էր: Աշակերտները նախ սովորում էին գրել և կարդալ, ապա սկսվում էր **«յոթ ազատ արվեստների»** ուսուցումը: Դրանք էին՝ քերականությունը, տրամաբանությունը, թվաբանությունը, ճարտասանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը, աստղաբաշխությունը: Ուսուցման լեզուն լատիներենն էր:

XII–XIII դարերում Եվրոպայի տնտեսական և մշակութային կյանքում առաջընթաց կարևոր փոփոխություններ տեղի ունեցան: Զարգացան արհեստները և առևտուրը: Հասարակությունը նոր մասնագետների կարիք ուներ: Եվրոպացիները ծանոթացան բյուզանդական և արևելյան, մասնավորապես արաբական կրթական համակարգի հետ: Քաղաքներում բացվում էին դպրոցներ, որտեղ ուսուցանում էին նաև աշխարհիկ գիտելիքներ: Մեծ համբավ էին վայելում Բոլոնիայի իրավաբանական, Սալերնոյի բժշկական և Փարիզի աստվածաբանական դպրոցները: Այսպիսի դպրոցների հիմքի վրա էլ հետագայում ստեղծվեցին համալսարանները:



Բոլոնիայի համալսարանի կնիքը

Գերմանացի ուսանողները Բոլոնիայի համալսարանում

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

Եվրոպայում հնագույնը **Բոլոնիայի հա-**

Դպրոցը XIV դարում

մալսարանն է: Այն հիմնադրվել է XI դարում: Հետո բացվեցին Փարիզի, Օքսֆորդի, Քեմբրիջի համալսարանները: Արդեն XIV դարում Եվրոպայում կար շուրջ 60 համալսարան:

XI դարից Հայաստանում ևս սկզբնավորվում և զարգանում է համալսարանական կրթությունը: Նշանավոր էին Անիի, Գլաձորի, Տաթևի, իսկ Կիլիկյան Հայաստանում՝ Սսի համալսարանները:

Համալսարանը բաժանվում էր ֆակուլտետների: **Ֆակուլտետի** ղեկավարը **դեկանն** էր, իսկ համալսարանի ընդհանուր ղեկավարը՝ **ռեկտորը:**

Առաջին համալսարաններն ունեին աստվածաբանական, փիլիսոփայական, իրավաբանական և բժշկական ֆակուլտետներ:

Գրքերի պակասության պատճառով ուսուցումը հիմնականում կազմակերպվում էր դասախոսությունները գրի առնելու միջոցով: Դասավանդման ընթացքում լայնորեն կիրառում էին գիտական բանավեճեր և երկխո-

սություններ:

ՍՔՈԼԱՍՏԻԿԱ

Համալսարանում դասավանդվող առարկաները միասին կոչվում էին **սքոլաստիկա** (լատիներեն **սքոլա**՝ դպրոց բառից): Սքոլաստիկայի մեջ մտնում էին ինչպես «յոթ ազատ արվեստները», այնպես էլ նոր ձևավորվող գիտությունները: Սքոլաստաստվածաբանները փորձում էին ապացուցել, որ հավատը և գիտելիքը ոչ թե հակադիր են միմյանց, այլ օգնում են իմանալու ճշմարտությունը:

Թովմա Աքվինացին (XIII դ.) միջնադարի խոշորագույն սքոլաստներից էր: Նա փորձում էր քրիստոնեությունը հաշտեցնել «հեթանոս» Արիստոտելի ուսմունքի հետ: Աքվինացին կարծում էր, որ գոյություն ունի գիտելիքի երկու աղբյուր՝ հավատը, որն ապահովում է բարձրագույն գիտելիքի ձեռքբերումը, և բանականությունը: Սակայն Թովմա Աքվինացին ուներ նաև գաղափարական հակառակորդներ, որոնց կարծիքով գիտելիքի ձեռքբերման հիմքը և աղբյուրը բանականությունն ու փորձն են:

Թովմա Աքվինացի

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Միջնադարում առաջընթաց ապրող հասարակությունը կարիք ուներ նաև կիրառական գիտելիքների: Ուստի զարգացան մաթեմատիկան և մեխանիկան: Սկսեցին թարգմանել անտիկ և արաբ գիտնականների այն աշխատությունները, որոնք վերաբերում էին բնական գիտություններին:

Ռոջեր Բեկոն

Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր **Ռոջեր Բեկոնը (XIII դ.)** կարծում էր, որ միայն փորձը կարող է տալ ճշմարիտ գիտելիք: Նա իր ամբողջ կյանքն անցկացրեց անտիկ և արաբական ձեռագրեր ուսումնասիրելով, ֆիզիկայի և քիմիայի բնագավառի փորձեր կատարելով: Նա արեց մի շարք կանխատեսումներ՝ առանց թիավարների նավարկելու, առանց քաշող ուժի սայլակառքերի տեղաշարժման, թռչող մեքենաների, խոշորացնող սարքերի մասին: Նա առաջինն էր Եվրոպայում, որ կազմեց վառոդի ստացման բաղադրագիրը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն էր վաղ միջնադարի դպրոցների գլխավոր նպատակը: Թվարկե՛ք «յոթ ազատ արվեստները»:
2. Զարգացած միջնադարում դպրոցների թվի ավելացումը ինչի՞ հետ էր կապված: Նշե՛ք մեծ համբավ ունեցող դպրոցները:
3. Եվրոպայի առաջին համալսարանը որտե՞ղ և ե՞րբ է հիմնադրվել:
4. Քանի՞ համալսարան կար Եվրոպայում XIV դարում: Իսկ Հայաստանում XI–XIV դարերում ի՞նչ համալսարաններ էին գործում, թվարկե՛ք դրանք:
5. Ներկայացրե՛ք համալսարանի կառուցվածքը:
6. Ի՞նչ է սքոլաստիկան:
7. Ո՞րն էր բնագիտության զարգացման գլխավոր պատճառը:
8. Համեմատե՛ք Թ. Աքվինացու և Ռ. Բեկոնի տեսակետները գիտելիքների աղբյուրի մասին:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

«Յոթ ազատ արվեստներ», Բոլոնիայի, Փարիզի, Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններ, ֆակուլտետ, դեկան, ռեկտոր, սքոլաստիկա, Թովմա Աքվինացի, Ռոջեր Բեկոն

ԲԱԺԻՆ 2 ԱՄՓՈՓՈՒՄ

1. Անկում ապրած Հին աշխարհի փլատակների վրա ձևավորվեց ավատատիրական հասարակարգը: Ավատատիրական հասարակության տնտեսական հիմքը հողն էր: Գյուղի բնակչության կյանքը կարգավորում էր համայնքը: Քաղաքային բնակչությունը հիմնականում զբաղվում էր արհեստագործությամբ և առևտրով:

   Ինչ է ավատը: Ներկայացրեք ավատատիրական ատրիճանակարգությունը: Որոնք էին քաղաքների առաջացման նախադրյալները:

2. XI դ. վերջին խաչակրաց առաջին արշավանքով սկսվեց խաչակիրների դարաշրջանը: Այն տևեց մինչև XIII դ. վերջը: Խաչակրաց դարաշրջանում եվրոպացիները մոտիկից ծանոթացան արևելյան մշակույթին և իրենց երկրներ տարան մշակութային շատ արժեքներ:

   Որոնք էին խաչակրաց շարժման նպատակները: Երբ և ինչ խաչակրաց պետություններ ստեղծվեցին: Շարժման մասնակիցներից ո՞վ է Ձեր վրա տպավորություն թողել, ներկայացրեք նրա կերպարը: Ինչո՞ւ շարժումն ի վերջո անկում ապրեց:

3. XIII դարում պատմական ասպարեզում հայտնվեցին պետական մի շարք գործիչներ, որոնք խոր հետք են թողել Եվրոպայի պատմության մեջ: Նրանցից դուք ծանոթացել եք Հռոմի պապ Ինոկենտիոս III –ի, Ֆրիդրիխ II կայսեր և Լյուդովիկոս IX թագավորի գործունեությանը:

   Ձեր կարծիքով՝ ինչի՞ շնորհիվ Ինոկենտիոս III պապը այդպիսի հզորության հասավ: Ինչո՞վ է նշանավոր Ֆրիդրիխ II–ը: Ներկայացրեք Լյուդովիկոս IX–ի բարեփոխումները, արժևորեք դրանք:

4. Քրիստոնեությունը սկզբում հանդես էր գալիս որպես մեկ միասնական համաշխարհային կրոն: Սակայն շուտով հակասություններ ծագեցին Արևմտյան և Արևելյան եկեղեցիների միջև: XII–XIII դդ. մեծ տարածում գտան նաև հերետիկոսական շարժումները:

Ո՞րն է քրիստոնեական եկեղեցու 1054 թ. բաժանման գլխավոր պատճառը: Հերետիկոսությունների դեմ պայքարելու համար ինչ նոր մարմիններ ստեղծեց պապականությունը:

5. Քրիստոնեության հաղթանակից հետո եկեղեցին իր ձեռքը վերցրեց հասարակության կրթական գործի կազմակերպումը: Զարգացած միջնադարում հասարակությունը աշխարհիկ գիտելիքներ ունեցող մարդկանց կարիք ուներ և նման մասնագետներ պատրաստելու համար առաջացան նոր տիպի ուսումնական հաստատություններ՝ համալսարաններ: Զարգացավ նաև գիտությունը:

Ինչը նպաստեց կրթական գործի զարգացմանը: Որոնք էին յոթ ազատ արվեստները: Թվարկեք XI–XIV Եվրոպայի հայտնի համալսարանները. այդ նույն դարերում Հայաստանում նշանավոր ինչ համալսարաններ կային: Ինչո՞ւ բնագիտությունը սկսեց զարգանալ: Ովքե՞ր են Թովմա Աքվինացին և Ռոջեր Բեկոնը:

ԲԱԺԻՆ 3 ՄԻՋՆԱԴԱՐԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

§14. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒՄԸ

ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

XIV դարից Արևմտյան Եվրոպայում ավատատիրությունը սկսեց անկում ապրել: Այն ուղեկցվում էր տնտեսական ճգնաժամով և բնակչության թվաքանակի կրճատումով: Տնտեսության անկումն առաջին հերթին նկատվում էր գյուղատնտեսության մեջ: Այն կասեցնելու համար ավատատերերն իրենց հողերը բաժանում էին գյուղացիներին կամ դրանք մշակելու համար օգտագործում էին վարձու աշխատողների:

Փրկագին վճարելով՝ գյուղացիները **ազատ տեղաշարժվելու իրավունք** էին ստանում: Նրանք կարող էին ազատորեն ամուսնանալ, ժառանգել հող և շարժական գույք: Սակայն հողային սեփականության իրավունքը դեռևս պատկանում էր ավատատիրոջը:

Անկում էր ապրում նաև արհեստագործությունը: Համքարային կանոնադրությունը, որը սահմանում էր արտադրանքի քանակը, չափը և որակը, խանգարում էր արտադրության հետագա ընդլայնմանը:

Առաջացան **մանուֆակտուրաներ:** Մանուֆակտուրան ձեռքի աշխատանքի վրա հիմնված ձեռնարկություն էր, որտեղ աշխատում էին վարձու բանվորներ: Եթե համքարային արհեստանոցում ապրանք արտադրելուն սովորաբար մասնակցում էր 1–5 մարդ, ապա

մանուֆակտուրայում՝ ավելի շատ:

Քաղաքների զարգացման հետևանքով մեծանում էր քաղաքային բնակչության թվաքանակը: Քաղաքը դառնում էր հասարակության տնտեսական և մշակութային կյանքի կենտրոն:

Հասարակությունն այժմ բաղկացած էր ոչ միայն ազնվականներից, հոգևորականներից և գյուղացիներից, այլև քաղաքացիներից:

ԴԱՍԱՅԻՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Հասարակության ներսում կատարված տեղաշարժերը էական ազդեցություն ունեցան նաև պետության կառավարման ձևի վրա: Ֆինանսական միջոցների պակասը թագավորներին ստիպում էր դրամ վերցնել բնակչության տարբեր խմբերից, մասնավորապես քաղաքացիներից: Դասերը թագավորի պահանջները քննարկում էին իրենց ներկայացուցիչների ժողովում: Այսպես թագավորին կից ստեղծվեցին դասերի ներկայա-

Աշխատանքը մանուֆակտուրայում

ցուցիչների ժողովներ: Ձևավորվեց նոր տիպի պետություն՝ **դասային միապետությունը:**

Այսուհետև երկրի համար կարևոր խնդիրների վերաբերյալ օրենքներն ընդունում էր ոչ թե միապետը, այլ դասային ներկայացուցիչների ժողովը:

XIII դ. ձևավորվեց անգլիական խորհրդարանը **(պառլամենտը):** Այն ուներ երկու՝ **Լորդերի** (վերին) և **Համայնքների** (ստորին) պալատներ: Առաջինում նիստեր էին անում բարձրաստիճան հոգևորականները և բարոնները, իսկ երկրորդում՝ ասպետները և քաղաքացիները:

Պապականության հետ պայքարի արդյունքում Ֆրանսիայում նույնպես ձևավորվեց դասային միապետություն: Ֆրանսիական եկեղեցու և պապական արքունիքի փոխհարաբերությունների հետ կապված խնդիրները քննարկելու համար **Ֆիլիպ IV Գեղեցիկ** թագավորը **1302 թ.** հրավիրեց դասերի ներկայացուցիչների ժողով՝ **Գլխավոր շտատներ** (դասեր): Այն բաղկացած էր երեք դասերի՝ հոգևորականության, ազնվականության և քաղաքների ներկայացուցիչների պալատներից:

Դասային ներկայացուցիչների ժողովներ առաջացան նաև Գերմանիայում՝ **ռայխստագը,** Իսպանիայում՝ **կորտեսները:**

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Լորդերի (վերին) պալատ

Համայնքների (ստորին) պալատ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Ամբողջ XIV դարում Եվրոպան ցնցվում էր գյուղացիական ապստամբություններից: Գյուղացիներն ակտիվորեն մասնակցում էին հերետիկոսական շարժումներին:

1358 թ. գյուղացիական ապստամբություն տեղի ունեցավ Ֆրանսիայում, որը հայտնի է

Ֆրանսիայի գյուղացիական ապստամբությունը

Ժակերիա անվանումով: Դրան մասնակցում էր մոտ 100 հազար մարդ: Ապստամբությունը ղեկավարում էր **Գիյոմ Կալը:** Ապստամբների դրոշի վրա պատկերված էր Ֆրանսիայի արքայատան զինանշանը՝ շուշան: Սա նշանակում է, որ գյուղացիները հավատում էին, որ եթե կառավարի «բարի» թագավոր, ապա իրենք կսկսեն լավ ապրել: Սակայն ֆրանսիական ազնվականությունը կարողացավ արագորեն համախմբել իր ուժերը և ճնշել ապստամբությունը:

1381 թ. Ուոտ Թայլերի գլխավորությամբ գյուղացիական ապստամբություն տեղի ունեցավ Անգլիայում: Ապստամբները պահանջում էին վերացնել եկեղեցուն տրվող տասանորդ հարկը, բռնագրավել եկեղեցական հողերը և բաժանել գյուղացիներին, վերացնել դասերի միջև եղած անհավասարությունը: Սակայն թագավորի հետ բանակցությունների ժամանակ Թայլերը սպանվեց: Այս ապստամբությունը ևս ավարտվեց գյուղացիների պարտությամբ: XIV դ. գյուղացիական ապստամբություններ տեղի ունեցան նաև Իտալիայում, Գերմանիայում, Հունգարիայում, Բյուզանդիայում:

Ուոտ Թայլերի սպանությունը

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. XIX դ. սկսած Արևմտյան Եվրոպայում ինչ փոփոխություններ տեղի ունեցան գյուղացիների դրության մեջ:
2. Ինչ է մանուֆակտուրան:
3. Թվարկեք այս ժամանակաշրջանի հասարակության հիմնական դասերը:
4. Փորձեք բացատրել «դասային միապետություն» հասկացությունը: Ինչպես է այն առաջացել:
5. Ինչպես էին կոչվում Անգլիայում և Ֆրանսիայում ձևավորված ներկայացուցչական ժողովները:
6. XIV դարում գյուղացիական նշանավոր ինչ ապստամբություններ են տեղի ունեցել և որտեղ:
7. Որոնք էին ապստամբների գլխավոր պահանջները: Ինչու դրանք պարտությամբ ավարտվեցին:

Քննարկման հարց

XIV դ. ինչու էին գյուղատնտեսությունը և արհեստներն անկում ապրում:

Նոր հասկացություններ, անուններ

ազատ տեղաշարժվելու իրավունք, մանուֆակտուրա, դասային միապետություն, խորհրդարան, Լորդերի պալատ, Համայնքների պալատ, Ֆիլիպ IV Գեղեցիկ, Գլխավոր շտատներ, ռայխստագ, կորտեսներ, Ժակերիա, Գիյոմ Կալ, Ուոտ Թայլեր

§15. ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վաղ միջնադարում սկսվեց ժամանակակից Եվրոպայի ազգային լեզուների ձևավորումը: Դուք գիտեք, որ կաթոլիկ եկեղեցու արարողությունները կատարվում էին մարդկանց մեծ մասի համար անհասկանալի լատիներենով: Տարբեր երկրներում փորձեր էին անում եկեղեցական ժամասացությունը կատարել մայրենի լեզվով: Իսկ XIV դ. սկզբին ձևավորվեց եկեղեցին պետությունից անջատելու ուսմունքը:

Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր **Ջոն Ուիկլիֆը** կարծում էր, որ Հռոմի պապերը իրավունք չունեն խառնվելու անգլիական թագավորության և եկեղեցու գործերին: Նա ծրագրում էր ստեղծել Հռոմից անկախ անգլիական եկեղեցի, որի գլուխ կանգնելու էր

Ջոն Ուիկլիֆն ընթերցում է Աստվածաշնչի իր թարգմանությունը

Անգլիայի թագավորը: Ուիկլիֆի նախաձեռնությամբ Աստվածաշունչը թարգմանվեց անգլերեն: **1381 թ.** Ուիկլիֆի ուսմունքը հռչակվեց իբրև **«ազգային հերետիկոսություն»,** քանի որ այն փորձում էր ստեղծել ազգային եկեղեցի: Ի վերջո՝ ինկվիզիցիան հասավ նրան, որ գերեզմանից հանեցին Ուիկլիֆի ոսկորները և խարույկի վրա այրեցին:

Յան Հուս

Պրահայի համալսարանի պրոֆեսոր **Յան Հուսը** հանդես եկավ պապերի աշխարհիկ իշխանության և եկեղեցու հարստացման դեմ: Նա Աստվածաշունչը թարգմանեց չեխերեն և ձգտում էր ստեղծել չեխական ազգային եկեղեցի: Բանավեճի համար Հուսին հրավիրեցին եկեղեցական ժողով: Այստեղ նրան դատապարտեցին որպես հերետիկոսի և **1415 թ.** ողջակիզեցին խարույկի վրա:

Ազգային հերետիկոսությունները հող նախապատրաստեցին Եվրոպայի տարբեր

Դատապարտված Յան Հուսի ողջակիզումը

երկրներում ազգային եկեղեցիների առաջացման համար:

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

XI դարում էթնիկական տեղաշարժերը Եվրոպայում հիմնականում դադարեցին: Սկսվեց տարբեր ժողովուրդների կազմավորման գործընթացը:

Ժողովրդի կազմավորման կարևորագույն նախապայմաններից մեկը **ազգային լեզվի**

Ֆրանսիական ազգային պետության կազմավորումը

ձևավորումն է: Լեզվի շնորհիվ էր ստեղծվում նույնաբնույթ մշակույթ, հոգևոր միջավայր և ազգային ինքնագիտակցություն:

Այսպես՝ մինչև XI–XII դարերը Անգլիայում խոսում էին տարբեր լեզուներով և բարբառներով: Հետագայում Լոնդոնի բարբառի հիման վրա ձևավորվեց անգլերենը: Այն դարձավ խոսակցական և գրական լեզու ամբողջ Անգլիայի համար: **1362 թվականից** խորհրդարանի նիստերը և դատական քննարկումները տարվում էին անգլերենով:

Ժողովուրդների կազմավորմանը զուգահեռ Եվրոպայում ձևավորվում էին **ազգային պետություններ:** Ազգային պետությունում բնակչության մեծամասնությունն արդեն խոսում էր միևնույն լեզվով: Սա նպաստում էր նաև կենտրոնաձիգ թագավորական իշխանության առաջացմանը և ամրապնդմանը: Թագավորն այլևս չէր ենթարկվում Հռոմի պապին: XIV դարում ֆրանսիական և անգլիական թագավորները օրենքներ էին ընդունում, որոնք սահմանափակում էին պապերի իրավունքները այդ երկրների նկատմամբ:

Ժողովուրդների կազմավորումը և ազգային պետությունների ստեղծումը Եվրոպայում տեղի էր ունենում ոչ միաժամանակ: Ազգային պետությունների ստեղծման ճանապարհին պապականությունը միակ արգելքը չէր: Եվրոպայում դեռ երկար ժամանակ կենսունակ էին նախկին Հռոմեական կայսրության նման տերություն ստեղծելու ձգտումները: Այսպիսի պետություն էր Սրբազան հռոմեական կայսրությունը: Այն ներառում էր տարաբնույթ ժողովուրդներ և թույլ չէր տալիս, որ նրանք առանձնանան և ստեղծեն ազգային պետություններ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ պահանջներ առաջադրեցին տեղական եկեղեցիները կաթոլիկ եկեղեցուն:
2. Ինչո՞ւ Ջոն Ուիկլիֆի ուսմունքը հռչակվեց «ազգային հերետիկոսություն»: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ նրա հետ այդպես դաժան վարվեցին:
2. Ո՞վ էր Յան Հուսը և ինչո՞ւ նա դատապարտվեց:
3. Էթնիկական տեղաշարժերը Եվրոպայում ե՞րբ դադարեցին:
4. Ո՞ր բարբառի հիմքի վրա է ձևավորվել անգլերենը:
5. Հիմնականում ո՞ւմ դեմ հակամարտության պայմաններում ձևավորվեցին ազգային պետությունները:

Քննարկման հարց

Փորձե՛ք պարզաբանել ազգային լեզուների նշանակությունը ազգային պետությունների ձևավորման գործում:

Նոր հասկացություններ, անուններ

Ջոն Ուիկլիֆ, «ազգային հերետիկոսություն», Յան Հուս, ազգային լեզու, ազգային պետություն

§16. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԿԻԶԲԸ

Անգլիայի և Ֆրանսիայի միջև տարածքային վեճերը դարեր շարունակ չէին դադարում: XIV դարում դրանք երկարատև պատերազմի պատճառ դարձան: Պատմությանն այն հայտնի է **Հարյուրամյա պատերազմ** (1337–1453) անունով:

Անգլո–ֆրանսիական տարածքային հակամարտությունն առաջացել էր դեռևս XI դարում: Ֆրանսիայի հյուսիսում հաստատված նորմանների առաջնորդ **դուքս Վիլհելմը** գրավեց Անգլիան և 1066 թ. իրեն հռչակեց Անգլիայի թագավոր: Նա Ֆրանսիայի հյուսիսում իր Նորմանդիա դքսությունը միացրեց Անգլիային:

Շուտով անգլիական գահին անցավ Վիլհելմի թոռանը՝ Ֆրանսիայի Անժու մարզի **կոմս Հենրիխին:** Նրա տիրույթները ևս միացվեցին Անգլիային: Հենրիխի կնոջը պատկանող՝ Ֆրանսիայի հարավում գտնվող **Աքվիտանիայի դքսության** մի մասն էլ, որպես օժիտ, անցավ Անգլիային:

Փաստորեն, Անգլիան Ֆրանսիայում ավելի շատ տարածքներ ուներ, քան ֆրանսիական թագավորները: Այս տարածքների համար հերթական վեճը **1337 թ.** վերածվեց պատերազմի:

1346 թ. անգլիացիները գրավեցին **Կալե** նավահանգիստը: **1356 թ. Պուատիե** քաղաքի մոտ ֆրանսիացիները կրկին ծանր պարտություն կրեցին: Ֆրանսիայի թագավորը գերի ընկավ, իսկ երկրի ամբողջ հարավ–արևմուտքն անցավ Անգլիային:

Պուատիեի ճակատամարտը

Հարյուրամյա պատերազմը



ՕՌԼԵԱՆԻ ԿՈՒՅՍԸ

1415 թ. անգլիական բանակը նոր հարձակում սկսեց: Նրանք առանց դժվարության գրավեցին Փարիզը: Կնքված պայմանագրով Ֆրանսիան կորցրեց իր քաղաքական անկախությունը: Ֆրանսիայի անկախության համար սկսվեց ազատագրական պայքար: Այն գլխավորեց **Ժաննա դ'Արկը:**

Ժաննա դ'Արկը գյուղացու աղջիկ էր: Նա համոզված էր, որ Աստված իրեն է ընտրել Ֆրանսիան ազատագրելու համար: Ժաննան հանդիպեց Կարլոս VII թագավորի հետ և համոզեց զորք տրամադրել պաշարված **Օռլեանը** ազատագրելու համար: Ֆրանսիական բանա-

Ժաննա դ'Արկը Օռլեանի պաշարման ժամանակ



Հարյուրամյա պատերազմից հետո Անգլիայում պայքար սկսվեց հանուն իշխանության: Այն հայտնի է Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմ անվանումով: Իշխանությունը գրավելու համար պայքար սկսեցին Յորքի դուքսերը՝ Թյուդորները, որոնց զինանշանի վրա պատկերված էր սպիտակ վարդ: Նրանք պայքարում էին իշխող Լանքաստերների (սրանց զինանշանի վրա պատկերված էր կարմիր վարդ) դեմ: Երեսուն տարի տևած պատերազմից հետո իշխանությունը գրավեց Թյուդորների տոհմը:

Լյուդովիկոս XI

կը Ժաննայի գլխավորությամբ ազատագրեց Օռլեանը: Ժաննային սկսեցին անվանել Օռլեանի կույս: Այնուհետև Ժաննան Կարլոսին ուղեկցեց **Ռեյմս** քաղաք, ուր վերջինս օծվեց Ֆրանսիայի թագավոր: Այսպիսով՝ Ֆրանսիայի անկախությունը վերականգնվեց:

Կոմպիենի մոտ **1430 թ.** Ժաննան գերի ընկավ: Անգլիացիները նրան հանձնեցին ինկվիզիցիայի դատարանին, որը Ժաննային մեղադրեց հերետիկոսության և կախարդության մեջ: 19–ամյա Ժաննային ողջակիզեցին խարույկի վրա:

Պատերազմը շարունակվեց նոր ուժով: Ֆրանսիացիները հասան հաջողության և վերանվաճեցին կորցրած տարածքները: **1453 թ.** կնքվեց հաշտության պայմանագիր: Ֆրանսիայում անգլիացիներին մնաց միայն Կալե նավահանգիստը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Հարյուրամյա պատերազմում տարած հաղթանակը բարենպաստ պայմաններ ստեղծեց Ֆրանսիայի քաղաքական միավորումն ավարտելու համար: Այս խնդիրը հաջողությամբ լուծեց **Լյուդովիկոս XI–ը** (1461–1483): Նրա գլխավոր հակառակորդը **Բուրգունդիայի** դուքս **Կարլոս Խիզախն** էր: Վերջինս փորձում էր ստեղծել Ֆրանսիայից անկախ Բուրգունդիա պետությունը: Սակայն 1477 թ. բուրգունդցիները պարտություն կրեցին, իսկ դուքսը սպանվեց: Բուրգունդիայի դքսության մեծ մասն անցավ Ֆրանսիային:

Կարլոս Խիզախ

Միավորման ավարտից հետո Ֆրանսիան դարձավ **Եվրոպայի խոշորագույն ազգային պետությունը:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպե՞ս և ի՞նչ տարածքային վեճեր էին առաջացել Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Թվարկե՛ք Ֆրանսիայում անգլիական թագավորներին անցած տարածքները:
2. Ե՞րբ է սկսվել Հարյուրամյա պատերազմը:
3. Ե՞րբ անգլիացիները գրավեցին Կալե նավահանգիստը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ Ֆրանսիայի պարտությունը XV դ. սկզբին:
4. Ո՞վ էր Ժաննա դ'Արկը, ինչի՞ համար էր նա պայքարում:
5. Ե՞րբ ավարտվեց Հարյուրամյա պատերազմը: Ո՞վ հաղթեց:
6. Ո՞ւմ օրոք ավարտվեց Ֆրանսիայի միավորումը: Ո՞վ էր նրա գլխավոր հակառակորդը:
7. Ձեր կարծիքով՝ որո՞նք էին Ֆրանսիայի միավորման նախադրյալները:

Քննարկման հարց

Վերհանե՛ք Ժաննա դ'Արկի դերը Ֆրանսիայի միավորման գործում:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Հարյուրամյա պատերազմ, դուքս Վիլհելմ, կոմս Հենրիխ, Աքվիտանիայի դքսություն, Կալե նավահանգիստ, Ժաննա դ'Արկ, Օռլեան, Ռեյմս, «Օռլեանի կույս», Լյուդովիկոս XI, Բուրգունդիա, Կարլոս Խիզախ

§17. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

ՉՈՐՐՈՐԴ ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ

Խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ քրիստոնյաները չկարողացան նվաճել Երուսաղեմը: Սուրբ քաղաքը գրավելու համար Ինոկենտիոս III պապը կազմակերպեց նոր արշավանք: Սակայն խաչակիրները, Արևելք տեղափոխվելու համար հակառակ պապի ցանկության, հավաքվեցին ոչ թե Սիցիլիայում, այլ Վենետիկում: Նրանք բանակցություններ սկսեցին Վենետիկի կառավարիչ **Էնրիկո Դանդոլոյի** հետ: Խաչակիրները ծրագրել էին Արևելք հասնել Վենետիկի նավերով: Օգտվելով Բյուզանդիայում ծագած գահակալական կռիվներից՝ Դանդոլոն որպես տեղափոխման փոխհատուցում խաչակիրներին առաջարկեց գրավել Կոստանդնուպոլիսը: Այսպես նա փորձում էր շարքից հանել Վենետիկի առևտրական մրցակից Կոստանդնուպոլսին: Խաչակիրները համաձայնվեցին և **1204 թ.** գրավեցին Բյուզանդիայի մայրաքաղաքը: Նրանք թալանեցին հեքիաթային հարստություն ունեցող քաղաքը ու ոչնչացրին բազմաթիվ մշակութային արժեքներ: Խաչակիրներն այլևս առաջ չշարժվեցին: Բյուզանդիայից նվաճված տարածքների վրա նրանք հիմնադրեցին իրենց պետությունը՝ **Լատինական կայսրությունը:** Իսկ կայսրության փոքրասիական շրջաններում հույները ստեղծեցին **Նիկեայի և Տրապիզոնի կայսրությունները:**

Լատինական կայսրությունը երկար չգո-

Բյուզանդական պատմիչը խաչակիրների կողմից Կոստանդնուպոլիսը կողոպտելու մասին

Դժվար և անհնար էր աղերսանքով մեղմել և գթաշարժել այդ բարբարոս ժողովրդին: Ամեն ոք էլ պետք է երկյուղ կրեր իր կյանքի համար. փողոցներում լաց ու հեկեկանք էր, խաչմերուկներում՝ ողբ, տաճարներում՝ աղիողորմ հառաչանք: Այդպես էին անիրավություններ անում արևմուտքի զորքերը՝ ոչ մեկին գեթ մի փոքր անգամ չողորմալով և բոլորին զրկելով դրամից ու ունեցվածքից, կացարանից ու հագուստներից և բացարձակապես ոչինչ չթողնելով նրանց, ով ինչ–որ բան ուներ:

Ամեն օր նրանք զբաղվում էին հարբեցողությամբ ու որկրամոլությամբ: Զարմանալ կարելի էր գոռոզությունից գիտակցությունները մթագնած այդ մարդկանց անչափ խելացնորության վրա, երբ նրանք վիճակ էին գցում, թե ով որ քաղաքին և որ երկրին պետք է տիրի:

յատևեց: **1261 թ.** կայսր **Միքայել VIII–ը** հետ գրավեց Կոստանդնուպոլիսը: Լատինական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց: Սակայն խաչակիրների հարվածներից կայսրությունը այնպես էր տրոհվել ու թուլացել, որ այլևս չկարողացավ ուշքի գալ:

Էնրիկո Դանդալոն օրհնում է խաչակիրներին արշավանքից առաջ:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

Մինչև XIV դարի կեսերը թուրքերը նվաճեցին Փոքր Ասիա թերակղզու հյուսիս–արևմուտքը: Օգտվելով Բյուզանդիայի թուլացումից՝ նրանք անցան Դարդանելի նեղու-

Օսմանյան կայսրության կազմավորումը

ցը: Սուլթան **Մուրադ I–ը** պետության մայրաքաղաքը տեղափոխեց **Ադրիանուպոլիս:** Բյուզանդական կայսրությունը փրկելու համար կայսրը մեկնեց Արևմուտք: Նա հանդիպեց Հռոմի պապին և նույնիսկ համաձայնեց ընդունել կաթոլիկություն: Սակայն այդպես էլ օգնություն չստացավ:

Բալկանյան թերակղզու երեք երկրները՝ Բյուզանդիան, Բուլղարիան, Սերբիան, չկարողացան միավորել իրենց ուժերը և համատեղ հանդես գալ թուրքերի դեմ: Սա հնարավորություն տվեց վերջիններիս առանձին–առանձին նվաճելու այդ երկրները: Առաջին հարվածը նրանք հասցրին Սերբիային: **1389 թ. Կոսովոյի դաշտում** տեղի ունեցած ճակատամարտում սերբերը պարտություն կրեցին: Թեև օսմանցիները չկարողացան ամբողջովին գրավել Սերբիան, սակայն նվաճեցին Բալկանյան թերակղզու հարավ–արևմուտքը:

Անհաջողությամբ ավարտվեց նաև թուր-

Կոսովոյի ճակատամարտը

քերի դեմ կազմակերպված խաչակրաց արշավանքը: Դանուբ գետի ափին խաչակիրները ծանր պարտություն կրեցին: Այնուհետև թուրքերը նախապատրաստվեցին գրավելու Բյուզանդական կայսրության մայրաքաղաքը:

Կոստանդնուպոլսի գրավումը օսմանցիների կողմից

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

1402 թ. թուրքական բանակը ծանր պարտություն կրեց **Լենկ Թեմուրի** զորքերից: Բյուզանդիան չկարողացավ օգտվել այդ պատեհ առիթից և կազմակերպել երկրի պաշտպանությունը:

Վերսկսվեցին բանակցությունները Արևմուտքի հետ: Բյուզանդիան ստիպված համաձայնվեց նաև կաթոլիկ և հունական եկեղեցիների միավորմանը: Համաձայնագրի ստորագրումից հետո պապականությունը կազմակերպեց խաչակրաց արշավանք: Սակայն **1444 թ. Վառնա** քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում խաչակիրները պարտություն կրեցին:

Օսմանյան բանակը շրջապատեց Կոստանդնուպոլիսը և 63–օրյա պաշարումից հետո՝ **1453 թ. մայիսի 29–ին,** գրավեց այն:

Բյուզանդական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց: Կոստանդնուպոլսի անկումով փակվեց Արևելահռոմեական կայսրության պատմության վերջին էջը: Քրիստոնյա Արևելքը կորցրեց իր մայրաքաղաքը: Հարավարևելյան Եվրոպան մտավ **Օսմանյան տերության** կազմի մեջ: Տիրանալով կայսրության եվրոպական մասին՝ օսմանցիները նախապատրաստվեցին նվաճելու նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ սկսվեց խաչակրաց չորրորդ արշավանքը: Ինչո՞ւ խաչակիրներն Երուսաղեմն ազատագրելու փոխարեն գրավեցին Կոստանդնուպոլիսը:
2. Երբ ստեղծվեց և մինչև երբ գոյություն ունեցավ Լատինական կայսրությունը:
3. Ինչ հետևանքներ ունեցավ խաչակրաց չորրորդ արշավանքը Բյուզանդիայի համար:
4. Թուրքերը երբ անցան Բալկանյան թերակղզի: Ո՞վ Ադրիանուպոլիսը դարձրեց Օսմանյան պետության մայրաքաղաք:
5. Ինչո՞ւ օսմանցիներին հաջողվեց հեշտությամբ նվաճել Բալկանյան թերակղզու երեք պետությունները:
6. Երբ է տեղի ունեցել Կոսովոյի ճակատամարտը, ինչ հետևանքներ ունեցավ այն:
7. Ո՞ր դեպքերը խանգարեցին թուրքերին XV դ. սկզբին գրավելու Կոստանդնուպոլիսը: Երբ նրանց հաջողվեց գրավել Կոստանդնուպոլիսը:

Քննարկման հարց

Ինչ հետևանքներ ունեցավ Կոստանդնուպոլսի անկումը համաշխարհային պատմության մեջ:

ՆՈՐ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էնրիկո Դանդոլո, Լատինական կայսրություն, Նիկեայի կայսրություն, Տրապիզոնի կայսրություն, Միքայել VIII կայսր, սուլթան Մուրադ I, Ադրիանուպոլիս, 1389 թ. Կոսովոյի ճակատամարտ, Լենկ Թեմուր, 1444 թ. Վառնայի ճակատամարտ, 1453 թ. Բյուզանդական կայսրության անկում Օսմանյան տերություն

§18. ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՋՍԱՎՈՐՈՒՄԸ

Հին Ռուսիայի տարածքում XIII դարի սկզբներին գոյություն ունեին մի քանի անկախ իշխանություններ: Չինգիզ խանի թոռ **Բաթու խանը 1237–1241 թթ.** նվաճեց Ռուսիայի մեծ մասը: Ռուսական իշխանությունները կախման մեջ ընկան մոնղոլ–թաթարական հսկայածավալ տերությունից:

Ավելի ուշ **Լիտվական մեծ իշխանությունը** գրավեց Ռուսիայի հարավային և արևմտյան շրջանները: Հին ռուսական պետությունը ավելի քան երկու դար անկումային վիճակում էր:

ՄՈՍԿՎԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ռուսական պետականությունը պահպանվել էր միայն երկրի հյուսիս–արևելքում: XIV դարում մոնղոլներից կախյալ ռուսական իշխանություններից ուժեղացավ Մոսկվայի իշխանությունը: Մոնղոլների կողմից Մոսկվայի իշխանը ճանաչվեց որպես ռուսական

Ռուսական կենտրոնացված պետության ստեղծման գործում կարևոր դեր խաղաց Իվան III–ը (1462–1505 թթ.): Նրա օրոք տապալվեց մոնղոլական լուծը: Իվան III–ը իրեն համարում էր Համայն Ռուսիայի տիրակալ: Բյուզանդիայի անկումից (1453 թ.) հետո Ռուսական պետությունը (Ռուսաստան) հավակնում էր նրա ժառանգորդը լինելու: Ռուսաստանի պետական զինանշան ընդունվեց բյուզանդական երկգլխանի արծիվը (այսօր ևս Ռուսաստանի զինանշանն է): Հատուկ խորհրդանշաններ դարձան Մոնոմախ կայսեր գդակը և շքեղ թիկնոցը:

Իվան III

Մեծ իշխան և նրան տրվեց հարկահավաքության իրավունքը:

Մոսկվայի իշխանությունն էլ գլխավորեց ռուսական հողերի միավորման և կենտրոնացված պետության ստեղծման գործընթացը: Իսկ միավորման համար կային անհրաժեշտ նախադրյալներ:

Առաջին՝ **տնտեսական**. վերականգնվել ու զարգանում էր տնտեսությունը, աշխույժ առևտրական կապեր էին հաստատվել երկրի տարբեր շրջանների միջև:

Երկրորդ՝ **սոցիալական**. երկրի քաղաքական միավորման և մոնղոլական տիրապետությունից ազատվելու հարցում միակամ էին բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչները (իշխաններ, բոյարներ, ազնվականներ, հոգևորականներ, գյուղացիներ, արհեստավորներ և առևտրականներ):

Երրորդ՝ **հոգևոր–գաղափարական**. ժողովրդի համախմբմանը նպաստեցին ազգային ինքնագիտակցության աճը և միասնական պետություն ունենալու գաղափարը:

Չորրորդ՝ **քաղաքական**. արտաքին–քաղաքական կարևոր գործոն էր մոնղոլներից ու Լիտվական մեծ իշխանությունից եկող մշտական վտանգը, իսկ ներքին քաղաքական կարևոր նախադրյալ էր Մոսկվայի հզորացումը:

Մոսկվայի հեղինակությունը բարձրացավ հատկապես **1380 թ. Կուլիկովոյի ճակատամարտից** հետո, որտեղ ռուսական զորքը ջախջախեց մոնղոլներին: Դրանից հետո արագացավ Մոսկվայի շուրջը ռուսական հողերի միավորման գործընթացը:

Ռուսական պետության կազմավորումն ու ընդարձակումը (XIV–XVI դարեր)

- Մոսկվայի մեծ իշխանության տարածքը 1462 թ. դրությամբ
- Ռուսական զորքերի արշավանքները միացյալ պետության ստեղծման նպատակով
- Ռուսաստանի տարածքը XVI դ. կեսին
- Ռուսական զորքերի արշավանքները XVI դ. երկրորդ կեսին
- XVI դ. երկրորդ կեսին Ռուսաստանին անցած տարածքները
- Ռուսաստանի սահմանները XVI դ. վերջին

Իվան Ահեղ

ԻՎԱՆ IV ԱՀԵՂ

XV դարում առաջացավ ռուսական կենտրոնացված պետությունը, որը սկսեց կրել **Ռուսիա (Ռուսաստան)** անունը: Ռուսիայի հզորացման քաղաքականությունը շարունակեց Իվան III–ի (1462–1505 թթ.) թոռ **Իվան IV Ահեղը:**

1547 թ. 17–ամյա Իվանը թագադրվեց և ընդունեց **ցար** տիտղոսը: Պետության ուժեղացման նպատակով նա իրականացրեց մի շարք վերափոխումներ:

Հին Ռուսիայի շրջանից պահպանված **Բոյարական դուման** մնաց որպես ցարին կից օրենսդրական և խորհրդակցական մարմին: Իվան IV–ը **1549 թ.** հրավիրեց առաջին **Երկրային ժողովը:** Պետական այս մարմինը կազմեցին բարձրաստիճան ավատատերերը և հոգևորականները, ազնվականների ու քաղաքների ներկայացուցիչները: Երկրային ժողովը որոշումներ էր ընդունում կարևորագույն պետական հարցերի վերաբերյալ՝ ֆինանսներ, օրենքներ, արտաքին քաղաքականություն: Այսպես՝ Ռուսաստանում ևս ձևավորվեց **դասային միապետություն:**

Իվան IV–ը ստեղծեց նաև համապետական գործակալություններ, որոնք կոչվում էին **պրիկազներ:** Դրանց թիվը հասավ մոտ քսանի:

1550 թ. ընդունվեց օրենքների նոր ժողովածու՝ **«Դատաստանագիրքը»:** Այն նպաստեց ավատատիրական հարաբերությունների ամրապնդմանը:

Իրականացվեց ռազմական բարեփոխում. ստեղծվեց մշտական բանակ ավատատերերից՝ **ստրելեցների** զորքը: Ըստ անհրաժեշ-

տության հավաքագրվում էր նաև զորքի մյուս տեսակը՝ աշխարհազորը:

Իվան IV–ը նվաճողական արշավանքների միջոցով ընդլայնեց պետության սահմանները: Ռուսաստանին միացվեցին **Կազանի** ու **Աստրախանի** խանությունները, Արևմտյան Սիբիրը (տես քարտեզը):

Բալթիկ ծով դուրս գալու նպատակով ցարը 1558 թ. պատերազմ սկսեց երկրի հյուսիս–արևմտյան սահմանների ուղղությամբ: Սակայն **Լիվոնյան** անունով հայտնի այդ ռազմական բախումն ավարտվեց Ռուսաստանի պարտությամբ:

Անսահմանափակ իշխանություն հաստատելու նպատակով Իվան Ահեղը իր քաղաքական հակառակորդների և ընդդիմադիր

Իվան Ահեղը Կազանի պարիսպների մոտ

Բորիս Գոդունով

Միխայիլ Ռոմանով

ուժերի հանդեպ սկսեց կիրառել ահաբեկության (տեռորի) քաղաքականություն: Բռնաճնշումները որոշակիորեն թուլացրին ազնվականությանը և ամրապնդեցին ցարի իշխանությունը: Սակայն դրա հետևանքով անկում ապրեց երկրի տնտեսությունը:

ՆՈՐ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ռուսաստանի պատմության մեջ XVI դարի վերջը և XVII դարի սկիզբը հայտնի է **«խառնակ ժամանակաշրջան»** անունով:

Իվան Ահեղը 1584 թ. մահացավ: Նրա որդի Ֆյոդորը չկարողացավ ինքնուրույն կառավարել, և գահի խնամակալ դարձավ **Բորիս Գոդունովը:** Ֆյոդորից հետո՝ **1598 թ.,** նա էլ ընտրվեց Ռուսաստանի ցար: Սակայն ժողովուրդը և բոյարների մեծ մասը դժգոհ էին Գոդունովից:

Երկրի կայունությունը սասանեցին Գոդունովից հետո ի հայտ եկած ինքնակոչ ցարերն ու նրանց սատարող օտարերկրյա ուժերը: Ինքնակոչ ցարերին աջակցող Լեհաստանը և Շվեդիան զորքեր մտցրին Ռուսաստանի տարածք:

Անկախության կորստի սպառնալիքը ոտքի հանեց երկրի հայրենասիրական ուժերին: Նրանք վտարեցին ինքնակոչներին, ազատագրեցին մայրաքաղաք Մոսկվան: Այդպես ավարտվեց խառնակ շրջանը:

1613 թ. Մոսկվայում գումարված Երկրային ժողովը ցար ընտրեց **Միխայիլ Ռոմանովին:** Այսպես Ռուսաստանում հաստատվեց **Ռոմանովների արքայատոհմը** (իշխել է մինչև 1917 թվականը):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ մոնղոլները կարողացան հեշտությամբ նվաճել Ռուսիան:
2. XIV դարում ովքե՞ր սկսեցին կրել Մեծ իշխանի տիտղոսը:
3. Ներկայացրե՛ք ռուսական հողերի միավորման նախադրյալները:
4. Ձեր կարծիքով՝ ի՞նչը նպաստեց Մոսկվայի դերի ու հեղինակության բարձրացմանը:
5. Ե՞րբ է կառավարել Իվան Ահեղը: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց նա կենտրոնացված պետությունն ամրապնդելու համար: Հիմնավորե՛ք, որ Ռուսաստանում նույնպես ստեղծվել էր դասային միապետություն: Հիշե՛ք թե Եվրոպական ո՞ր երկրներում էր հաստատվել նման պետական կարգ:
6. Ինչո՞ւ Իվան Ահեղը իր երկրի ներսում կիրառեց ահաբեկության քաղաքականություն: Հասա՞վ նա իր նպատակին, թե ոչ:
7. Նկարագրե՛ք «խառնակ ժամանակաշրջանի» Ռուսաստանը:
8. Ե՞րբ է հաստատվել Ռոմանովների արքայատոհմը:

Գործնական աշխատանք

Օգտվելով դասագրքի և այլ աղբյուրների նյութերից՝ ներկայացրե՛ք Իվան IV Ահեղի պատմական կերպարը:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Բաթու խան, Լիտվական մեծ իշխանություն, 1380 թ. Կուլիկովոյի ճակատամարտ, Իվան IV Ահեղ, ցար, Բոյարական դումա, Երկրային ժողով, պրիկազ, Կազանի խանություն, Աստրախանի խանություն, ստրելեցների զորք, Լիվոնյան պատերազմ, Բորիս Գոդունով, «խառնակ ժամանակաշրջան», Ռոմանովների արքայատոհմ, Միխայիլ Ռոմանով

ԲԱԺԻՆ 3 ԱՄՓՈՓՈՒՄ

1. XIV դ. Եվրոպայում արդեն նկատելի էր դարձել ավատատիրական հասարակարգի անկումը: Առաջացավ դասային միապետությունը: Ավատատիրության անկման հետևանքով գնալով ծանրանում էր գյուղացիության դրությունը:

   Քաղաքներով հիմնավորեք, որ ավատատիրությունը անկում էր ապրում: Ինչ է դասային միապետությունը, ո՞ր երկրներում ստեղծվեցին դասային ներկայացուցչական ժողովներ: Ինչո՞ւ XIV դարի գյուղացիական ապստամբություններն ավարտվեցին պարտությամբ:

2. XI դ. Եվրոպայում էթնիկական տեղաշարժերը հիմնականում դադարեցին, և սկսվեց տարբեր ժողովուրդների կազմավորման գործընթացը: Նպաստավոր պայմաններ էին ստեղծվում ազգային պետությունների առաջացման համար:

   Բացատրեք ազգային հերետիկոսություն հասկացությունը: Որո՞նք էին ազգային պետությունների առաջացման նախադրյալները: Թվարկեք Եվրոպայի մի քանի ազգային պետություններ:

3. Անգլիայի և Ֆրանսիայի միջև տարածքային վեճերն առաջացել էին դեռևս XI դ.: Անգլո–ֆրանսիական տարածքային վեճերը վերածվեցին Հարյուրամյա պատերազմի:

   Ներկայացրեք Անգլիայի և Ֆրանսիայի միջև առաջացած տարածքային խնդիրը: Ինչ արդյունքներ ունեցավ Հարյուրամյա պատերազմը: Երբ և ո՞ւմ օրոք ավարտվեց Ֆրանսիայի քաղաքական միավորումը:

4. Խաչակրաց չորրորդ արշավանքի հետևանքով Բյուզանդիան տրոհվեց և թուլացավ: Օգտվելով իրավիճակից՝ թուրքերը նվաճեցին կայսրությանը պատկանող տարածքները:

Պարզաբանե՛ք օսմանյան թուրքերի հաջողությունների պատճառները: Ինչ հետևանքներ ունեցավ Բյուզանդիայի անկումը Եվրոպայի համար:

5. XIII դ. առաջին կեսին մասնատված Ռուսիան չկարողացավ դիմագրավել մոնղոլ–թաթարների նվաճումներին և ընկավ նրանց տիրապետության տակ: Ռուսական պետականությունը պահպանվել էր երկրի հյուսիս–արևելքում: XV–XVI դարերում կազմավորվեց և սկսեց հզորանալ կենտրոնացված ռուսական պետությունը՝ Ռուսաստանը:

Որո՞նք էին ռուսական հողերի միավորման նախադրյալները: Գնահատե՛ք Իվան Ահեղի գործունեությունը Ռուսաստանի համար: Ինչ է հառնակ շրջանը, ինչո՞վ ավարտվեց այն:

ԲԱԺԻՆ 4 ԱՐԵՎԵԼՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§19. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԻՍԼԱՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Արաբական ցեղերն ապրում էին Արաբական թերակղզում: Նրանց մի մասը քոչվորներ էին (բեդվիններ), մյուսը՝ նստակյացներ: Արտաքին վտանգը ստիպում էր ցեղերին միավորվել, սակայն դրան խանգարում էր միասնական կրոնի բացակայությունը: Այդ խնդիրը լուծեց **Մուհամեդը:**

Մուհամեդը ծնվել է **Մեքքա** քաղաքում: Ըստ ավանդության՝ նա սովորություն ուներ առանձնանալու քարանձավում և խորհրդածելու նոր կրոնի մասին: Ի վերջո նա հանգում է միաստվածության գաղափարին: Մեքքայում նա սկսում է քարոզել իր նոր կրոնը: Սակայն մեքքացիները չընդունեցին Մուհամեդի քարոզները: **622 թ.** նա ստիպված իր կողմնակիցների հետ փախավ **Մեդինա:** Մուհամեդի փախուստի տարին էլ համարվում է մուսուլմանական թվականության սկիզբը:

Մուհամեդը նոր հավատն անվանեց **իսլամ** («հնազանդություն Ալլահին»): Իսլամի հավատացյալները կոչվում են **մուսուլմաններ** (մահմեդականներ):

Բեդվինների օգնությամբ Մուհամեդը գրավեց Մեքքան: Շուտով մեկը մյուսի հետևից իսլամ ընդունեցին արաբական բոլոր ցեղե-

Մուհամեդը և իր աշակերտները

Իսլամում առաջացավ երկու ուղղություն: Շիաների կարծիքով՝ միայն Մուհամեդի տոհմի անդամները խալիֆա դառնալու իրավունք ունեն: Բացի այդ, խալիֆան պետք է լինի հոգևոր, այլ ոչ թե քաղաքական առաջնորդ:

Մյուս ուղղությունը ներկայացնում են սուննիները: Նրանց կարծիքով՝ միայն իրենք են Մուհամեդի ուսմունքի և ավանդների հետևորդները:

Սուննիները այժմ կազմում են մուսուլմանների 80 տոկոսը: Շիաները միայն Իրանում են կազմում բնակչության ճնշող մեծամասնությունը:

ը: Այսպես **Մուհամեդը ստեղծեց միասնական արաբական պետություն:**

Մուհամեդի մահից հետո նրա քարոզները գրի առնվեցին: Հավաքածուն կոչվեց **Ղուրան** (ընթերցանության գիրք): Ղուրանը մուսուլմանների սուրբ գիրքն է:

Մուհամեդից հետո որոշվեց ընտրել նրա հաջորդին՝ խալիֆային: **Խալիֆա** նշանակում է Մուհամեդի փոխանորդ: Պետությունը սկսեց կոչվել **խալիֆայություն:** Խալիֆան պետության հոգևոր և աշխարհիկ առաջնորդն էր: Առաջին խալիֆա դարձավ **Աբու–Բաքրը:**

Շուտով արաբները Բյուզանդիայից գրավեցին Ասորիքը: Ապա գրավեցին և իրենց ենթարկեցին Պարսկաստանը:

Արաբական նվաճումների արդյունքում ստեղծվեց միջնադարի հզոր տերություններից մեկը՝ Արաբական խալիֆայությունը:

Մուհամեդի հաջորդների օրոք երկրում սկիզբ առան ներքին գժտություններ: Իշխանության համար մղվող պայքարում հաղթեց **Մուավիան,** որը հիմք դրեց **Օմայան հարստությանը:**

Կորդովայի խալիֆայությունն ընդգրկում էր Պիրենեյան թերակղզու մեծ մասը: Իսկ լեռնային շրջաններում պահպանվեցին քրիստոնյա մանր թագավորություններ:

Արաբական Իսպանիայի խոշոր քաղաքներում բացվեցին բարձրագույն դպրոցներ, որոնք Եվրոպայում առաջիններից էին: Շատ եվրոպացիներ կրթություն ստանալու համար գալիս էին Իսպանիա: Մինչև Վերածնության դարաշրջանը Եվրոպան անտիկ հեղինակների աշխատություններին ծանոթանում էր արաբերեն թարգմանությունների միջոցով:

Օգտվելով արաբների թուլացումից՝ Իսպանիայի հյուսիսում գտնվող քրիստոնյա երկրները ձեռնամուխ եղան իսպանական տարածքների հետնվաճմանը (ռեկոնկիստա): Այն տևել է շուրջ 800 տարի:

Կորդովայի տաճարի հիմնական զոհասեղանը



ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

718 թ. արաբները նվաճեցին Պիրենեյան թերակղզին: Իսկ Ասիայում արաբների իշխանությունը հասավ մինչև Հնդկաստան:

Խալիֆա Մուավիան մայրաքաղաք դարձրեց **Դամասկոսը:** Գահակալական կռիվներին վերջ տալու համար նա սահմանեց, որ այդուհետ խալիֆայի իշխանությունը ժառանգական պետք է լինի:

Բոլոր մուսուլմանները պարտադիր ծառայում էին բանակում: Ոչ մուսուլմանները ծառայության փոխարեն հարկ էին վճարում: Խալիֆայությունը իր հզորության գագաթնակետին հասավ **Աբբասյան արքայատոհմի**

Արաբական խալիֆայությունը



կառավարման տարիներին: Սակայն նրանց գահակալման շրջանում էլ սկսվեց խալիֆայության տրոհումը և անկումը: Շուտով մայրաքաղաքը Դամասկոսից տեղափոխվեց նորակառույց **Բաղդադ** քաղաք:

756 թ. խալիֆայությունից անջատվեց **Կորդովայի խալիֆայությունը** Իսպանիայում: Հետո անկախացան Եգիպտոսը և Հայաստանը: **1055 թ.** սելջուկները գրավեցին Բաղդադը, և Աբբասյան խալիֆայությունը դադարեց գոյություն ունենալուց:

ԱՐԱԲԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Արաբները համաշխարհային մշակույթի ասպարեզում մեծ ավանդ ունեն: Դամասկոսը,

Արաբական խալիֆայության տրոհումը

Մուսուլմանի հիմնական պարտականությունները

Իսլամը ճշմարիտ մուսուլմանի վրա դրել է հինգ հիմնական պարտականություն՝ ա) հավատալ, որ գոյություն ունի միայն մեկ աստված՝ Ալլահը, իսկ Մուհամեդը նրա մարգարեն է, բ) օրական հինգ անգամ աղոթել, որպեսզի հավատացյալները չմոռանան այդ մասին, գ) ողջ տարվա մեկ ամսվա ընթացքում պահպանել գլխավոր պասը (բացի հիվանդներից և երեխաներից) արևածագից մինչև մայրամուտ, դ) եկամտի կամ ավարի մեկ հինգերորդ մասը ծախսել բարեգործության վրա, ե) եթե հնարավոր է, կյանքում գոնե մեկ անգամ կատարել ուխտագնացություն դեպի սրբազան վայրեր՝ Մեքքա և Մեդինա:

Բաղդադը, Կորդովան և Կահիրեն հռչակված էին իրենց բարձրագույն դպրոցներով և գրադարաններով: Այստեղ աստվածաբանության հետ միասին ուսումնասիրում էին նաև իրավունք, պատմություն, փիլիսոփայություն:

Խալիֆա **Մամունը** Բաղդադում հիմնեց բարձրագույն դպրոց՝ **Իմաստության տուն:** Այստեղ կատարում էին թարգմանություններ, ուսումնասիրում աշխարհիկ գիտություններ: Դպրոցին կից գործում էր աստղադիտարան:

Մեծ զարգացում ապրեց մաթեմատիկան: Արաբները կատարելագործեցին հնդկական թվային համակարգը: Նրանք սկսեցին օգտագործել «0» (զրո) նշանը: Սա հնարավորություն տվեց գրելու ցանկացած թվային մեծություն:

Արաբական աստղաբաշխները կազմեցին Արեգակնային համակարգի քարտեզը: Նրանք ևս կարծում էին, որ Երկիր մոլորակը կլոր է:

Զարգանում էր նաև պատմագրությունը: X դարի արաբ նշանավոր պատմաբան **Թաբարին** գրել է «Մարգարեների և թագավորների պատմություն» աշխատությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտեղ էին բնակվում արաբական ցեղերը: Ինչը նպաստեց նրանց միավորմանը:
2. Ո՞ր իրադարձությունն է համարվում մուսուլմանական թվականության սկիզբը:
3. Ինչպե՞ս անվանեց Մուհամեդը իր ստեղծած նոր կրոնը: Ո՞րն է մուսուլմանների սուրբ գիրքը:
4. Ինչ է նշանակում խալիֆա, և ո՞վ էր առաջին խալիֆան: Ո՞վ հիմնադրեց Օմայան հարստությունը:
5. Արաբները ե՞րբ նվաճեցին Պիրենեյան թերակղզին: Թվարկե՛ք արաբների նվաճած տարածքները:

6. Ո՞ւմ օրոք Բաղդադը դարձավ մայրաքաղաք: Նշե՛ք, թե որ երկրները և երբ անջատվեցին Արաբական խալիֆայությունից:
7. Թվարկե՛ք արաբների հիմնադրած հռչակավոր բարձրագույն դպրոցները, մշակութային նվաճումները:

Գործնական աշխատանք

Տետրում գծե՛ք աղյուսակը և ներկայացրե՛ք արաբական մշակույթի հիմնական նվաճումները:

1. Կրթություն	
2. Թարգմանություն	
3. Մաթեմատիկա	
4. Աստղագիտություն	
5. Պատմություն	

Նոր հասկացություններ, անուններ

Մուհամեդ, Մեքքա, Մեդինա, Ղուրան, իսլամ, մուսուլման, խալիֆա, Աբու–Բաքր, Մուավիա, Օմայան հարստություն, Աբբասյան արքայատոհմ, Բաղդադ, Կորդովայի խալիֆայություն, ռեկոնկիստա (հետնվաճում), Մամուն, Թաբարի

§20. ՔՈՉՎՈՐԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹՅՈՒՐՔ–ՍԵԼՋՈՒԿՆԵՐԸ

Սելջուկ բեյ

Թյուրքական **օղուզ ցեղի** առաջնորդ **Սելջուկը** և նրա ժառանգները XI դ. կեսերին գրավեցին Իրանը և հիմնեցին Սելջուկյան պետությունը: Հետո նրանք գրավեցին Արաբական խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը, Հայաստանը և Ասորիքի մեծ մասը:

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում սելջուկները հաղթեցին բյուզանդացիներին: Գրավելով Փոքր Ասիայի մի մասը՝ նրանք այստեղ ստեղծեցին **Իկոնիայի սուլթանությունը:**

Փոքր Ասիայում հաստատված սելջուկները երկար ժամանակ շարունակում էին զբաղվել քոչվորական անասնապահությամբ: Արհեստագործությամբ, առևտրով ու հողագործությամբ հիմնականում զբաղվում էին հայերը, հույները և մյուս ժողովուրդները:

Սահմանամերձ վայրերում ապրող թյուրքական ցեղերը ստեղծել էին յուրօրինակ ռազմաքոչվորային համակարգ: Քոչվորների մի մասը կատարում էր միայն զինվորական ծառայություն, իսկ մյուսները զբաղվում էին անասնապահությամբ:

ՄՈՆԳՈԼԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

XIII դարի սկզբին իշխանության համար պայքարում հաղթեց **Թեմուչինը:** Նա միավո-

րեց մոնղոլական ցեղերը և 1206 թ. ընտրվեց համամոնղոլական կառավարիչ՝ **Չինգիզ խան** անունով: Նա անցկացրեց ռազմական բարեփոխումներ: Պետության ստորին վարչական միավոր ընդունվեց գյուղերի այն խումբը, որոնցից յուրաքանչյուրը կարող էր մարտադաշտ դուրս բերել 10 զինվոր: Այնուհետև վարչական միավորներ էին կազմում 100 զինվոր, 1000 զինվոր և 10 000 զինվոր տրամադրող գյուղախմբերը:

Մոնղոլները կարճ ժամանակամիջոցում գրավեցին Միջին Ասիան, Իրանը, Հայաստանը, Կովկասը, Ռուսիան, Չինաստանը: Նրանք պարտության մատնեցին նաև Իկոնիայի սելջուկներին և գրավեցին Փոքր Ասիայի մի մասը: **1258 թ.** մոնղոլները գրավեցին նաև Բաղդադը:

Մոնղոլական տերությունը ձգվում էր Խաղաղ օվկիանոսից մինչև Միջերկրական ծով: Այս հսկայածավալ կայսրությունը կառավարելու համար այն բաժանվեց հինգ **ուլուսի** (փոխարքայության):

ԿԻՍԱԼՈՒՄՆԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Իկոնիայի սուլթանության քայքայումից հետո Փոքր Ասիայում ստեղծվեցին թյուրքական ինքնուրույն բազմաթիվ իշխանություններ: Օղուզների առաջնորդներից **Օսման բեյը 1299 թ.** հիմնադրեց անկախ իշխանություն: Նա սկսեց ընդարձակել իր նորաստեղծ պետությունը: Օսմանցիները տարածքներ գրավեցին ինչպես թուլացած բյուզանդացիներից, այնպես էլ սահմանամերձ թյուրքական մյուս իշխանություններից: Մինչև XIV դ. կեսերը նրանք կարողացան գրավել Փոքր Ասիայի ողջ հյուսիս–արևմուտքը:

Չինգիզ խան

Չինգիզ խանն իր նվաճումները սկսեց դաժան ու արտակարգ կազմակերպված բանակ ստեղծելով: Նրա հորդաները սարսափի էին մատնում իրենց հակառակորդներին, անխնա սպանում ու թալանում էին բոլորին: Նրա բանակի հեծյալները լավ վարժեցված էին և կարողանում էին նետահարել անգամ արագ ձիավարելու ընթացքում: Իր նվաճումների արդյունքում Չինգիզ խանն իրեն ենթարկեց հյուսիսային Չինաստանն ու Կորեան, այնուհետև թեքվեց դեպի արևմուտք՝ ամայացնելով իր ճանապարհին Հյուսիսային Հնդկաստանը, Աֆղանստանը, Պարսկաստանը և Ռուսիայի մեծ մասը:

Մեհմեդ II
Սուլթանը համարվում էր «Ապրծո սրվերը երկրի վրա»: Նա կնաջրինում էր բոլոր հպատակների կյանքը և գույքը:

1453 թ. մայիսի 29–ին օսմանցիները գրավեցին Կոստանդնուպոլիսը: Սուլթան **Մեհմեդ II–ը** այն դարձրեց թուրքական տերության մայրաքաղաք:

Արևելքում օսմանցիները բախվեցին Իրանի հետ: Միջագետքին և Հայաստանին տիրելու համար սկսվեցին թուրք–պարսկական երկարատև պատերազմներ: Ի վերջո՝ **Կասրե–Շիրինում 1639 թ.** կնքվեց հաշտության պայմանագիր: Իրաքը, Արևմտյան Հայաստանը և Արևմտյան Վրաստանը անցան Թուրքիային, իսկ Արևելյան Հայաստանն անցավ Պարսկաստանին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր տարածքների վրա կազմավորվեց Սելջուկյան պետությունը:
2. Մանազկերտի ճակատամարտը ի՞նչ նշանակություն ունեցավ սելջուկների համար:
3. Որտե՞ղ կազմավորվեց Իկոնիայի սուլթանությունը:
4. Ո՞վ և ե՞րբ միավորեց մոնղոլական ցեղերը: Ի՞նչ անուն նա ստացավ:
5. Թվարկե՛ք մոնղոլների նվաճած երկրներն ու տարածքները:
6. Ներկայացրե՛ք մոնղոլական տերության վարչական կառավարման համակարգը: Քանի՞ փոխարքայությունների էր այն բաժանված:
7. Ե՞րբ է հիմնադրվել Օսմանյան պետությունը և որտե՞ղ:
8. Ո՞ր սուլթանը գրավեց Կոստանդնուպոլիսը և ե՞րբ:
9. Ներկայացրե՛ք թուրք–պարսկական պատերազմների արդյունքները:

Նոր հասկացություններ, անուններ

Օղուզների ցեղ, Սելջուկ, Իկոնիայի սուլթանություն, Թեմուչին՝ Չինգիզ խան, փոխարքայություն (ուլուս), Օսման բեյ, Մեհմեդ II, 1639 թ. Կասրե–Շիրինի պայմանագիր

§21. ՀՆԴԿԱՍՏԱՆԸ IV–XVII ԴԱՐԵՐՈՒՄ

ԳՈՒՊՏԱՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հնդկաստանը միջնադար թևակոխեց մասնատված վիճակում: Չկար միասնական պետություն, երկիրը բաժանված էր բազմաթիվ իշխանությունների: Դրանց գլուխ կանգնած էին արքայիկները՝ ռաջաներ: Հնդկաստանի հյուսիսում կառավարող ռաջաներից մեկը՝ **Չանդրագուպտան,** IV դարում Գանգես գետի հովտում ստեղծեց **Գուպտաների պետությունը:** Վերջինս հզորացավ և իր սահմաններում ընդգրկեց Հնդկաստանի մեծ մասը: Ճիշտ է, այն գոյություն է ունեցել ընդամենը երկու դար, սակայն կարևոր դեր է խաղացել Հնդկաստանի պատմության մեջ:

Ոսկեդրամ Չանդրագուպտա II–ի պատկերով

Գուպտաների օրոք փոփոխվեց հասարակության սոցիալական կառուցվածքը: Նախկին չորս հիմնական **կաստաները** վերածվեցին չորս դասերի, որոնք բաժանվեցին բազմաթիվ ենթադասերի: Բրահմանների և քշատրիների **կաստաները** դարձան քրմական և զինվորական դասեր, որոնց ձեռքում էր պետական իշխանությունը: Իսկ վայշիներն ու շուդրաները ներկայացնում էին ցածր դասերը: Տարբեր դասերի ներկայացուցիչների միջև արգելված էր ամուսնությունը, ինչպես նաև մի դասից մյուսին անցումը:

Բուդդան գրուցում է իր աշակերտների հետ:

Հնդկաստանում այդ ժամանակ տիրապետող կրոն դարձավ **հինդուիզմը:** Տարածում ուներ նաև բուդդայականությունը: Հինդուիզմի դիցարանի գլուխ կանգնած էին երեք

աստվածներ՝ **Բրահման, Վիշնուն** և **Շիվան:** Շատ բան պահպանվեց հնդիկների հին պաշտամունքից: Օրինակ՝ Գանգեսը համարվում է սուրբ գետ, կովը՝ սուրբ կենդանի և այլն:

ԴԵԼԻԻ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հնդկաստանը XI–XII դարերում բազմիցս ենթարկվեց հարևան **Ղազնևիների** թյուրք–իրանական պետության արշավանքներին: Երկրի հյուսիսում **1206 թ.** հիմնադրվեց մի պետություն, որը մայրաքաղաքի անունով կոչվում էր **Դելիի սուլթանություն:** Շուտով սուլթանությունը տիրեց ողջ Հնդկական թերակղզուն: Երկրում սկսեց տարածվել իսլամը:

Տեղի ունեցան նոր փոփոխություններ հասարակության կյանքում: Հաստատվեց հողատիրության մուսուլմանական համակարգը. ամբողջ հողը համարվում էր սուլթանի սեփականությունը: Տեղական ավատատերերը զինվորական ծառայության դիմաց ստանում էին հողի ժառանգական կամ պայմանական տիրապետման իրավունք:

Զարգացավ ներքին և արտաքին առևտուրը, դրա հետ կապված՝ վերելք ապրեց քաղաքային կյանքը: Նշանավոր նավահանգիստներ էին **Գոան, Կալիկութը,** հայտնի էին նաև **Ագրա, Լահոր** քաղաքները:

Սակայն երկրի վերելքը շուտով ընդհատվեց: **Լենկ Թեմուրը** հսկայական զորքով **1398 թ.** ներխուժեց Հնդկաստան, գրավեց ու թալանեց Դելին: Նրա հեռանալուց հետո Հնդկաստանում սրվեց պայքարը տեղական և մուսուլման ավատատերերի միջև: Դրա հետևանքով զգալիորեն թուլացավ երկրի պաշտպանունակությունը:

Լենկ Թեմուրի զորքի ներխուժումը Դելիի սուլթանություն

ՄԵԾ ՄՈՂՈԼԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

1526 թ. Հնդկաստան արշավեց Լենկ Թեմուրի թոռ **Բաբուրը:** Նրա բանակը հրետանի և մարտունակ հեծելազոր ուներ: Բաբուրը պարտության մատնեց սուլթանին, գրավեց Դելին և իրեն հռչակեց շահ: Նորաստեղծ տերությունը ստացավ **Մեծ Մողոլի կայսրություն** անվանումը: Տերությունն այդպես կոչվեց, որովհետև Բաբուրն իրեն համարում էր Չինգիզ խանի հետնորդ:

Կայսրությունը հզորացավ հատկապես շահ **Աքբարի** օրոք (1556–1605 թթ.): Ընդարձակվեց պետության տարածքը:

Աքբարը ճկուն քաղաքականություն էր վարում, որպեսզի հաշտեցնի և համախմբի հինդուիզմի հետևորդներին ու մուսուլմաններին:

Աքբարը ծառայության էր վերցնում հնդիկ ավատատերերին, հովանավորում վաճառականներին: Նրա հովանավորությունից օգտվում էին նաև Հնդկաստանում հաստատված հայ վաճառականները: Վերելք ապրեցին արհեստները, առևտուրը:

Դելիում կառուցվեցին բազմաթիվ պալատներ, շենքեր: Աքբարը կառուցապատեց երկրորդ մայրաքաղաքը՝ **Ագրան**:

Մեծ Մողոլի կայսրության հիմնադիր Բաբուր խանը

ՄՇԱԿՈՒՅԹԸ

Միջնադարում հնդկական մշակույթը հարստացավ նոր նվաճումներով:

Գուպտաների դարաշրջանում վերելք ապրեցին ճարտարապետությունը, գրականությունը, մաթեմատիկան, աստղագիտությունն ու բժշկությունը:

Շահ Աքբար



Աջանտայի ժայռափոր տաճարի ընդհանուր տեսքը

Ճարտարապետության հռչակավոր կոթողներից են **Աջանտայի** և **Էլլուրի** ժայռափոր տաճարները: Դրանց ներսը զարդարում են գեղեցիկ որմնանկարները և քանդակները:

Այս դարաշրջանի գրականության հանճարեղ հեղինակ է բանաստեղծ **Կալիդասան:** Նրա ոգեշնչման գլխավոր աղբյուրներն էին հայրենի բնությունն ու ժողովրդի կյանքը:

Հնդկական մշակույթը վերելքի մի նոր շրջան ապրեց XVI–XVII դարերում: Այս ժամանակաշրջանի ճարտարապետական կառույցների մեջ աչքի են ընկնում տաճարները, մզկիթները, պալատները, ամրոցները և այլն: Իրենց ահռելի չափերով հայտնի են Աքբարի կառուցած երկու պալատ–ամրոցները Դելիում և Ագրայում: Համաշխարհային արվեստի գլուխգործոց է շահ Ջահանի օրոք կառուցված **Թաջ–Մահալ** մզկիթ – դամբարանը Ագրայում:

Տաճարի մուտքերից մեկը

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրեք Հնդկաստանի վիճակը միջնադարի շեմին:
2. Ինչ փոփոխություններ կատարվեցին Հնդկաստանում Գուպտաների օրոք:
3. Ինչ դեր է ունեցել Դելիի սուլթանությունը Հնդկաստանի պատմության մեջ:
4. Երբ և ով է հիմնադրել Մեծ Մողոլի կայսրությունը: Ինչու է տերությունն այդպես կոչվել:
5. Ինչ փոփոխություններ տեղի ունեցան Հնդկաստանում շահ Աքբարի կառավարման տարիներին:
6. Միջնադարում մշակութային ինչ նվաճումներ արձանագրվեցին Հնդկաստանում:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Չանդրագուպտա, Գուպտաների պետություն, չորս հիմնական դասեր, հինդուիզմ, ղազնևիններ, Դելիի սուլթանություն, Գոյա, Կալիկութ, Ագրա, Լահոր, Բաբուր, Մեծ Մողոլի կայսրություն, Աքբար, Աջանտա, Էլլուր, Կալիդասա, Թաջ–Մահալ՝ Հնդկաստանի «մարգարիտ»

§22. ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ՉԻՆԱՍՏԱՆ

Միջնադարի սկզբին Չինաստանը մասնատված վիճակում էր, սակայն դա երկար չտևեց: Հյուսիսային Չինաստանում կայսր հռչակված **Յանցզյանը 581 թ.** վերամիավորեց երկիրը: Կառուցվեց նոր մայրաքաղաք՝ **Չանանը:** Վերականգնվեց Չինական մեծ պարիսպը:

Երկրի միասնությունը պահպանվեց նաև հաջորդ՝ **Տան արքայատոհմի** կառավարման շրջանում (618–907 թթ.):

Նրանց օրոք բարելավվեց երկրի կառավարման համակարգը: Մինչ այդ ծառայողները հիմնականում ազնվականների զավակներ էին, որոնք իրենց պաշտոնը ցմահ էին վարում: Բացվեցին դպրոցներ, որտեղ կարող էին սովորել նաև մյուս դասերին պատ-

Պալատականների գարնանային զբոսանք: Տան կայսրության ժամանակաշրջան

կանող մարդիկ: Դրա արդյունքում պետական ծառայողների կեսը կազմեցին այդ դասերի ներկայացուցիչները: Լավ աշխատողներն առաջ էին գնում ծառայողական աստիճանով: Այսպիսի համակարգը, որ հենվում է ծառայողների արժանիքների վրա, կոչվում է **ընտրություն ըստ արժանիքի:** Առաջինը չինացիներն են հիմնել նման համակարգ:

Երկրի բնականոն կյանքը XIII դարում խաթարեցին մոնղոլները: Նրանց հաջողվեց գրավել ամբողջ Չինաստանը: Օտարերկրյա տիրապետությունը մեծ վնասներ հասցրեց Չինաստանին: Սակայն չին ժողովուրդը ոտքի ելավ ազատագրական պայքարի, և **1368 թ.** մոնղոլական տիրապետությունը տապալվեց:

Ապստամբների զորքի հրամանատար **Տայցուն** հռչակվեց կայսր և դարձավ **Մին կայսրության** հիմնադիրը:

Մին կայսրության հիմնադիր Տայցուն

XVI դարից սկսած՝ արգելվեց օտարերկրացիների մուտքը երկիր: Չինաստանը ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից: Գլխավոր նպատակն էր՝ կանխել եվրոպացի գաղութարարների ներթափանցումը: Միայն պորտուգալացիներին հաջողվեց գաղութ հիմնել **Մակաո** քաղաքում:

Շուտով հյուսիսից Չինաստան ներխուժեցին **մանջուրական ցեղերը** և գրավեցին մայրաքաղաք **Պեկինը**: **1644 թ.** մանջուրները հիմնադրեցին **Ցին կայսրությունը:**

ՉԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Միջնադարի չինական արվեստը, գիտությունը և տեխնիկան տվել են համաշխարհային նշանակության արժեքներ:

Չինաստանում մշտապես կարևորվել է



Երկնքի տաճարը
Չինաստան, Պեկին, XV դ.

Տաճարի ներսում՝ մարմարե հենահարթակի վրա, փայտյա հսկա աղոթատեղի է՝ մոտ 30 մ լայնությամբ:

Ներկերի օգնությամբ հաջողվել է ստանալ Ցին կայսրությանը բնորոշ ոճի տպավորություն: Երկնագույն հախճասալիկներով կառուցված տանիքը տաճարին անկրկնելի ու երկնային տեսք է տալիս:

կրթական գործը: Դպրոցներում պատրաստում էին մասնագետներ և ծառայողներ: Գրադարաններում պահվում էին հին ձեռագիր գրքեր և դասագրքեր:

Կայսրերը պետական հոգածություն են ցուցաբերել պատմության ուսումնասիրմանը՝ պատմագրությունը դարձնելով պաշտոնական գործ: Ստեղծվեցին ձեռագիր, իսկ տպագրության գյուտից հետո՝ նաև տպագիր բազմաթիվ աշխատություններ: Հատկանշական է չինական հետևյալ առածը. ***«Մի՛ մոռացիր անցյալը. այն ապագայի ուսուցիչն է»:***

Ճարտարապետները կառուցում էին շքեղ պալատներ և **պագոդաներ՝** բազմահարկ աշտարակների ձևով տաճարներ:

Չինացիները հայտնի են հատկապես իրենց գյուտերով: Դրանցից են՝ թուղթը, տպագրությունը, ճենապակին, լուցկին, վառոդը, կողմնացույցը, հեծանիվի շարժական շղթան, բամբուկե փողերով հրացանը, թնդանոթը, լրագիրը և այլն: Երկար ժամանակ պահանջվեց, որպեսզի այդ գյուտերից շատերը հասնեն Եվրոպա կամ էլ չինացիներից բավականին ուշ ինքնուրույն հայտնագործվեն նաև Եվրոպայում:

ՃԱՊՈՆԻԱ

Ճապոնիան բազմաթիվ կղզիներից կազմված երկիր է Ասիայի արևելքում: Յուրահատուկ աշխարհագրական դիրքը և բնությունը մեծ ազդեցություն են ունեցել ճապոնացիների պատմության վրա:

Առաջին պետություններն այստեղ համեմատաբար ուշ են ձևավորվել՝ IV–VI դարերում:

XII դ. վերջին ճապոնական ազդեցիկ տոհ-

մերի միջև կատաղի պայքար սկսվեց երկրում վերահսկողության իրավունք ձեռք բերելու համար: Արդյունքում՝ կայսրը **Մինամոտո** տոհմին տվեց **սյոգունի՝** զինվորական առաջնորդի տիտղոս և պետության վերահսկողության իրավունք: Սյոգունների իշխանության օրոք իրավիճակը Ճապոնիայում կայունացավ:

Սակայն XIII դ. վերջին երկիրը կանգնեց մոնղոլական վտանգի առջև: Մոնղոլական 150–հազարանոց զորքն ափ իջավ Ճապոնիայում: Հիսուն օր տևած թեժ կռիվներից հետո մի ուժեղ թայֆուն խորտակեց մոնղոլական նավատորմը: Ճապոնացիները թայֆունն անվանեցին **կամիկաձե՝** աստվածային քամի. նրանք հավատում էին, որ աստվածներն օգնեցին իրենց:

Այս դեպքերից հետո մի քանի դար շարունակ կրկին թեժ պայքար էր ընթանում ուժեղ տոհմերի միջև: Վերջապես **1603 թ. Տոկուգավան** դարձավ սյոգուն: Սյոգունությունը դարձնելով ժառանգական՝ Տոկուգավաները երկար ժամանակ պահպանեցին այն:

Նրանք, ի դեմս Ճապոնիայում հաստատված եվրոպացի առևտրականների ու կաթոլիկ միսիոներների, մեծ սպառնալիք տեսան իրենց պետության համար: Այդ պատճառով **1612 թ.** քրիստոնեությունը հայտարարվեց օրենքից դուրս: Արգելվեց օտարերկրացիների մուտքը Ճապոնիա. բացառություն արվեց միայն չինացի և հոլանդացի առևտրականների համար: Արգելվեց նաև տեղացիների ելքը այլ երկրներ: Այսպես Ճապոնիան մոտ երեք դար ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից:

Մինամոտո Յորիտոմո սյոգուն

Տոկուգավա սյոգուն

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Զգալի էր չինական մշակույթի ազդեցությունը ճապոնականի վրա: Ճապոնացիները Չինաստանից վերցրին գրության համակարգը: Մայրենի լեզվի զարգացումը հանգեցրեց **հիրագանա** կոչվող գաղափարագրերի ստեղծմանը:

Զարգացան արվեստի տարբեր ճյուղերը: Քաղաքներում առանձին թաղամասեր էին հատկացվում զվարճությունների համար: Այնտեղ կային թատրոններ, խաղատներ, թեյարաններ, հասարակական բաղնիքներ և այլն:

Մշակութային նոր ձևերից էր **Կաբուկի** կոչված թատրոնը: Դրան բնորոշ էր վառ ներկայացումը՝ երաժշտության, պարի, հանդերձների ու դիմախաղի համադրմամբ:

Զրահակիր սամուրայ

ՍԱՄՈՒՐԱՅՆԵՐ

Միջնադարյան Ճապոնիայում կային չորս պաշտոնական դասեր՝ սամուրայներ, գյուղացիներ, արհեստավորներ և վաճառականներ: Սյոգունների իշխանության ձևավորումից ի վեր աճեց սամուրայների դերը: Խոշոր հողատեր ազնվականներն ունեին սեփական զինված ջոկատներ, որոնք կազմված էին արհեստավարժ ռազմիկներից՝ սամուրայներից: Այդ ջոկատների հիմնական խնդիրն էր կարգուկանոն հաստատել ավատական կալվածքներում և ճնշել գյուղացիների ապստամբությունները:

Սամուրայներն ունեին իրենց պատվո վարքականոնը, ինչպես եվրոպական ասպետները: Նրանք խիստ կարգապահ էին, անսահման նվիրված էին տիրոջը, հավատարիմ նրան նույնիսկ մահվան գնով: Սամուրայների դասը փակ սոցիալական խումբ էր:

Սյոգունների իշխանության ժամանակ կրթությունը տարածվեց ճապոնական հասարակության բոլոր դասերի մեջ: Ավելացավ գրագետ մարդկանց ու մասնագետների թիվը: Դա նպաստեց գիտության և մշակույթի զարգացմանը:

Կաբուկի թատրոնի հիմնադիր Իձումոնո Օկունի

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ և ե՞րբ միավորեց Չինաստանը վաղ միջնադարում:
2. Ի՞նչ է կոչվում կառավարման այն համակարգը, որն ստեղծվել է Չինաստանում: Նկարագրե՛ք այն, հավանո՞ւմ եք այդ համակարգը, ինչո՞ւ:
3. Ինչպե՞ս Չինաստանն ազատագրվեց մոնղոլական տիրապետությունից:
4. Ինչո՞ւ էին չինացիները այդքան մեծ ուշադրություն դարձնում իրենց երկրի պատմությանը: Թվարկե՛ք միջնադարյան Չինաստանում կատարված գյուտերը:
5. Ինչպե՞ս Ճապոնիան խուսափեց մոնղոլական նվաճումից:
6. Փորձե՛ք պարզաբանել սյոգունության դերը ճապոնական կայսրությունում:
7. Չինաստանն ու Ճապոնիան ե՞րբ ինքնամեկուսացան արտաքին աշխարհից:
8. Ի՞նչ առանձնահատկություններ ուներ միջնադարի ճապոնական մշակույթը:

Գործնական աշխատանք

Զույգերով ու խմբային քննարկման միջոցով փորձե՛ք պարզել, թե ինչո՞ւ Չինաստանն ու Ճապոնիան ինքնամեկուսացան արտաքին աշխարհից և ի՞նչ հետևանքներ ունեցավ դա նրանց համար:

ՆՈՐ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յանցզյան, Չանան, Տան արքայատոհմ, ընտրություն ըստ արժանիքի, Տայցու, Մին կայսրություն, Մակաո, Պեկին, մանջուրական ցեղեր, Ցին կայսրություն, պագոդա, «Մի՛ մոռացիր անցյալը. այն ապագայի ուսուցիչն է», Մինամոտո, յոգուն, «կամիկաձե», Տոկուգավա, սամուրայ, Հիրագանա, Կաբուկի

ԲԱԺԻՆ 4 ԱՄՓՈՓՈՒՄ

1. Արաբական թերակղզում բնակվող արաբական ցեղերը VII դ. առաջին կեսին ստեղծեցին միասնական պետություն: Պետության գլուխ կանգնած էր խալիֆան, որն իր ձեռքում էր կենտրոնացրել աշխարհիկ և հոգևոր ամբողջ իշխանությունը: Վերելք ապրեց ու մեծ նվաճումների հասավ արաբական մշակույթը:

   Ինչի՞ շնորհիվ արաբները ստեղծեցին վաղ միջնադարի ամենաուժեղ տերություններից մեկը: Քարտեզի վրա ցո՛ւց տվեք տերության սահմանները: Երբ անկում ապրեց Արաբական խալիֆայությունը, նշե՛ք դրա պատճառները: Արժևորե՛ք արաբական մշակույթը:

2. Եվրասիական տափաստաններում ապրող թյուրքական ու մոնղոլական ցեղերը զբաղվում էին քոչվորական անասնապահությամբ և անընդհատ տեղաշարժվում էին: Ժամանակի ընթացքում նրանք ստեղծեցին պետություններ, որոնք սովորաբար ընդգրկում էին հսկայական տարածքներ:

   Ինչ է քոչվորական կայսրությունը, թվարկե՛ք դրանց: Ինչո՞ւ էին դրանք սովորաբար կարճատև կյանք ունենում: Ո՞րն էր այս շարքից բացառությունը. ե՞րբ է ստեղծվել, ինչ տարածքներ էր զբաղեցնում XVII դ. կեսի դրությամբ:

3. Միջնադարում Հնդկաստանի պատմության մեջ եղան վերելքի և անկման շրջաններ: Հնդկական մշակույթը հարստացավ նոր ձեռքբերումներով:

   Գուպտաների դարաշրջանում ինչ փոփոխություններ կրեց հնդկական հասարակության կաստայական կարգը: Ներկայացրե՛ք հնդկական մշակույթի նվաճումները:

4. Վաղ միջնադարում Չինաստանը վերամիավորվեց: Մոնղոլական նվաճումները մի որոշ ժամանակ խաթարեցին երկրի բնականոն կյանքը: Չինաստանի պատմության մի առանձնահատուկ շրջան սկսվեց XVI դարից:

Միջնադարի չինական մշակույթը տվել է համաշխարհային նշանակության արժեքներ:

> *Գնահատեք չինացիների ստեղծած ընտրություն ըստ արժանիքի համակարգը: Երբ և ինչու Չինաստանը ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից: Թվարկեք չինական գյուտերը:*

5. Յուրահատուկ աշխարհագրական պայմանները, ինչպես նաև հարևան Չինաստանի ազդեցությունը մեծ դեր են խաղացել Ճապոնիայի միջնադարյան պատմության մեջ: Միջնադարի ավարտին Ճապոնիան նույնպես ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից: Ճապոնիան կարողացավ ստեղծել ինքնատիպ ու զարգացած մշակույթ:

> *Ինչ է յոգոնությունը: Ո՞ր տոհմի յոգունների օրոք Ճապոնիան ինքնամեկուսացավ արտաքին աշխարհից: Ինչո՞վ էր ինքնատիպ ճապոնացիների մշակույթը:*

ԲԱԺԻՆ 5 ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ

§23. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՆԴԿԱՍՏԱՆ ՏԱՆՈՂ ԾՈՎԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Դարեր շարունակ Հնդկաստան–Եվրոպա առևտրական կապերն իրագործվում էին ցամաքային ճանապարհներով: Դրանք հաճախ էին փակվում պատերազմների պատճառով: Երկար ժամանակ եվրոպացիները որոնում էին Արևելք տանող այլ ճանապարհներ: Այդ նպատակով նրանք սկսեցին կազմակերպել նաև ծովային արշավախմբեր:

1492 թ. իսպանացիները կազմակերպեցին արշավախումբ, որը ղեկավարում էր **Քրիստափոր Կոլումբոսը:** Նա համոզված էր, թե հասել է բաղձալի նպատակին, սակայն իրա-

Նորահայտ երկիրը Կոլումբոսը հայտարարում է Իսպանիայի արքայի սեփականությունը:

կանում հայտնաբերել էր եվրոպացիներին անհայտ մայրցամաք: Իտալացի **Ամերիգո Վեսպուչին** առաջինը կռահեց, որ Կոլումբոսի հայտնաբերածը Հնդկաստանը չէ: Այդ պատճառով էլ նրա անունով նոր մայրցամաքն անվանեցին Ամերիկա:

1498 թ. պորտուգալացի **Վասկո դա Գամայի** արշավախումբը, շրջանցելով Աֆրիկան, հայտնագործեց Հնդկաստան տանող ծովային ճանապարհը:

1519–1521 թթ. Ֆերնան Մագելանի արշավախումբը կատարեց ծովային առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը:

Աշխարհագրական հայտնագործությունները հետագայում ևս շարունակվեցին: Եվրոպացիները հայտնագործեցին Ավստրալիան, Նոր Զելանդիան և բազմաթիվ կղզիներ:

Ֆերնան Մագելանի հուշարձանը Չիլիում

ՄԻՆՉԿՈԼՈՒՄԲՈՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Երբ եվրոպացիները մուտք գործեցին Ամերիկա, այնտեղ ապրում էր 15–20 մլն տեղաբնիկ: Կոլումբոսը, կարծելով, թե հայտնագործել է Հնդկաստանը, նրանց անվանեց հնդկացիներ: Հնդկացիական երեք ցեղեր՝ **ացտեկները, մայաները** և **ինկերը,** ունեին իրենց պետությունները:

Ացտեկներն ապրում էին **Մեքսիկայի** կենտրոնական և արևմտյան շրջաններում: XV դարում նրանք միավորվեցին և ստեղծեցին իրենց պետությունը: Այն իր հզորության գագաթնակետին հասավ **Մոնթեսումայի** կառավարման ժամանակ (1502–1520 թթ.):

Ացտեկների առաջնորդ Մոնթեսումա

Կորտեսի մուտքը Մեքսիկա

Ացտեկները նստակյաց ժողովուրդ էին: Նրանք կառուցում էին շքեղ պալատներ, տաճարներ, հասարակական շինություններ: Ունեին լավ կազմակերպված բանակ: Դպրոցներում սովորեցնում էին մարտարվեստի կանոնները և պատրաստում ուժեղ ռազմիկներ:

1519 թ. իսպանական նվաճողները **Ֆերնան Կորտեսի** գլխավորությամբ մտան Մեքսիկա և երկու տարում գրավեցին ացտեկների պետությունը:

Մայաների առանձին քաղաք–պետությունները Մեքսիկայի հարավում էին: Սովորաբար քաղաքը շրջակա գյուղերի հետ միասին կազմում էր մեկ պետություն:

Մայաները մինչկոլումբոսյան Ամերիկայում ապրող միակ ժողովուրդն էին, որ հիերոգլիֆային գիր ունեին: Նրանք ունեին երկու օրացույց: Առաջինը բաղկացած էր 365, իսկ երկրորդը՝ 260 օրից: Երկրորդ օրացույցը ստեղծել էին կրոնական արարողությունների և տոների համար:

Մայաների քաղաք–պետությունները մինչև XVI դ. կեսը նվաճվեցին իսպանացիների կողմից:

Ժամանակակից Պերուի և Բոլիվիայի լեռնային շրջաններում էր գտնվում **ինկերի** պետությունը:

Սկզբում ինկեր անվանում էին այնտեղ բնակվող ցեղերից մեկին: Հետագայում պետության կառավարչին ևս սկսեցին կոչել **ինկա,** և երկիրն ստացավ **Ինկերի պետություն** անվանումը**:**

Երկրի բնակչությունը բաժանվում էր կաստաների: Բարձրագույն կաստան կազմում էին ինկերը: Նրանք չէին աշխատում և հարկեր չէին վճարում. միայն զբաղվում էին երկրի կառավարմամբ և ռազմական գործով: Ինկերը կառուցում էին հզոր ամրոցներ, որոնց շարվածքում տեղադրում էին մի քանի տոննա քաշ ունեցող սրբատաշ քարեր:

1532–1536 թթ. իսպանական նվաճողները Ֆրանսիսկո Պիսարոյի գլխավորությամբ գրավեցին ինկերի պետությունը:

Ֆրանսիսկո Պիսարո

Ինկերի Մաչու–Պիկչու քաղաքի ավերակները պահպանվել են մինչև մեր օրերը:

ԻՆԿԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼ ԿԱՅՍՐԸ

Ինկերի պետության հիմնադիրը կայսր Պաչակուտի Յուպանկին էր (XV դարի կեսեր): Պաչակուտի նշանակում է «աշխարհը վերափոխող»: Նրա երկարամյա կառավարման ընթացքում Ինկերի պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Կայսրը ոչ միայն հմուտ զորավար էր, այլև համակողմանի զարգացած անձնավորություն:

Պաչակուտիի նպատակը իր վիթխարածավալ տերությունն ամրապնդելն էր: Նրա կազմած նախագծով հիմնավորապես վերակառուցվեց մայրաքաղաք Կուսկոն՝ վերածվելով շքեղագույն քաղաքի:

Կայսրը մեծ նշանակություն էր տալիս իր պետության պատմությանը: Այն ավելի լավ ուսումնասիրելու նպատակով նա ճանապարհորդեց երկրի հիշարժան վայրերով: Վերադառնալով մայրաքաղաք՝ կայսրը հավաքեց անցյալի գիտակ մարդկանց և հանձնարարեց գրել «աշխարհի պատմություն»: Երբ աշխատանքը հասցվեց ավարտին, այն պատկերվեց վիթխարի գորգերի վրա և փակցվեց դրա պահպանման համար կառուցված հատուկ շենքի բոլոր պատերին: Այն ինկերի պետության պատկերազարդ պատմությունն էր:

Գրին և գիտություններին տիրապետող մարդիկ օգտվում էին կայսեր հատուկ բարեհաճությունից: Նրանք երկրում արտոնյալ դիրք ունեին: Կայսրը հիմնեց «համալսարան», որտեղ ինկերի և նվաճված երկրների ազնվականության երեխաները պարտադիր պետք է ուսանեին՝ տիրապետելով ժամանակի բոլոր գիտություններին:

Կայսրը դատապարտում էր ծուլությունը և անգործությունը: Բոլորը պետք է աշխատեին և պետությանը տային նրա հասանելիքը: Իր հերթին պետությունը պարտավոր էր բավարարել մարդկանց կարիքները, յուրաքանչյուրին՝ ըստ արժանվույն: Նրա կարծիքով, եթե մարդն ինչ–որ գործ է անում, ապա պետք է կատարելապես տիրապետի դրան: Նա ասում էր. *«Ծիծաղի է արժանի նա, ով փորձում է հաշվել ասպղերը, սակայն չի կարող հաշվել խաղաքարերը և հանգույցները»:*

Պաչակուտին խիստ քայլերի դիմեց արդար դատարաններ ստեղծելու համար: Կայսեր կարծիքով՝ այն դատավորները, ովքեր կաշառք էին վերցնում, պետք է համարվեն գողեր և դատապարտվեն մահվան:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները


ԱՄԵՐԻԿԱ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ԱՄԵՐԻԿԱ
ԱՖՐԻԿԱ
ԱՍԻԱ
ԱՎՍՏՐԱԼԻԱ
ԱՆԳԼԻԱ
ՖՐԱՆՍԻԱ
ԻՍՊԱՆԻԱ
ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՈՎՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ՊՈԼՈՆԻԱ
ՍԱՄՈՈՒԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
ՉԻՆԱՍՏԱՆ
ՄԱԼԱԿԱ
ՍԱՄՈՒՐԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍՈՒԼ
ՍԱՄԱՐԿԱՆԴ
ԲԱՂԴԱԴ
ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅՈՒՆ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
ՍԱՖԱՎԻԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒԼԹԱՆ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Եվրոպացիներն ինչո՞ւ սկսեցին փնտրել դեպի Հնդկաստան տանող ծովային ուղիներ:
2. Ե՞րբ է Կոլումբոսը հայտնաբերել Ամերիկան: Ո՞ւմ անունով է կոչվել այդ մայրցամաքը:
3. 1498 թ. ո՞վ և ի՞նչ ծովային ուղի հայտնագործեց:
4. Ո՞վ էր գլխավորում շուրջերկրյա առաջին ճանապարհորդությունը:
5. Ացտեկների պետությունը ե՞րբ է ստեղծվել և ո՞ր տարածքում:
6. Ո՞ւմ գլխավորությամբ իսպանացիները գրավեցին Մեքսիկան:
7. Որտե՞ղ էին՝ ա) մայաների քաղաք–պետությունները, բ) ինկերի պետությունը:
8. Իսպանացի նվաճողները Պիսարոյի գլխավորությամբ ե՞րբ գրավեցին ինկերի պետությունը:

Գործնական աշխատանք

Կատարե՛ք «Տրամագիր» վարժությունը՝ համեմատելով ացտեկներին, մայաներին և ինկերին:

Նոր հասկացություններ, անուններ

Քրիստափոր Կոլումբոս, Ամերիգո Վեսպուչի, Վասկո դա Գամա, Ֆերնան Մագելան, ացտեկ, Մոնթեսումա, մայա, ինկա, Ինկերի պետություն, Մեքսիկա, Ֆրանսիսկո Պիսարո, Էրնան Կորտես

§24. ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

ՎԵՐԱԾՆՆԴԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Արևմտահռոմեական կայսրության կործանումից հետո Արևմտյան Եվրոպայում անտիկ հունահռոմեական մշակույթը մոռացության մատնվեց: Սակայն միջնադարյան հասարակության մարդիկ անտիկ դարաշրջանը պատկերացնում էին որպես իդեալական ժամանակաշրջան, երբ մշակույթը ծաղկում էր ապրում:

Միքելանջելո Բուոնարոտի

XIV դարից սկսած՝ փորձեր էին արվում վերականգնելու և օգտագործելու հունահռոմեական մշակույթի առավել կարևոր նվաճումները: Դասական լատիներենը նորից վերածնվեց և դարձավ պաշտոնական հաղորդակցության և գիտական լեզու: Այդտեղից էլ այդ ժամանակաշրջանը (XIV–XVI դդ.) ստացավ **Վերածնունդ** (Ռենեսանս) անվանումը: *Վերածնունդը սկզբնավորվեց Հյուսիսային Իտալիայում, ապա տարածվեց ամբողջ Եվրոպայում:*

Իտալիայի քաղաքների տնտեսական և մշակութային բուռն զարգացումը պահանջում էր փոխել վերաբերմունքը հոգևոր կյանքի հանդեպ: Մարդիկ սկսեցին ավելի շատ ուշադրություն դարձնել երկրային կյանքին: Մարդը հայտնվեց Վերածննդի գործիչների հետաքրքրությունների կենտրոնում: Ուստի այդ գործիչներին սկսեցին անվանել **հումանիստներ՝** մարդասերներ:

Միքելանջելո Բուոնարոտի «Ողբ»

Հումանիստների կարծիքով մարդն ունի

Ջովանի Բոկաչո

արժանապատվություն, անհատական արժեք և ամեն ինչի հասնելու ընդունակություն:

ՎԵՐԱԾՆՆԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Իտալական գրականությունը հիմնադրել են «Ֆլորենցիայի երեք լուսատուները»՝ **Դանթե Ալիգիերին, Ֆրանչեսկո Պետրարկան** և **Ջովանի Բոկաչոն:**

Վերածննդի դարաշրջանում հատկապես նշանակալից է XV դարի վերջից մինչև XVI դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածը: Այն անվանում են **Բարձր Վերածնունդ,** որովհետև մշակույթն այդ ընթացքում հասավ իր զարգացման բարձրակետին: Այս դարաշրջանում են ստեղծագործել նշանավոր արվեստագետներ **Լեոնարդո դա Վինչին, Միքելանջելո Բուոնարոտին** և **Ռաֆայել Սանտին:**

Մեծ էր Միքելանջելոյի դերը Վերածննդի գեղանկարչության և քանդակագործության մեջ: Նա մանրամասն ուսումնասիրել էր մարդու մարմնի կառուցվածքը: Դա նրան հնարավորություն տվեց քանդակելու և նկարելու մարդկային իրական կերպարներ:

Ռաֆայել Սանտի «Սիքստինյան Տիրամայրը»

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Վերածնության մշակույթը տարածվեց նաև եվրոպական մյուս երկրներում: Քանի որ դրանք հիմնականում ընկած էին Ալպյան լեռներից հյուսիս, ապա տեղի վերածնունդը ստացել է **Հյուսիսային Վերածնունդ** անվանումը:

Դրա նշանավոր գործիչներից էր նիդերլանդացի **Էրազմ Ռոտերդամցին,** որը ստեղծագործում էր Գերմանիայում: Նրան մեծ հռչակ բերեց **«Գովք հիմարության»** երգիծական ստեղծագործությունը: Այստեղ նա ծաղրի է ենթարկում եկեղեցու քարացած կանոնները և մարդկանց արատները:

Նշանավոր հումանիստ էր նաև անգլիացի **Թոմաս Մորը:** Նա հայտնի դարձավ **«Ուտոպիա»** գրական ստեղծագործությամբ, որտեղ նկարագրում է իրականում գոյություն չունեցող «Ուտոպիա» անունով մի կղզի: Այնտեղ բոլոր մարդիկ, անկախ զբաղմունքից, ապրում են հավասար, հագնվում և սնվում են միատեսակ: «Ուտոպիան» գրվեց այն ժամանակ, երբ Անգլիայում ոչխարաբուծության զարգացման համար գյուղացիներին քշում էին հողերից և մշակելի հողերը դարձնում արոտավայրեր: *«Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»,*— ասում էր Թ. Մորը:

Զարգացում ապրեց նաև Հյուսիսային Վերածննդի արվեստը: Այդ բնագավառում հատկապես մեծ հռչակ ձեռք բերեցին գերմանացի նկարիչ **Ալբրեխտ Դյուրերը** և նիդերլանդացի նկարիչ **Պիտեր Բրոյգել Ավագը:**

Փաստորեն, Վերածննդի դարաշրջանում սկսեց ձևավորվել եվրոպական նոր մշակույթը:

Ալբրեխտ Դյուրեր «Նապաստակ»

Լեոնարդո դա Վինչի «Կզաքիսով կինը»

Դանթեն գրել է բանաստեղծություններ, գիտական աշխատություններ լեզվի և պետության կառուցվածքի մասին: Սակայն նրան անմահ փառք բերեց «Աստվածային կատակերգություն» պոեմը, որտեղ ներկայացրել է անդրշիրիմյան կյանքը:

Լեոնարդո դա Վինչին Վերածննդի շրջանի խոշորագույն դեմքերից է: Որպես գեղանկարիչ հայտնի է իր «Ջոկոնդա» («Մոնա Լիզա») նկարով և «Խորհրդավոր ընթրիքը» որմնանկարով: Լեոնարդոն նախագծել է նաև թռչող սարքեր, ստորջրյա մեքենաներ:

Վերածննդի արվեստի նշանավոր գործիչներից էր Ռաֆայելը: Նրա բազմաթիվ «մադոննաները» («Տիրամայր») կնոջ գեղեցկության ու մայրական քնքշանքի գովերգություն են: Ռաֆայելին հատկապես մեծ փառք բերեց «Սիքստինյան Տիրամայրը» կտավը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է նշանակում Վերածնունդ:
2. Որտե՞ղ է սկզբնավորվել Վերածննդի դարաշրջանը:
3. Ովքե՞ր էին հումանիստները:
4. Ովքե՞ր էին «Ֆլորենցիայի երեք լուսատուները»:
5. Ո՞ր ժամանակաշրջանն է կոչվում Բարձր Վերածնունդ և ինչո՞ւ: Թվարկե՛ք իտալական Բարձր Վերածննդի նշանավոր արվեստագետներին:
6. Ի՞նչ է Հյուսիսային Վերածնունդը: Թվարկե՛ք դրա ներկայացուցիչներին:
7. Թոմաս Մորի ստեղծագործությունը ինչո՞ւ էր կոչվում «Ուտոպիա»:

Քննարկման հարց

Որո՞նք էին Վերածննդի նախադրյալները:

ՆՈՐ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերածնունդ, հումանիստ, «Ֆլորենցիայի երեք լուսատուներ», Դանթե Ալիգիերի, Ֆրանչեսկո Պետրարկա, Ջովանի Բոկաչո, Բարձր Վերածնունդ, Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո Բուոնարոտի, Ռաֆայել Սանտի, Հյուսիսային Վերածնունդ, Էրազմ Ռոտերդամցի, Թոմաս Մոր, Ալբրեխտ Դյուրեր, «Ձեր ոչխարները խժռում են մարդկանց», Պիտեր Բրոյգել Ավագ

§25. ՌԵՖՈՐՄԱՑԻԱՆ

ՄԱՐՏԻՆ ԼՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Մարտին Լյութեր

Միջնադարում հավատացյալի համար կարևոր նշանակություն ուներ այն խնդիրը, թե ինչպես կարելի է փրկվել գործած մեղքերից: Հոգևորականները քարոզում էին, թե առանց եկեղեցու օգնության հնարավոր չէ փրկություն գտնել: Դրա համար անհրաժեշտ է ամեն օր այցելել եկեղեցի, զբաղվել բարեգործությամբ, եկեղեցու կարիքների համար դրամ հատկացնել: Եկեղեցին Հռոմի պապի անունից հավատացյալներին **ինդուլգենցիաներ** (փրկության թղթեր) էր վաճառում: Ինդուլգենցիա գնողը ազատվում էր բոլոր մեղքերից:

1517 թ. հոկտեմբերի 31–ին Գերմանիայի **Վիտենբերգ** քաղաքի Մայր տաճարի դռանը մի թուղթ փակցվեց: Այն պարունակում էր **95 դրույթներ:** Դրանց հեղինակն էր Վիտենբեր-

Լյութերն այրում է պապական հրովարտակները:

Լյութերի դրույթներն ուղղված էին ինդուլգենցիաների վաճառքի դեմ: Նա կարծում էր, որ մարդը կարող է փրկության հասնել միայն հավատով, այլ ոչ թե թուղթ գնելով: Լյութերը կարծում էր, որ հավատի միակ աղբյուրը Աստվածաշունչն է, այլ ոչ թե Հռոմի պապերի ընդունած որոշումները:

գի համալսարանի պրոֆեսոր **Մարտին Լյութերը**: Նա գտնում էր, որ մարդը կարող է փրկվել միայն իր հավատով, այլ ոչ թե ինդուլգենցիաներ գնելով:

Երբ **Կարլոս V կայսրը** հրամանագիր արձակեց Լյութերի քարոզած գաղափարներն արգելելու մասին, նրա կողմնակիցները բողոքեցին դրա դեմ: Այստեղից էլ լյութերականներին սկսեցին անվանել **բողոքականներ:** Նրանք սկսեցին բարեփոխումներ անցկացնել գերմանական կաթոլիկ եկեղեցում: Դրանց արդյունքում Գերմանիայում առաջացավ **բողոքական** (լյութերական) եկեղեցի: Հաստատվեց *«Ում իշխանությունը, նրա էլ՝ հավատը»* սկզբունքը: Այսինքն՝ տվյալ տարածքի իշխանն էր որոշում իր հպատակների հավատը:

ՌԵՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Բարեփոխումների արդյունքում կաթոլիկ եկեղեցուն զուգահեռ առաջանում էին բողոքական նոր եկեղեցիներ: Ահա թե ինչու այս

Լյութերի դրույթներից

Յուրաքանչյուր քրիստոնյա, եթե նա անկեղծորեն զղջում է, առանց ինդուլգենցիայի էլ ստանում է լիակատար թողություն: Եկեղեցու ճշմարիտ գանձը, իհարկե, մեղքի թողությունը չէ, այլ Աստծո մեծության և բարեհաճության սրբազան ավետարանը:

Քրիստոնյաներին պետք է սովորեցնել, որ նա, ով տեսնում է կարիքավորի և, չնայած դրան, դրամ է տալիս ինդուլգենցիա ձեռք բերելու համար, դրանով ոչ թե պապի կողմից թողություն է ստանում, այլ Աստծո զայրույթը:

Ասել, թե պապի զինանշանով զարդարված և տաճարներում դրված թողության խաչը Քրիստոսի խաչին հավասար արժեք ունի, սրբապղծություն է:

Վիտենբերգի տաճարի դարպասները, որի վրա փորագրված են Լյութերի 95 դրույթները

Անգլիայի թագավոր Հենրիխ VIII

ժամանակաշրջանը՝ XVI դարը, ստացավ **Ռեֆորմացիայի (վերափոխումների) դարաշրջան** անվանումը:

Աստիճանաբար Ռեֆորմացիան ընդլայնում էր իր սահմանները Եվրոպայում:

Անգլիայում **Հենրիխ VIII** թագավորը **1534 թ.** հրապարակեց գերագահության մասին օրենքը: Այն սահմանում էր, որ անգլիական եկեղեցու առաջնորդը ոչ թե Հռոմի պապն է, այլ Անգլիայի թագավորը: Փակվեցին մատուռները և վանքերը, իսկ եկեղեցական հողերը բռնագրավվեցին: Ժամասացությունը սկսեցին կատարել անգլերենով: Եպիսկոպոսներին պաշտոնների էր նշանակում խորհրդարանը: Հոգևորականները վարձատրվում էին պետական գանձարանից: Արդյունքում Անգլիայում ձևավորվեց բողոքական եկեղեցի, որը ստացավ **անգլիկան եկեղեցի** անվանումը:

Ֆրանսիայից Շվեյցարիա տեղափոխված **Ժան Կալվինը** քարոզում էր, որ Աստված մարդկանց համար նախասահմանել է կա՛մ փրկություն, կա՛մ փորձություն: Երկրային գործերում հաջողակ մարդը ընտրյալ է: Ձախողակ մարդիկ պետք է աշխատեն իրենց վարքով ու գործողություններով դառնալ ընտրյալ: Դրա համար Կալվինը մշակեց բարեպաշտության և օրինակելի վարքի նոր կանոններ: Կալվինի գաղափարները այնքան տարածվեցին, որ Ժնև քաղաքի իշխանությունները ձեռնամուխ եղան դրանց իրագործմանը: Սկսեցին արգելել զվարճությունները, երաժշտությունը, լավ հագնվելը, թղթախաղը: Ժամանակակիցները Կալվինին համարում էին **«Ժնևի պապ»:**

ՀԱԿԱՌԵՖՈՐՄԱՑԻԱ



Ժան Կալվին

Ռեֆորմացիոն շարժման հետևանքով կաթոլիկ եկեղեցու միասնությունը տրոհվեց: Այն պահպանելու համար վերջինս դիմեց հակաքայլերի, որոնք ստացան **Հակառեֆորմացիա** անվանումը:

1559 թ. լույս տեսավ **«Արգելված գրքերի»** առաջին ցուցակը: Կաթոլիկներին արգելված էր կարդալ այնտեղ գրանցված գրքերը:

Ռեֆորմացիայի դեմ պայքարում մեծ դեր խաղաց իսպանացի **Իգնատիոս Լոյոլայի** հիմնած **«Հիսուս Քրիստոսի զինվորություն»** (ճիզվիտներ) վանական նոր միաբանությունը: Նրա անդամները երդվում էին լինել աղքատ, չամուսնանալ և հնազանդ ու անխոս ենթարկվել Հռոմի պապին: Միաբանությունը բացեց դպրոցներ, համալսարաններ, որտեղ պատրաստում էին կաթոլիկ քարոզիչներ:

Ռեֆորմացիայի գործիչները պապից պահանջում էին տիեզերական ժողով հրավիրել և քննարկել եկեղեցում բարեփոխումներ անցկացնելու խնդիրը: Ժողովը հրավիրվեց **Տրիդենտ** քաղաքում: Սակայն քննարկեցին ոչ թե բարեփոխումների, այլ Ռեֆորմացիայի դեմ պայքարելու հարցեր: Ընդունվեցին որոշումներ, որոնց նպատակն էր բարձրացնել եկեղեցու հեղինակությունը:

Սակայն կաթոլիկ եկեղեցին չկարողացավ դիմագրավել Ռեֆորմացիային: Եվրոպայում փակվում էին վանքերը և վանական դպրոցները: Բռնագրավվում էր եկեղեցու շարժական և անշարժ գույքը: Պապականությունը աստիճանաբար կորցնում էր իր հզորությունն ու ազդեցությունը, իսկ բողոքականությունն ավելի էր ընդլայնում իր սահմանները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ էր ինդուլգենցիան և ինչ նպատակի էր ծառայում:
2. Երբ և որտեղ փակցվեցին Մարտին Լյութերի 95 դրույթները: Ինչի՞ և ո՞ւմ դեմ էին ուղղված դրանք:
3. Ովքե՞ր ստացան բողոքական անվանումը և ինչո՞ւ:
4. Բացատրե՛ք «Ում իշխանությունը, նրա էլ՝ հավատը» սկզբունքի իմաստը:
5. Ո՞վ և երբ հրապարակեց գերագահության մասին օրենքը Անգլիայում: Ներկայացրե՛ք անգլիկան եկեղեցու առանձնահատկությունները:
6. Ո՞վ էր Ժան Կալվինը և ինչ էր քարոզում:
7. Ինչ է Հակառեֆորմացիան: Երբ լույս տեսավ «Արգելված գրքերի» առաջին ցուցակը:
8. Ո՞վ էր Իգնատիոս Լոյոլան և ինչ հիմնեց:

Քննարկման հարց

Կաթոլիկ եկեղեցին ինչ քայլեր ձեռնարկեց իր սասանված հեղինակությունը վերականգնելու համար: Հաջողվե՞ց դա, թե՞ ոչ. հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

ՆՈՐ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինդուլգենցիա, Մարտին Լյութեր, Կարլոս V կայսր, բողոքականներ, «Ում իշխանությունը, նրա էլ՝ հավատը», Ռեֆորմացիա, Հենրիխ VIII, անգլիկան եկեղեցի, Ժան Կալվին, Հակառեֆորմացիա, «Արգելված գրքեր», ճիզվիտներ, Իգնատիոս Լոյոլա, Հիսուս Քրիստոսի զինվորություն, Տրիդենտ

§26. ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ

ՆԻԴԵՐԼԱՆԴԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային ծովի ափին գտնվող **Նիդերլանդներ** կոչվող երկիրը բաղկացած էր 17 գավառներից: XVI դարում այն գտնվում էր Իսպանիայի կազմում: Ռեֆորմացիայի գաղափարները լայն տարածում գտան նաև Նիդերլանդներում: Վախենալով, որ Ռեֆորմացիան կարող է վերածվել հակաիսպանական պայքարի, Իսպանիայի թագավոր **Ֆիլիպ II–ը** Նիդերլանդներում հիմնեց ինկվիզիցիայի դատարան և խստացրեց օրենքները: Սակայն դա չփրկեց իրավիճակը: **Ռեֆորմացիայի շարժումը վերաճեց ազգային–ազատագրական պատերազմի (1566–1609):**

Իսպանիայի արքա Ֆիլիպ II

Պատերազմը սկսվեց պատկերամարտական ապստամբությամբ: Կալվինականները սրբապատկերների պաշտամունքը չէին ընդունում: Կալվինական պատկերամարտները հարձակվում էին կաթոլիկական եկեղեցիների ու վանքերի վրա, ոչնչացնում էին այնտեղ գտնվող սրբապատկերները, մասունքները և բռնագրավում եկեղեցական գույքը: Ավերվեց շուրջ 5500 եկեղեցի ու վանք:

Սակայն ապստամբները շուտով պառակտվեցին: Հարավի գավառները որոշեցին դադարեցնել պայքարը: Նրանք շարունակեցին ճանաչել Իսպանիայի գերիշխանությունը: Փաստորեն, Նիդերլանդների

հարավային մասը մնաց Իսպանիայի կազմում: Այս տարածքի մի մասի վրա հետագայում առաջացավ **Բելգիա** պետությունը:

Հյուսիսային յոթ գավառները միավորվեցին և ստեղծեցին նոր պետություն՝ **Միացյալ Գավառների Հանրապետություն:** Որպես առավել զարգացած գավառ՝ հանրապետության գլուխ կանգնեց **Հոլանդիան:** Այդ պատճառով նորաստեղծ պետությունը սկսեցին անվանել նաև Հոլանդիա:

Նիդերլանդների բաժանումը հանգեցրեց հոլանդական և ֆլամանդական ժողովուրդների ձևավորմանը:

ԵՐԵՍՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ (1618–1648)

Ռեֆորմացիայի արդյունքում Գերմանիայում կազմավորվեցին կրոնական երկու խմբավորումներ: Լյութերական իշխանները ստեղծեցին **Ավետարանական միությունը,** իսկ կաթոլիկները՝ **Կաթոլիկական միավորումը:** Այս երկու խմբավորումների միջև ռազմական գործողություններ սկսվեցին **Չեխիայում**, որն այդ ժամանակ մտնում էր Սրբազան հռոմեական կայսրության մեջ: Ձինված բախումներին **1618 թ**. սկիզբ դրեց **Ավստրիան:** Շուտով պատերազմի մեջ մտան եվրոպական մի քանի երկրներ՝ Իսպանիան, Ֆրանսիան, Շվեդիան, Դանիան, Անգլիան, Հոլանդիան, Ռուսաստանը: ***Այսպես երկու խմբավորումների բախումը վերաճեց համաեվրոպական առաջին պատերազմի:*** Այն տևեց 30 տարի, այդ պատճառով էլ պատմության մեջ է մտել Երեսնամյա պատերազմ անունով:

Եվրոպայի քաղաքական քարտեզը (1648 թ.)

- Ավստրիական Հաբսբուրգների տիրույթները
- Իսպանական Հաբսբուրգների տիրույթները
- Ֆրանսիական թագավորության տիրույթները
- Շվեդական թագավորության տիրույթները
- Եկեղեցական տիրույթներ
- Գերմանական և իտալական մանր պետություններ
- Լեհաստանի և Շվեդիայի կողմից XVII դ. սկզբին Ռուսաստանից գրաված հողեր
- Պետությունների սահմանները 1648 թ.

Թվերով քարտեզի վրա նշված են.
1. Իսպանական Նիդերլանդներ
2. Շվեյցարական միություն
3. Ջենովայի հանրապետություն
4. Դուբրովնիկի հանրապետություն
5. Չեռնոգորիա

ԵՎՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԸ

Երեսնամյա պատերազմն ավարտվեց **1648 թ. Վեստֆալյան հաշտության** պայմանագրով: Եվրոպայի քաղաքական քարտեզում մեծ փոփոխություններ կատարվեցին: Պատերազմից հետո Եվրոպայում ուժեղացան Շվեդիան և Ֆրանսիան: Շվեդիան ստացավ Գերմանիայի հյուսիսային առափնյա շրջանների մեծ մասը: Փաստորեն, գերմանական պետությունները զրկվեցին Բալթիկ ծով դուրս գալու հնարավորությունից: Ֆրանսիային տրվեցին **Էլզասը** և նախկինում Ավստրիային պատկանող որոշ այլ շրջաններ: Ճանաչվեց **Շվեյցարիայի** և **Հոլանդիայի** անկախությունը:

Պայմանագրով հաստատվեց Գերմանիայի պառակտումը: Գերմանական իշխանությունները իրավունք ստացան մեկը մյուսի, ինչպես նաև այլ պետությունների հետ միություններ կազմելու:

Վեստֆալյան հաշտության պայմանագրի ստորագրումը, 1648 թ.

Պատերազմի կարևոր հետևանքներից էր նաև Ավստրիայի և Իսպանիայի ծրագրի տապալումը: Ըստ դրա՝ Եվրոպայում պետք է ստեղծվեր «քրիստոնեական կայսրություն»՝ այդ երկրներում կառավարող **Հաբսբուրգյան** արքայատոհմի գլխավորությամբ:

Այսպես՝ Վեստֆալյան հաշտությամբ Եվրոպայում հաստատվեց նոր աշխարհաքաղաքական իրավիճակ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտե՞ղ է գտնվում Նիդերլանդները: XVI դ. ո՞ր երկրի կազմում էր այն:
2. Ինչո՞ւ Նիդերլանդներում սկսվեց ազգային–ազատագրական պայքար: Որքա՞ն է այն տևել: Ինչպե՞ս սկսվեց և ինչո՞վ ավարտվեց այդ պայքարը:
3. Ի՞նչ նշանակություն ունեցավ Նիդերլանդական հեղափոխությունը:
4. Կրոնական ի՞նչ խմբավորումներ կազմավորվեցին Գերմանիայում:
5. Ե՞րբ է սկսվել համաեվրոպական առաջին պատերազմը:
6. Ներկայացրե՛ք Երեսնամյա պատերազմի պատճառները և հետևանքները:

Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ

Նիդերլանդներ, Ֆիլիպ II, Միացյալ Գավառների Հանրապետություն, Հոլանդիա, Բելգիա, Երեսնամյա պատերազմ, Ավետարանական միություն, Կաթոլիկական միավորում, Ավստրիա, Դանիա, Էլզաս, Շվեյցարիա, Հաբսբուրգների արքայատոհմ, Վեստֆալյան հաշտության պայմանագիր

§27. ՆՈՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհագրական հայտնագործությունները, ռազմական գործի, ձեռնարկատիրության և առևտրի զարգացումը ճշգրիտ գիտելիքների մեծ պահանջարկ առաջացրին:

Այդպիսի գիտելիքները սովորաբար ձեռք էին բերվում փորձի ու գիտական հայտնագործությունների միջոցով: Նման ճանապարհով ստացված գիտելիքները հեղափոխություն առաջացրին գիտության բնագավառում: Այսպես կոչված **Առաջին գիտական հեղափոխությունն** ընդգրկում է XVI–XVII դարերը: Գիտական մտքի աննախընթաց վերելքի շրջանում ամենից առաջ զարգացան տեխնիկան և բնական գիտությունները:

ՆՈՐ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Լեհ գիտնական **Նիկողայոս Կոպեռնիկոսը** (1473–1543) ժխտեց այն տեսակետը, թե Երկիր մոլորակը Տիեզերքի կենտրոնում է: Նա հանգեց այն եզրակացության, որ Տիեզերքի կենտրոնում Արեգակն է: Բոլոր մոլորակները, այդ թվում՝ Երկիրը, կլոր շրջածիրով պտտվում են Արեգակի շուրջը: Հասկանալով, թե ինչպես կընդունվի իր տեսությունը՝ Կոպեռնիկոսը բարեկամներին խնդրեց, որ իր աշխատությունը հրատարակեն իր մահից հետո:

Բժիշկ **Անդրեաս Վեզալիուսը** (XVI դ.)

ուսումնասիրում էր մարդու մարմնի գաղտնիքները: Նա հերձման միջոցով տվեց մարդկային մարմնի ճշգրիտ կառուցվածքը և նկարագրությունը: Ասում են, որ հերձում կատարելու համար Վեզալիուսը գողանում էր կախաղան հանված մարդկանց դիակները: Եկեղեցին արգելում էր ուսումնասիրել Աստծո ստեղծած մարդու մարմինը: Որպեսզի չենթարկվի եկեղեցու հալածանքներին, նա ստիպված էր դառնալ Կարլոս V կայսեր անձնական բժիշկը:

Իտալացի գիտնական **Ջորդանո Բրունոն** (1548–1600) կարծում էր, որ Տիեզերքը անսահման է: Այնտեղ կան բազմաթիվ մոլորակներ: Աստղերը հեռավոր արեգակներ են, որոնց շուրջը պտտվում են մարդկանցով բնակեցված մոլորակներ: Եկեղեցին չկարողացավ ստիպել Բրունոյին հրաժարվելու իր գաղափարներից. դրա համար էլ նա ողջակիզվեց:

Իտալացի աստղաբաշխ և ֆիզիկոս **Գալի-**

Կոպեռնիկոսի գիրքն արգելելու մասին հրամանագիրը

1616 թ. կաթոլիկ եկեղեցին դատապարտեց Կոպեռնիկոսի «Երկնային մարմինների պտտվելու մասին» գիրքը:

«Միաբանությանը լուր է հասել, որ կեղծ, աստվածային գրքին հակասող ... տեսությունը Երկրի պտտվելու և Արևի անշարժության մասին, որ քարոզում էր Նիկողայոս Կոպեռնիկոսը իր գրքում ... սկսել է տարածվել և շատերի կողմից ընդունվել: Այդ պատճառով ... միաբանությունը որոշեց, որ Նիկողայոս Կոպեռնիկոսի թվարկված աշխատությունները ... պետք է վերացվեն շրջանառությունից, քանի դեռ չեն շտկվել»:

«Ես՝ Գալիլեո Գալիլեյս՝ Վիչենցո Գալիլեյի որդին՝ ֆլորենցիացիս, իմ կյանքի յոթանասուներորդ տարում դատարանի առջև անձամբ կանգնելով, ծնկի գալով ձեր առջև՝ երդվում եմ, որ միշտ հավատացել եմ, այժմ էլ հավատում եմ և Աստծո կամոք այսուհետև էլ կհավատամ այն ամենին, ինչ որ քարոզում է և սովորեցնում սուրբ կաթոլիկ եկեղեցին: Բայց քանի որ այս սրբազան դատարանից ինձ արդեն վաղուց օրինական պահանջ է եկել, որ ես հրաժարվեմ կեղծ կարծիքից, ըստ որի՝ Արևը Տիեզերքի կենտրոնում է և անշարժ է, որպեսզի ես չպաշտպանեմ այդ կարծիքը, չուսուցանեմ այն, իսկ ես ստեղծեցի և գիրք հրատարակեցի, որտեղ շարադրում եմ դատապարտված տեսությունը և դրա օգտին հզոր փաստարկներ եմ բերում ... ապա դրա հետևանքով ինձ լրջորեն կասկածում են հերետիկոսության մեջ, այսինքն, որ ես մտածում և հավատում եմ, որ Արևը Տիեզերքի կենտրոնն է և անշարժ է, իսկ Երկիրը կենտրոն չէ և շարժվում է ...»:

լեո Գալիլեյը (1564–1642) նույնպես կարծում էր, որ Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը: Նա հայտնագործեց մարմինների ազատ անկման օրենքը: Ստեղծեց հզոր աստղադիտակ, որով դիտեց Յուպիտերի արբանյակները: Գալիլեյը առաջինը հայտնագործեց Լուսնի վրա գոյություն ունեցող անհարթությունները: Ինկվիզիցիան Գալիլեյին ստիպեց հրաժարվել իր գաղափարներից: Սակայն դուրս գալով դատարանից՝ Գալիլեյն ասել է. *«Բայց, այնուամենայնիվ, այն պտտվում է»:*

Անգլիացի փիլիսոփա **Ֆրենսիս Բեկոնը** (1561–1626) կարծում էր, որ շրջապատող միջավայրը և բնությունը անհրաժեշտ է ուսումնասիրել փորձի միջոցով: Նրա կարծիքով՝ գիտությունը մարդուն հնարավորություն կտա վերափոխելու կյանքը: **«Նոր Ատլանտիդա»** աշխատության մեջ Բեկոնը խոսում է Արեգակի էներգիայի օգտագործման, թռչող և ստորջրյա սարքերի մասին:

Առաջին գիտական հեղափոխության շրջանում ստեղծվեց նոր ժամանակների գի-

Գալիլեո Գալիլեյը ինկվիզիցիայի դատի ժամանակ

տությունը: Գիտության բնագավառում առանձին անհատների նվաճումները արագորեն դառնում էին եվրոպական գիտական մտքի սեփականությունը:

Այսպիսով՝ Առաջին գիտական հեղափոխությունը դարձավ այն նախադրյալներից մեկը, որն ապահովեց Եվրոպայի անցումը արդյունաբերական հասարակության:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նշե՛ք ճշգրիտ գիտելիքների պահանջարկի մեծացման պատճառները XV–XVI դարերում:
2. Բացատրե՛ք Առաջին գիտական հեղափոխություն հասկացության իմաստը: Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում այն:
3. Ի՞նչ տեսակետ էր պաշտպանում Կոպեռնիկոսը:
4. Ո՞վ էր Վեզալիուսը: Ինչո՞վ է հայտնի:
5. Ինչո՞ւ Բրունոյին ողջակիզեցին:
6. Ներկայացրե՛ք Գալիլեյի դերը առաջին գիտական հեղափոխության մեջ:
7. Ո՞րն է Բեկոնի՝ շրջապատող միջավայրի և բնության ուսումնասիրության գլխավոր սկզբունքը: Ի՞նչ աշխատություն է գրել նա:

Քննարկման հարց

Ի՞նչ նշանակություն է ունեցել Առաջին գիտական հեղափոխությունը:

ՆՈՐ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին գիտական հեղափոխություն, Նիկողայոս Կոպեռնիկոս, Անդրեաս Վեզալիուս, Գալիլեո Գալիլեյ, «Բայց այնուամենայնիվ այն պտտվում է», Ջորդանո Բրունո, Ֆրենսիս Բեկոն, «Նոր Ատլանտիդա» աշխատություն

ԲԱԺԻՆ 5 ԱՄՓՈՓՈՒՄ

1. Երկար ժամանակ Հնդկաստան–Եվրոպա առևտրական կապերն իրագործվում էին Միջերկրական ծովով և ցամաքային ճանապարհներով: Թուրքական նվաճումների հետևանքով Հնդկաստան տանող ճանապարհները վտանգավոր էին դարձել: Այդ պատճառով եվրոպացիները փորձում էին գտնել Հնդկաստան տանող այլ ճանապարհներ: Այսպես սկսվեց Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանը:
   Երբ եվրոպացիները հայտնաբերեցին Ամերիկան, այստեղ ապրում էին բազմաթիվ ցեղեր, որոնց նրանք անվանեցին հնդկացիներ:

   Թվարկեք նշանավոր ծովագնացների և նրանց հայտնագործությունները: Որտե՞ղ էին բնակվում ացտեկները, մայաները և ինկերը, զարգացման ինչ մակարդակի էին հասել նրանք XVI դարի սկզբին: Ինչ հետևանքներ ունեցան Աշխարհագրական մեծ հայտնագործությունները:

2. Արևմտահռոմեական կայսրության անկման և քրիստոնեության հաստատման ժամանակ անտիկ հունահռոմեական մշակույթը հիմնականում մոռացության մատնվեց: Սակայն XIV դ. սկսած՝ փորձեր էին արվում վերականգնելու և օգտագործելու այն: Այսպես սկսվեց Վերածննդի դարաշրջանը: Վերածննդի դարաշրջանի գործիչները սկսեցին մեծ ուշադրություն դարձնել երկրային կյանքի և մարդու վրա: Բուռն վերելք ապրեցին գրականությունը և արվեստը:

   Ինչ է Վերածնունդը: Փորձեք պարզաբանել դրա նախադրյալները: Թվարկեք Վերածննդի հայտնի ներկայացուցիչների: Վերհանեք Վերածննդի նշանակությունը:

3. Եվրոպայում տեղի ունեցած սոցիալական, քաղաքական և մշակութային տեղաշարժերը պահանջում էին փոփոխություններ կատարել նաև քրիստոնեական եկեղեցու ներսում: Պապականությունը, ընդհակառակը, խստացրեց հալածանքները փոփոխությունների կողմնակիցների նկատմամբ: Սակայն դա արդյունք չտվեց, սկսվեց Ռեֆորմացիայի դարաշրջանը: Ռեֆորմացիոն շարժման դեմ պայքարելու համար կաթոլիկ եկեղեցին դիմեց մի շարք քայլերի:

Ինչ է Ռեֆորմացիան, նշեք հայտնի գործիչների, ում էին անվանում «Ժնևի պապ»: Ինչ է Հակառեֆորմացիան: Երբ է հրատարակվել «Արգելված գրքերի» առաջին ցուցակը: Ինչ արդյունքներ տվեց Ռեֆորմացիան:

4. Վերածնունդը, Ռեֆորմացիան, Աշխարհագրական մեծ հայտնագործությունները, նոր գիտության ձևավորումը շաղկապող կամուրջ էին միջնադարի Եվրոպայի և նոր շրջանի Եվրոպայի միջև: Սակայն միջնադարը իր տեղը դժվարությամբ էր զիջում նոր ժամանակներին, ինչի արդյունքում էլ տեղի էին ունենում բախումներ հնի և նորի միջև: Իսպանական տիրապետության դեմ Նիդերլանդներում սկսված ազգային–ազատագրական պատերազմը վերածվեց հեղափոխության, որի արդյունքում ստեղծվեցին Հոլանդիա և Բելգիա պետությունները: Երեսնամյա պատերազմը առաջին համաեվրոպական պատերազմն էր: Դրա արդյունքում ստեղծվեց նոր աշխարհաքաղաքական իրավիճակ:

Երբ է տեղի ունեցել Նիդերլանդական հեղափոխությունը և ինչ նշանակություն է ունեցել: Որոնք էին Երեսնամյա պատերազմի պատճառները և արդյունքները: Քարտեզի վրա ցույց տվեք Եվրոպայի քաղաքական բաժանումը 1648 թ. դրությամբ:

5. Միջնադարի ավարտին էլ ավելի աճեց ճշգրիտ գիտելիքների պահանջարկը: Նման գիտելիքներ կարող էին ձեռք բերվել փորձի ու գիտական հայտնագործությունների միջոցով: XVI–XVII դարերն ընդգրկող ժամանակաշրջանն ստացավ «Առաջին գիտական հեղափոխության դարաշրջան» անվանումը: Առաջին գիտական հեղափոխությունը Վերածննդի և Ռեֆորմացիայի հետ նախապատրաստում էր նոր Եվրոպայի ծնունդը:

Ինչու՞ աճեց ճշգրիտ գիտելիքների պահանջարկը: Բացատրեք Առաջին գիտական հեղափոխություն հասկացությունը: Թվարկեք նոր գիտության հայտնի ներկայացուցիչներին և նրանց ներդրումը գիտության զարգացման գործում: Ինչ նշանակություն է ունեցել Առաջին գիտական հեղափոխությունը:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

IV–VI դդ.	Գուպտաների պետությունը Հնդկաստանում
IV–VII դդ.	Ժողովուրդների մեծ գաղթի ժամանակաշրջանը
325 թ.	Նիկեայի առաջին տիեզերական ժողովը
381 թ.	Կոստանդնուպոլսի տիեզերական ժողովը
395 թ.	Հռոմեական կայսրության բաժանումը Արևելյան և Արևմտյան մասերի
410 թ.	Հռոմի գրավումը արևմտյան գոթերի կողմից
419 թ.	Սուրբ գրականության ցանկի հաստատումը Կարթագենի եկեղեցական ժողովի կողմից
451 թ.	«Ժողովուրդների ճակատամարտը» Կատալաունյան դաշտում
476 թ.	Արևմտահռոմեական կայսրության կործանումը
486 թ.	Ֆրանկական թագավորության ստեղծումը Քլոդվիգի կողմից
527–565 թթ.	Հուստինիանոս կայսեր կառավարման շրջանը
534 թ.	Քաղաքացիական իրավունքի հավաքածուի կազմումը Բյուզանդիայում
537 թ.	Ս. Սոֆիայի տաճարի կառուցման ավարտը Կոստանդնուպոլսում
555 թ.	Իտալիայի գրավումը զորավար Նարսեսի կողմից
581 թ.	Չինաստանի միավորումը Յանցզյանի կողմից
618–907 թթ.	Տան արքայատոհմի գահակալումը Չինաստանում
622 թ.	Մուհամեդի փախուստը (հիջրա) Մեքքայից Մեդինա
661–750 թթ.	Օմայանների խալիֆայությունը
681 թ.	Բուլղարական թագավորության ստեղծումը
732 թ.	Պուատիեի ճակատամարտը ֆրանկների և արաբների միջև
750–1055 թթ.	Աբբասյանների խալիֆայությունը
756 թ.	Կորդովայի խալիֆայության ստեղծումը
768–814 թթ.	Կարլոս Մեծի գահակալությունը
800 թ.	Կարլոս Մեծի թագադրումը արևմտահռոմեական կայսերական թագով
843 թ.	Վերդենի բաժանքը
867–1056 թթ.	Հայկական (Մակեդոնական) արքայատոհմը Բյուզանդիայում
867–886 թթ.	Վասիլ (Բարսեղ) I–ի գահակալությունը
882 թ.	Կիևի գրավումը Օլեգի կողմից. Հին Ռուսիա պետության ստեղծումը
885–1045 թթ.	Բագրատունյաց թագավորությունը Հայաստանում
IX դար	Մեծ Մորավիա և Սերբիա պետությունների ստեղծումը
955 թ.	Հունգարների պարտությունը Օտտոն I–ի զորքից
962 թ.	Օտտոն I–ի թագադրումը կայսերական թագով. Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրության ստեղծումը
966 թ.	Մեշկո I–ի մկրտությունը. կաթոլիկության հաստատումը Լեհական պետությունում

988 թ.	Քրիստոնեության ընդունումը Ռուսիայում
1000 թ.	Վիկինգ Լեյֆ Էրիկսոնի ափ իջնելը Հյուսիսային Ամերիկայում
1001 թ.	Հունգարական թագավորության ստեղծումը
1019–1054 թթ.	Յարոսլավ Իմաստունը Ռուսիայի Մեծ իշխան
1045 թ.	Կոստանդնուպոլսի համալսարանի բացումը
1054թ.	Քրիստոնեական եկեղեցու մեծ պառակտումը. կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների առաջացումը
1055 թ.	Բաղդադի գրավումը սելջուկների կողմից
1066 թ.	Դուքս Վիլհելմի հռչակվելը Անգլիայի թագավոր
1071 թ.	Մանազկերտի ճակատամարտը
1095 թ.	Ուրբանոս II պապի կոչը Կլերմոնում
1096 թ.	Խաչակրաց առաջին արշավանքը
1098 թ.	Եդեսիայի և Անտիոքի գրավումը խաչակիրների կողմից
1099 թ.	Երուսաղեմի գրավումը խաչակիրների կողմից
1187 թ.	Երուսաղեմի գրավումը Սալահ ադ Դինի կողմից
1189–1192 թթ.	Խաչակրաց III արշավանքը
1198–1216 թթ.	Ինոկենտիոս III. Հռոմի պապ
1204 թ.	Խաչակրաց չորրորդ արշավանքը. Լատինական կայսրության ստեղծումը (1204–1261)
1206 թ.	Մոնղոլական պետության ստեղծումը Չինգիզ խանի գլխավորությամբ
1206 թ.	Դելիի սուլթանության ստեղծումը
1226–1270 թթ.	Լյուդովիկոս IX Սուրբի գահակալությունը
1215 թ.	Ինկվիզիցիայի (հավատաքննության) ստեղծումը
1228 թ.	Խաչակրաց VI արշավանքի կազմակերպումը Ֆրիդրիխ II–ի կողմից
1237–1241 թթ.	Ռուսիայի մեծ մասի գրավումը Բաթու խանի կողմից
1265 թ.	Խորհրդարանի (պառլամենտի) ստեղծումն Անգլիայում
1280 թ.	Գլաձորի համալսարանի հիմնադրումը
1291 թ.	Խաչակիրների վերջին հենակետ Ակրայի գրավումը մուսուլմանների կողմից
1299 թ.	Օսմանյան պետության ստեղծումը
1302 թ.	Դասային ներկայացուցչական ժողովի՝ Գլխավոր շտատների հրավիրումը Ֆրանսիայում
1337–1453 թթ.	Հարյուրամյա պատերազմը Ֆրանսիայի և Անգլիայի միջև
1358 թ.	Ժակերիա ապստամբությունը Ֆրանսիայում
1368–1644 թթ.	Մին կայսրությունը Չինաստանում
1380 թ. սեպտեմբերի 8	Կուլիկովոյի ճակատամարտը
1381 թ.	Ուոտ Թայլերի գլխավորած գյուղացիական ապստամբությունը Անգլիայում
1389 թ.	Կոսովոյի ճակատամարտը սերբերի և թուրքերի միջև
1389 թ.	Դելիի գրավումը Լենկ Թեմուրի կողմից
XIV–XVI դդ.	Վերածնունդը (Ռենեսանս) Եվրոպայում

1402 թ.	Թուրքական բանակի ջախջախումը Լենկ Թեմուրի կողմից
1415 թ.	Յան Հուսի ողջակիզումը
1430 թ.	Ժաննա դ'Արկի ողջակիզումը
1444 թ.	Վառնայի ճակատամարտը
1453 թ. մայիսի 29	Կոստանդնուպոլսի գրավումը թուրք–օսմանցիների կողմից
1492 թ. հոկտեմբերի 12	Ամերիկայի հայտնագործումը Կոլումբոսի կողմից
1498 թ.	Վասկո դա Գամայի կողմից Աֆրկայի հարավով Հնդկաստան տանող ծովային ուղու հայտնագործումը
1517 թ. հոկտեմբերի 31	Մարտին Լյութերի «95 դրույթների» հրապարակումը
1519 թ.	Մեքսիկայի գրավումը իսպանացի կոնկիստադորների կողմից
1519–1521 թթ.	Առաջին ծովային շուրջերկրյա ճանապարհորդությունը Մագելանի արշավախմբի կողմից
1526 թ.	Մեծ Մողոլի տերության հիմնումը Հնդկաստանում Բաբուրի կողմից
1533–1584 թթ.	Իվան IV Ահեղ՝ Մեծ իշխան, 1547–ից՝ ցար
1534 թ.	Գերագահության մասին օրենքի ընդունումը Անգլիայում
1540 թ.	Ճիզվիտների միաբանության ստեղծումը
1549 թ.	Առաջին Երկրային ժողովը Ռուսաստանում
1556–1605 թթ.	Մեծ Մողոլի կայսրության հզորացումը Աքբարի օրոք
1558–1573 թթ.	Լիվոնյան պատերազմը
1566–1609 թ.	Նիդերլանդական հեղափոխությունը
XVI դ.	Չինաստանի ինքնամեկուսացումը արտաքին աշխարհից
1600 թ.	Ջորդանո Բրունոյի ողջակիզումը Հռոմում
1603–1868 թթ.	Տոկուգավա տոհմի այոգունությունը Ճապոնիայում
1612 թ.	Ճապոնիայի ինքնամեկուսացումը արտաքին աշխարհից
1613–1917 թթ.	Ռոմանովների արքայատոհմը Ռուսաստանում
1639 թ.	Կասրե–Շիրինի հաշտության պայմանագրի կնքումը թուրքերի և պարսիկների միջև
1644 թ.	Ցին կայսրության հիմնադրումը Չինաստանում
1648 թ.	Վեստֆալյան հաշտությունը՝ Երեսնամյա պատերազմի ավարտը. Եվրոպայի քաղաքական նոր քարտեզի ձևավորումը

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ

Ասպետ — Միջնադարյան Արևմտյան Եվրոպայում մանր ավատատեր, որը չուներ ժառանգական տիտղոս և սեփական վասալներ:

Ավատատեր — Միջնադարում մասնավոր հողային սեփականատեր: Հողը սովորաբար շնորհվում էր թագավորի կամ խոշոր ավատատերերի կողմից զինվորական կամ քաղաքացիական ծառայության դիմաց:

Արիոսականություն — Քրիստոնեական–աղանդավորական ուսմունք, առաջացել է IV դարում: Հիմնադիրը Ալեքսանդրիայի եկեղեցու քահանա Արիոսն էր. այստեղից էլ՝ անվանումը: Արիոսն ու նրա հետևորդները չէին ընդունում քրիստոնեական պաշտոնական եկեղեցու հիմնական անփոփոխ դրույթը՝ Հայր Աստծո և Որդի Աստծո միագո էությունը: Ըստ Արիոսի՝ հավերժ է միայն Հայր Աստվածը:

Բողոքականներ — Քրիստոնեության ուղղություններից մեկի՝ բողոքականության ներկայացուցիչներ: Նրանք դատապարտում էին կաթոլիկ եկեղեցու չարաշահումները, ժխտում էին եկեղեցու՝ որպես Աստծո և մարդկանց միջև միջնորդի մասին ուսմունքը:

Բոյարական դուման — Ռուսիայում (ապա՝ Ռուսաստան) Մեծ իշխանին կից գերագույն խորհուրդ (ցարին կից՝ 1547 թ–ից) X դարից մինչև XVIII դ.: Ազնվականության այս դասային–ներկայացուցչական մարմինն ուներ օրենսդիր խորհրդատվական բնույթ, քննարկում էր ներքին և արտաքին քաղաքականության հարցեր:

Գիլդիա — Միջնադարյան Եվրոպայում առևտրականների միավորում, որ ուներ իր կանոնադրությունը և պաշտպանում էր միության անդամների շահերը:

Դեկան *(լատ.՝ դեսանատեր)* — 1. զինվորական աստիճան. Հին Հռոմում տասը զինվորի պետ, 2. ֆակուլտետի ղեկավար բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Թագավորական դոմեն *(լատ.՝ դիրություն)* — Ֆրանսիական թագավորի ժառանգական հողային տիրույթների ամբողջությունը:

Ժողովուրդների մեծ գաղթ — IV–VII դարերում Հռոմեական կայսրության սահմանամերձ շրջաններից դեպի կայսրության տարածք ներխուժած բարբարոսական ցեղերի տեղաշարժերի ընդհանուր անվանումը:

Ինդուլգենցիա *(լատ.՝ ողորմություն)* — Մեղքերի թողության շնորհագիր, դրանց վաճառքը վերածվել էր եկեղեցու և հոգևորականության հարստացման աղբյուրի:

Իսլամ *(արաբ.՝ հնազանդ)* — Համաշխարհային երեք կրոններից մեկը (քրիստոնեության և բուդդայականության հետ): Հիմնադրել է Մուհամեդը VII դ: Սուրբ գիրքը կոչվում է Ղուրան: Իսլամի հետևորդները կոչվում են մուսուլմաններ:

Խալիֆա *(արաբ.՝ հաջորդող)* — Մուսուլմանական պետության բոլոր մուսուլմանների ղեկավար. որը փոխարինում է մահացած Մուհամեդ մարգարեին:

Խաչակիր, խաչակրաց արշավանքներ — 1096–1270 թթ. ընթացքում արևմտաեվրոպական երկրների և կաթոլիկ եկեղեցու կողմից դեպի Արևելք կազմակերպվեցին 8 արշավանքներ քրիստոնեական սրբավայրերը մուսուլմաններից ազատագրելու համար: Արշավանքի մասնակիցներն իրենց թիկնոցներին կրում էին խաչի նշան. այստեղից էլ՝ նրանց խաչակիր անվանումը:

Խորհրդարան (պառլամենտ) *(ֆրանս.՝ խոսելու տեղ)* — Բարձրագույն ներկայացուցչական օրենսդիր մարմին: Առաջին խորհրդարանը հարվիրվել է Անգլիայում 1265 թ. որպես ներկայացուցչական մարմին: Ուրիշ երկրներում այն կոչվում է կոնգրես, կորտեսներ, ռայխստագ, սեյմ և այլն:

Կաբուկի — Այսպես է կոչվում թատրոնը միջնադարյան Ճապոնիայում:

Հավատաքննություն (ինկվիզիցիա) *(լատ.՝ հետաքննություն)* — Կաթոլիկ եկեղեցու դատական և քննչական կազմակերպություն, որը ստեղծվել է կաթոլիկ եկեղեցու հակառակորդներին հալածելու համար: Գոյություն է ունեցել XIII–XIX դդ. Արևմտյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում, հատկապես մոլեգնել է Իսպանիայում և Իտալիայում:

Հայկական արքայատոհմ — Բյուզանդիայում 867–1056 թթ. կառավարած Հայկական (Մակեդոնական) արքայատոհմ: Հիմնադիրն էր հայազգի Վասիլ (Բարսեղ) I–ը:

Հերետիկոս — Աղանդավոր մարդ, որը հրաժարվել է քրիստոնեական հավատքից, եկեղեցական կանոններից և ծիսակատարություններից: Հերետիկոսները դաժանորեն հետապնդվում էին եկեղեցու և իշխանությունների կողմից:

Հիջրա —Մեքքայից Մեդինա Մուհամեդի փախուստը. այն տեղի է ունեցել 622 թ.: Այս տարեթիվն էլ համարվում է մուսուլմանական թվականության առաջին տարին:

Ճիզվիտներ *(հիսուսյաններ (Հիսուս անվան լատ. ձևից))* — Կաթոլիկ վանական միաբանության անդամներ (ինքնանվանումը՝ «Հիսուսի ընկերություն»): Հիմնադրել է իսպանացի ազնվական Իգնատիոս Լոյոլան Փարիզում 1540 թ.: Նպատակն է՝ կաթոլիկության պաշտպանությունն ու տարածումը, Հռոմի պապի իշխանության ամրապնդումը: 1990–ական թվականների կեսերին ճիզվիտների միաբանությունը ավելի քան 24 հազար անդամ ուներ:

Մայորդոմ *(լատ.՝ տան ավագ)* — Ֆրանկական թագավորությունում Մերովինգների օրոք (V դ. վերջ–VIII դ. սկիզբ) արքունի տնտեսության և թագավորական ունեցվածքի կառավարիչը: Մայորդոմին նշանակում էր անձամբ թագավորը: Աստիճանաբար մայորդոմի պաշտոնը դարձավ ժառանգական: Հետագայում նրանք իրենց ձեռքում կենտրոնացրին պետական ամբողջ իշխանությունը:

Մանուֆակտուրա — Աշխատանքի բաժանման և տեխնիկայի վրա հիմնված ձեռնարկություն:

Նորմաններ, վիկինգներ, վարյագներ — Սկանդինավիայում վաղ միջնադարում բնակվող ցեղերի ընդհանրական անվանումներ:

Շիաներ և սուննիներ — Իսլամի երկու ուղղություններ: Գլխավոր տարբերությունը այն հարցի շուրջ է, թե ով է Մուհամեդի ժառանգորդը:

Պապական պետություն (մարզ) — Ստեղծվել է VIII դարում Միջին Իտալիայում: Հռոմի պապի աշխարհիկ իշխանության տարածք: Հզորության գագաթնակետին է հասել XII–XIV դարերում, երբ Հռոմի պապերը փորձում էին իրենց ենթարկել եվրոպական երկրների գահակալներին:

Ռեկոնկիստա — Պիրենեյան թերակղզու բնիկ ժողովուրդների կողմից մուսուլմաններից իրենց հողերի հետնվաճման երկարատև ժամանակաշրջանը (VIII–XV դդ.): Այն սկսվել էր արաբների կողմից Իսպանիայի գրավումից անմիջապես հետո: Ռեկոնկիստային մասնակցել են քրիստոնյա թագավորությունները:

Ռեֆորմացիա *(լատ.՝ վերափոխում)* — Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում XVI դ. առաջին կեսում սկսված հասարակական քաղաքական շարժում: Այն ուղղված էր կաթոլիկ եկեղեցու արմատական վերափոխմանը: Ռեֆորմացիայի սկիզբը դրվել է 1517 թ. Գերմանիայում Մարտին Լյութերի ելույթով: Ռեֆորմացիայի գաղափարախոսները ժխտում էին կաթոլիկ եկեղեցու անհրաժեշտությունը, հրաժարվում էին երկրպագել սրբապատկերները: Ռեֆորմացիան սկիզբ դրեց բողոքականությանը՝ որպես քրիստոնեության նոր ուղղություն:

«Ռուսկայա պրավդա» — Ռուսական օրենքների առաջին գրավոր հավաքածուն. ստեղծվել է Յարոսլավ Իմաստունի օրոք:

Սամուրայ — Ռազմաավատատիրական դաս, զինվորական կաստա Ճապոնիայում: Նույնն է, ինչ ասպետը:

Սյոգուն — Ճապոնիայի ռազմաավատատիրական կառավարիչների տիտղոս XII դարից մինչև XIX դ. երկրորդ կեսը: Նրանց օրոք կայսերական արքայատոհմը զրկված էր իրական իշխանությունից:

Սրբազան հռոմեական կայսրություն — Ստեղծվել է 962 թ., երբ գերմանական թագավոր Օտտոն I–ը Հռոմում պապի կողմից թագադրվեց Հռոմեական կայսրության թագով: Գերմանական թագավորությունը պաշտոնապես սկսեց կոչվել Գերմանական ազգի սրբազան հռոմեական կայսրություն:

Սքոլաստիկա *(հուն.՝ դպրոց բառից)* — XI–XIV դդ. միջնադարյան կրոնական փիլիսոփայություն, որը աչքի էր ընկնում պնդումների անժխտելիությամբ: Բնագիտության զարգացման հետ սքոլաստիկան անկում ապրեց:

«Վարյագներից հույներ տանող ճանապարհ» – Այս անունով է հայտնի այն առևտրական ճանապարհը, որը սկսվում էր Բալթիկ ծովից և հասնում Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս:

Վերածնունդ *(Ռենեսանս)* — Հասարակական–քաղաքական, մշակութային շարժում. սկսվել է Իտալիայում XIV դարում: Վերածնունդը նշանավորվել է խոշոր

հայտնագործություններով ու գյուտերով, ինչպես նաև անտիկ մշակույթի նկատմամբ հետաքրքրության արթնացմամբ: Բուռն կերպով զարգացել են գիտությունն ու արվեստը:

«Վերջին հռոմեացի կայսր» — Պատմության մեջ այդ անունով է մտել Արևելյան հռոմեական կայսրության (Բյուզանդիա) կայսր Հուստինիանոս I–ը (527–565 թթ.):

Ցար *(լատ.՝ կեսար)* — Ռուսաստանում 1547–1721 թթ. պետության ղեկավարի պաշտոնական տիտղոսը: Առաջինը ցար է թագադրվել Իվան IV Ահեղը: Պյոտր I–ի օրոք փոխարինվել է կայսր տիտղոսով, բայց շարունակվել է գործածվել մինչև 1917 թ.՝ ինքնակալության տապալումը:

Ուլուս (փոխարքայություն) — Մոնղոլական տերության վարչաքաղաքական խոշոր միավորների անվանումը:

«Քաղաքացիական իրավունքի հավաքածու» — Հուստինիանոս I–ի օրոք կազմված օրենքների ժողովածու, որի մեջ հավաքված են հռոմեական կայսրերի հրապարակած օրենքները:

Քրիստոնեական եկեղեցու 1054 թ. բաժանումը — Տեղի է ունեցել Հռոմի պապի և Կոստանդնուպոլսի պատրիարքի միջև քրիստոնեական եկեղեցում գերակայելու համար պայքարի արդյունքում: Պապը և պատրիարքը բանադրել են միմյանց: Բաժանմանը նպաստել են նաև արևմտյան և արևելյան քրիստոնեական եկեղեցիների հավատքի, ծեսերի, կազմակերպչական տարբերությունները, որոնք առավել հստակ ի հայտ են եկել դեռ VII դարում:

Օպրիչնինա *(Опричь — բացի)* — Ռուսաստանում XIV–XV դդ. իշխանության մի մասը, որը իշխանի մահից հետո հատկացնում էին նրա այրուն՝ բացի մյուս հողաբաժիններից: 1565–1572 թթ. Իվան Ահեղի հողաբաժնի անվանումը, որ առանձնացված էր երկրի հարուստ հյուսիսում, հարավում և կենտրոնում, մտնում էր նաև Մոսկվայի մի մասը: Օպրիչնինայում նա մտցրեց սեփական կառավարումը՝ Բոյարական դուման, պրիկազներ, զորք: Օպրիչնինա սկսեցին անվանել նաև Իվան IV–ի ամբողջ պետական համակարգը՝ զանգվածային բռնություններ, մահապատիժ, հողերի բռնագրավում և այլն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1 ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ

§1. ՊԱՅՔԱՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
§2. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
§3. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՈՍԿԵԴԱՐԸ
§4. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՎԵՐԵԼՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ (ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ) ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ
§5. ԿԱՐՈԼԻՆԳՆԵՐԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ
§6. ՍՐԲԱԶԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ
§7. ԱՆՀԱՆԳԻՍՏ ԵՎՐՈՊԱՆ
§8. ՀԻՆ ՌՈՒՍԻԱՆ

ԲԱԺԻՆ **1** ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԱԺԻՆ 2 ՄԻՋՆԱԴԱՐԸ ԾԱՂԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

§9. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
§10. ԽԱՉԱԿՐԱՑ ՇԱՐԺՈՒՄԸ
§11. XIII ԴԱՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՏԻՐԱԿԱԼՆԵՐԸ
§12. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ XI–XIII ԴԱՐԵՐՈՒՄ
§13. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ **2** ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԱԺԻՆ 3 ՄԻՋՆԱԴԱՐԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ

§14. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒՄԸ
§15. ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ
§16. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԸ
§17. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ
§18. ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ԲԱԺԻՆ **3** ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԱԺԻՆ 4 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§19. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ
§20. ՔՈՉՎՈՐԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
§21. ՀՆԴԿԱՍՏԱՆԸ IV–XVII ԴԱՐԵՐՈՒՄ
§22. ՉԻՆԱՍՏԱՆԸ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԲԱԺԻՆ **4** ԱՄՓՈՓՈՒՄ

ԲԱԺԻՆ 5 ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ

§23. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
§24. ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ
§25. ՌԵՖՈՐՄԱՑԻԱՆ
§26. ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ
§27. ՆՈՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ **5** ԱՄՓՈՓՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԱՐԱՆ